




ԼՍՏԱԳԻՐ
ԿՐԹՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐԹՈՒՄԱՂԱՅԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆՈՐ
ԵՐԶԱՆ 1958

ԼԲ.
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية. أدبية. ثقافية. للغة والبيان

"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	հրեա
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Տարի մը եւս	161
ԿՐԹՆԱԿԱՆ	
— «Հաւատով խոստովանիմ»	ՇՆՈՐՀՔ ԵՊՍ. 164
— Խաչը, անոր իմաստն ու պարծանքը	ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ 168
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Նարեկացու ստեղծագործութիւնը	Մ. ՄԿՐԵԱՆ 171
ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ	
— Զեռնագրութիւն	176
ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ	
— Սիամանթօ եւ Խճէ-Զարէ	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 177
— Առաջին բարեկամիս	ՄԱՐՐ ՄԱՐԴԱՐԵԱՆ 180
— Մաղբանք	ԶԱԻԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ 181
— Կ'անցնեն	ՀՈՒՓՈՒՄԷ ՊՕՂՈՍԵԱՆ 181
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ	
— (Խել) Յովնաննէս Թլիւրանցի	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 182
ՊԱՏՄԱԿԱՆ	
— Ժամանակագրութիւն Գրիգոր Պարոնսէր Պասրիարքի	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 188
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
— «Հայ Բարբառագիտութեան Դասընթաց»	ԱՆՈՒՇԱԽԱՆ ՎՐԻ. ԶՂԶԱՆԵԱՆ 192
Սալաբուս Թ. Յակոբայ Տանարին եւ պատանական պեղումներ այդ առիթ	ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ 194
Պատճառական Հաղորդագրութիւն Ս. Արուստի Դիւանէն	198
Ամսվերջի Հանդէսներ Ս. Արուստի վարժարանաց	199
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Հեռագիր	208
— Եկեղեցականք-Բեմականք	208
— Պատճառականք	208
— Նոր պատճառներ	208

تصدرها - بطريكية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النشافة الاسقف هايكازون أبراهاميان
يوليو - أغسطس - ١٩٥٨ تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ٧ - ٨

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

—≡ Ս Ի Ռ Ն ≡—

Լ.Բ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1958

◀ ՅՈՒՆԻՍԿՈՎ - ՕԳՈՍՏՈՍ ▶

ԹԻՒ 7-8

ԼՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏԱՐԻ ՄԸ ԵՒՍ

Ս. Աթոռոյս ելմտական և վարչական տարին մայիս 1ին կը սկսի: Եւ տարեվերջի տեղեկագիրներու պատրաստութենէն ետք Ս. Յակոբեանց Միաբանութիւնը իր Ընդհանուր Ժողովը կը զուգարէ՝ Տնօրէն Ժողովոյ վարչական և տնտեսական համարատուութիւնը ընդունելու, պէտք եղած ընտրութիւնները կատարելու, Տնօրէն Ժողովէն առաջարկեալ խնդիրները լուծելու, և համաձայն կանոնի իրեն բերուած խնդիրներու մասին որոշումներ կայացնելու համար:

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը ներկայիս ունի քառասունհինգ տնտեսական, որոնցմէ հինգը աւագ սարկաւազներ և մնացեալը եպիսկոպոսներ և վարդապետներ են: Ասկէ դատ ունի նաև տասներեք աշխատաւոր միաբաններ, որոնք եկեղեցական կարգ չունին: Ասոնցմէ ոմանք դպիր են և սքեմ կը հազնին ու կը ծառայեն սրբավայրերու մէջ՝ պաշտամանց սպասաւորելով: Ուրիշներ անսքեմ են և կը ծառայեն համեստ պաշտօններով: Հաշուելով Ս. Աթոռոյս մայրապետները, որոնք յառաջացեալ տարիքի մէջ սքեմաւոր բարեպաշտունիներ են և ալօթքով ու Միաբանութեան զգեստեղինաց հոգատարութեան զործով կը զբաղին, ինչպէս նաև Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտները, Ս. Յակոբեանց Միաբանութեան հոգևոր ընտանիքին անդամներուն թիւը կը հասնի աւելի քան իննսունի:

Միաբանութեան ձեռնադրեալ անդամներէն, եպիսկոպոս կամ վարդապետ, տասնհինգ ներկայիս կը գտնուին Յորդանանէն դուրս և մեծաւ մասամբ կը զործեն եկեղեցւոյ զանազան թեմերուն մէջ իբրև թեմակալներ կամ ծխակէրեր: Իսկ քսան ձեռնադրեալ անդամներ, առանց հաշուելու Ժառանգաւորաց Ընծայարանի ուսանող հինգ սարկաւազները, կը գտնուին Յորդանանի մէջ և կը վարեն Ս. Աթոռոյ բազմաճիւղ զործունէութեան զանազան բաժինները կազմող տեսչութիւնները:

Ս. Յակոբեանց Միաբանութեան այս կազմին կողմէ անցեալ 1957-1958 տարւոյ ընթացքին կատարուած զործը մեզի ամէն իրաւունք կուտայ փառք տալու Աստուծոյ և ուրախ գգալու որ մեր ազգին և եկեղեցիին այս պանծալի Հաստատութիւնը, Հայոց Երուսաղէմի Պատրիարքութիւնը, մնաց աննուազ իր պայծառութեամբը և կենդանութեամբը և առաւ յառաջագէմ քայլեր:

Այստեղ կ'ուզենք համառօտիւ և ընդհանուր կերպով անդրադառնալ անցեալ տարուան ընթացքին Ս. Աթոռոյ վարչական գործունէութեան, որ յառաջ կը տարուի զանազան տեսչութեանց և անոնց պաշտօնէութեան կողմէ, Տնօրէն Ժողովոյ ընդհանուր հսկողութեան ներքէն:

Սուրբ Տեղեաց պահպանութեան գործը, որ Ս. Յակոբեանց Միաբանութեան ամենաէական և զլխաւոր գործն է, յառաջ տարուեցաւ և կը տարուի ամենայն խղճմտութեամբ և նախանձախնդրութեամբ:

Ս. Յարութեան Տաճարին նորոգութեան մեծ ծրագիրը, որ երեսուն տարիէ ի վեր մտահոգութեան և սերտումի առարկայ եղած է, շատ դանդաղ կ'ընթանայ: Տակաւին Տաճարին մուտքին և Պատանատեղւոյն առաստաղին նորոգութեան մասին միայն համաձայնութիւն զոյացած է երեք Պատրիարքաբաններու միջև և պատրաստութիւններ տեսնուած են առ այդ:

Նոյնպէս Ս. Աստուածածնի տաճարին նորոգութեան գործը դանդաղեցաւ, հակառակ Հայոց Պատրիարքարանի բուռն փափաքին և պնդումին: Այս ձեռնարկն ալ տակաւին առկաի կը մնայ, որովհետեւ Յունաց Պատրիարքարանը անտեղի պատճառաբանութիւններով կը յետաձգէ գործը, հակառակ անոր որ նորոգութեան ծրագիրները արգէն պատրաստ են: Եւ նկատի ունենալով այն՝ որ տաճարին վերջնական և լրիւ նորոգութիւնը կրնայ ժամանակ մը ևս ուշանալ, Ս. Աստուածածնայ տաճարին ամենօրեայ պաշտամունքը և Ս. Պատարագի մատուցումները Հայոցս նախաձեռնութեամբ և առաջարկով վերականգնեցան յունիսի մէջ:

Ս. Տեղեաց պահպանութեան այլ մարզերուն մէջ Հայոց Պատրիարքարանի իրաւունքներն ու պարտականութիւնները բժախնդրութեամբ ի գործ դրուեցան անցեալ տարուան ընթացքին ևս: Սրբավայրերու մէջ կանթեղներու և ջահերու նորոգութիւններ ալ տեղի ունեցան և ասոնք Երուսաղէմի Սրբավայրերուն մէջ անկարևոր չեն:

Սրբոց Յակոբեանց Տաճարին յատակի հինցած սալաքարերը փոխանակուեցան համակ մարմարէ նոր սալայատակով: Այս առթիւ երևան եկաւ որ Ս. Յակոբեանց Տաճարը շինուած է գերեզմանատեղւոյ մը վրայ, Դժբախտաբար սակայն ուէ զրաւոր արձանադրութիւն չգտնուեցաւ պեղումներու ընթացքին և գերեզմաններու թուականները կարելի չեղաւ ստուգել: Անցնող տարուան ընթացքին գրեթէ բոլոր Սրբավայրերու մէջ առաւել կամ նուազ կարևորութիւն ունեցող նորոգութիւններ կատարուեցան:

Ս. Յակոբեանց վանքին և Միաբանութեան համար կարևոր պարտականութիւն է նաև զլխաւորաբար Զատիկին և ընդհանրապէս տարուան ընթացքին ուխտաւորաց ընդունելութիւնը: Այս տարի, այսինքն 1958ի Զատիկին, աշխարհի այս մասին քաղաքական անկայունութեան պատճառաւ, ուխտաւորաց բազմութիւնը սովորականէն պակաս եղաւ: Մօտաւորապէս հազար անձ միայն կրցան զալ Ս. Երուսաղէմ և վայելել Մեծ Տօնին հոգևոր խրախճանքը: Ս. Աթոռոյ մեծագոյն դժուարութիւնն այս կապակցութեամբ այն է՝ որ վանքին ուխտաւորներու համար ունեցած սենեակները մօտ քառասուն տարիներէ ի վեր զաղթականներու կողմէ բնակուած լինելով՝ ուխտաւորներու տեղաւորումը միշտ անհանգիստ պայմաններու մէջ կը կատարուի: Այս Զատիկին հարկ եղաւ անոնցմէ մէկ մասը դարձեալ վրաններու տակ բնակեցնել վանքի պարտէզներուն մէջ:

Ս. Աթոռոյ կրթական գործը յառաջ տարուեցաւ ըստ կարելւոյն զոհացուցիչ եղանակաւ՝ հակառակ տիրող աննպաստ պայմաններուն: Երկրին տնտեսական նեղութիւնը և Մերձաւոր Արեւելքի քաղաքական դժուարութիւնները կ'ազդեն նաև կրթական հաստատութեանց վրայ, շատ մը կերպերով: Ժառանգաւորաց վարժարանի և Ընծայարանի ուսանողներուն թիւը սովորականէն աւելի փոքր եղաւ այս տարի՝ Յորդանան մուտքի և բնակութեան, ինչպէս նաև ճամբորդութեանց դժուարութեանց պատճառաւ: Այնուհանդերձ Ս. Աթոռոյ կարևոր այդ գործը, հոգևորականաց պատրաստութեան գործը, յառաջ տարուեցաւ կարելի լաւագոյն արդիւնաւորութեամբ:

Երուսաղէմի հայոց ազգային վարժարանը, Սրբոց Թարգմանչաց անունով, կը պարունակէ Մանկապարտէզի, Նախակրթարանի և Երկրորդական վարժարանի բաժինները միանգամայն, ընդամենը տասներեք դասարաններով: Չորս հարիւրէ աւելի մանուկներ և պատանիներ, երկու սեռէ, կ'ուսանին այս վարժարանին մէջ: Ինչպէս նշուեցաւ այս տարի ամսվերջի հանգէսին՝ շատ շանցած Երուսաղէմի գրեթէ բովանդակ հայութիւնը պիտի բաղկանայ Սրբոց Թարգմանչաց վարժարանի շրջանաւարտներէն:

Կարևոր է նաև Ամմանի Հեթումեան վարժարանը, ուր կը կրթուին մօտ երկու հարիւր հայ մանուկներ և պատանիներ, երեք Մանկապարտէզի և վեց Նախակրթարանի դասարաններու մէջ: Այս դպրոցն ալ համեմատաբար լաւ արդիւնք ունեցաւ, հակառակ անոր որ զուրկ է սեպհական շէնքէ և տեղաւորուած է բոլորովին անբաւական տան մը մէջ:

Կը գործէ նաև Սրբոց Յակոբեանց Տպարանը, մէկ կողմէն արտադրելով կրօնական և ծիսական գրքեր և միւս կողմէ՝ զանազան գործերու կատարումով Ս. Աթոռոյ համար ապահովելով փոքր եկամուտ մը:

Կայ նաև Ս. Աթոռոյ բարեսիրական գործը, որով Պատրիարքարանը կը նպաստէ Երուսաղէմի հայութեան մէջ անոք և կարօտեալ եղողներուն: Նպաստընկալներ կը ստանան հաց, կաթ, դրամական նպաստ և բժշկական խնամք:

Ս. Աթոռը այս գործերուն կրնայ հասնիլ՝ շնորհիւ այն ազնուական հայ բարերարներուն որոնք իրենց ազգասիրութեան և եկեղեցասիրութեան փաստը կուտան և տարուէ տարի կը յիշեն հայ Երուսաղէմը օգնութեան հասնելով անոր: Սիւն պարբերաբար կը հրատարակէ անոնց անունները: Այստեղ դարձեալ մեր գովեստը կուտանք անոնց և Տիրոջ ամենառատ օրհնութիւնը կը հայցենք անոնց համար:

Մեր ցանկութիւնն ու աղօթքն է, ինչպէս վստահ ենք ցանկութիւնն է և աղօթքը բոլոր ճշմարիտ և քրիստոնեայ հայերուն, որ խաղաղի այս Սուրբ երկիրը, բոլորովին վերջ գտնեն Սրբոց Յակոբեանց Աթոռին շուրջ յարուցուած տաղնապին հետեանքով յառաջ եկած ինչ ինչ դժուարութիւնները և հայոց ուխտաւորութիւնը դէպի Ս. Երուսաղէմ տարուէ տարի աւելի բազմամբօխ և ուխտաւորութիւնը հետեանք անոնց և Տիրոջ ամենառատ օրհնութիւնը կը հայցենք անոնց համար:

Մեր աղօթքը և ցանկութիւնն է որ Երուսաղէմի Ս. Աթոռը հեազհետէ աւելի արդիւնաւորապէս և աւելի լայնօրէն կարենայ կատարել իր կենսական դերը մեր Սուրբ եկեղեցւոյ պայծառութեան, Աստուծոյ փառքին և մեր ժողովուրդին առաւելագոյն օգտին համար:

ԿՐԹՆԱԿԱՆ

''ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ''

Հայց. Եկեղեցւոյ կրօնական գրականութեան մէջ կարեոր տեղ կը գրաւէ ներսէն Շնորհալի Հայրապետի «ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» աղօթաշարքը: «Հաւատամք»ի և աղօթքի անմրցելի համագրութիւն մըն է այս գրական զոհարար: Աւրիշ խօսքով՝ մէկ կողմէն ան իր մէջ կը պարունակէ հաւատքի վերաբերեալ էական գրեթէ ամէն կէտ, միւս կողմէն՝ խնդրանքի ձևով անոր մէջ կը համագրուին հոգեղէն արարածի մը հոգեկան գրեթէ բոլոր պահանջները իր Արարչէն: «Աղօթք» մը... յորում բովանդակի քրիստոնէի ամենայն կարեոր դաւանութիւնն, խնդիրն, պէտքն և իղձն, արտասուքն ալ սէրն ալ:

Շնորհալի Հայրապետը մեր Եկեղեցիի ոչ միայն ամենէն սուրբ և ամենէն բազմադիւն դէմքերէն մէկն է, այլ նաև ամենէն շատ գրական երկեր արտադրող գրիչն է: Իրմէ յետոյ՝ թերևս լոկ Գ. Տաթևազցին կարենայ մրցիլ իր հետ իր գրական գործերու ծաւալով, եթէ ոչ բովանդակութեամբ: Շնորհալիի գրական արտադրութեանց լաւագոյն և կարեորագոյն կտորներէն է «ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ը: Իսկ Հայկական ժամապաշտութեան ամենէն թանկագին ակունքներէն մէկն է, և այդու իսկ, Տէրունական աղօթքէն ետքը, ամենէն ծառօթ և ամենէն ժողովրդական աղօթքներէն մին է: Աւանց ազգային ինքնագոյութեան զոհ դառնալու, անվարան կարելի է ըսել որ այս աղօթաշարքը կրնայ մրցիլ քրիստոնէական ուրիշ որեւէ Եկեղեցիի նման անհատական աղօթքներու հետ և վարչի մնալ աննյութ և ոչ մէկէն թէ՛ իր կառուցուածքով և թէ՛ իր բովանդակութեամբ:

Կրօնական կամ աշխարհիկ գրականութեան մէջ գրեթէ գոյութիւն չունի այսպէս կոչուած զուտ օսկոյնատախտակ երկ: Բոլոր մեծ հանճարի արդիւնք նկատուած գրական գործեր ծնունդ կամ համագրութիւն են մէկէ աւելի միտքերու, ուղղակի կամ անուղղակի կերպով: Մարդկութեան մեծա-

գոյն Գիրքն իսկ, Աստուածաշունչը, իբրեւ մէկ ամբողջութիւն, և անոր խրաքանչիւր գիրքը առանձինն առնուած, արդիւնք են բազում միտքերու, բազում ազգայնեցիկ և բազում ազգեցութիւններու, համակուած: Աստուծոյ շունչով: Այսպէս են Հոգեհոգի, Շէյքսպիրի և Նարեկացիի երկերը: Անոնք ոչ բանաքաղութիւններ են և ոչ ալ՝ բանագոյութիւններ, այլ խրաքանչիւր հեղինակի իբրեւ ժողովրդութիւն եկած նիւթերու և տաղածերու շահագործում, կառուցում և վերաշինում են, աննյութ խրաքանչիւրին մտքի և հոգիի արհեստանոցներու մէջ: Նոյնը կարելի է ըսել «ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ի համար: Հետեւաբար զարմանալի չէ որ ոմանք նմանութիւններ նշմարած ըլլան այս աղօթքին և այլ եկեղեցական հայրերու, յատկապէս Ս. Եփրեմ Ասորիի գրած նմանօրինակ աղօթքներուն միջև: Մենք սակայն բանասիրական նման հարցերու մէջ պիտի չուզենք մտնել. որովհետև մեր նպատակը գրական կամ գիտական ուսումնասիրութիւն մը ներկայացնել չէ, այլ՝ պարզել «ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ի մէջ յայտնուած միտքերն ու գաղափարները: Այստեղ լոկ սաչափը հաստատ կըրնանք ըսել որ «ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ը, այնպէս ինչպէս ունինք գայն մեր լեզուն մէջ, ոչ մէկ ուրիշ լեզուի կամ հեղինակի մօտ գոյութիւն ունի: Հետեւաբար անիկա յատուկ է լոկ Հայց. Եկեղեցիի և հարազատ արդիւնքն է Շնորհալիի սրբին և գրչին: Շնորհալիի միտքն ու հոգին այնքան առատօրէն համակուած էին հաւատոյ տուեալներով և աղօթելու արամագրութեամբ, որ բաւական էր իրեն համար բանալ հոգեոյն ծորակները և զիւրազ դուրս պիտի հոսէր «ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ի պէս զոհար աղօթք մը, մինչև իսկ մէկ նիստով և մէկ օրուան մէջ:

«ՀԱՄԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ը բաղկացած է 24 տուներէ: Շնորհալին երբ 24 տուներէ կազմուած աղօթք մը կը գրէր, բնականաբար երբեք մտքէն չէր անցներ որ պիտի գտնուէր հաւատացեալ մը որ արդարեւ օրուան ամէն մէկ ժամուն կարելիութիւնը պիտի ունենար այս աղօթքէն տուն մը ըսելու: Երբեք: Այլ ասոնք գրուած են ի գիմաց օրուան 24 ժամերուն, հոգ չէ թէ

անըքողորը մէկ անգամէն ըսուած ըլլան, չամ մէկէ աւելի անգամներով, ինչպէս ինք նորհալին կը թելադրէ իր իսկ նախաքան Յիւստատարանին մէջ որ կ'երևի գրութեանս թիւաւորութեան:

Այս աղօթաշարքին իրրե վերնագիրը գրուած է. «Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոյ ի Քրիստոս»: Այսինքն մէն ի հաւատացեալ անհատի յատուկ աղօթք, ինչ որ կը շէշտէ անոր անձնական հանգամանքը, հակադրուած հաւաքական աղօթքի: Արիւ խօսքով, այս աղօթքը շինուած է որպէսզի մէն մի հաւատացեալի կողմէ բոլոր ուրեւե հեղ և ուրեւե ահեմ, ու ոչ թէ քահանայից կողմէ՝ հաւաքական պաշտամունքի ընթացքին, ինչ որ է պարագան ժամագիրքի գրեթէ բոլոր միւս աղօթքներուն համար: Այս իսկ պատճառով, մինչև մտիկ անցեալը, և թիւրեւ մինչև օրս ալ, այս հաւատացեալներու մէջ ամենէն տարածուած և ամենէն շատ կիրարկուած աղօթքն էր այս, ըսուած՝ «ի տուէ և ի գիւղերի, ի նոստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի ննջել և ի յառնել»: Ա. Ներսէս Նորհալի Հայրապետին ժողովրդական խաբու կողմէ սիրուած դէմք մը ըլլալուն կարեոր ազդակներէն մէկն ալ այս աղօթքն է: Երանելի Հայրապետը կրցած է հասարակ հաւատացեալի բոլոր կարեոր հոգեկան պահանջները անոր մէջ խտացնել:

Այս հրաշալի աղօթքը, նման քաղաքի մը «որ ի վերայ լերին կայցէ», չկրցաւ թաքիլ և մեր ժողովուրդի նեղ շրջանակին մէջ միայն սահմանափակուել, այլ մատչելի ելաւ նաև ուրիշ քրիստոնեաներու՝ իրենց լեզուներով: «Որովհետեւ իրաճանաչ և երախտագէտ այգգայինք և բանասէրք այս դարու (իմա՛ ժԹ) սկիզբէն ի վեր Ասիոյ և Եւրոպոյ գրեթէ ամէն գլխաւոր լեզուօք (իրբ 36) թարգմաներ և հազարաւոր օրինակ սփռեր են. և եթէ շատ բանասէրք և հետաքնինք իրրե բազմապատիկ լեզուաց հաւաքումն կը փնտռեն այս գրքոյկս, ոչ սակաւք ալ հեղինակին բանից վրայ սքանչանալով կ'ընդունին» (Շնորհալի և Պարագայք իւր, էջ 250):

Եւրոպական լեզուներու մէջ առաջին անգամ թարգմանուած է լատիներէնի, հաւանաբար նախ քան Ժէ. դար, և ապա՝ ի-

տալերէնի: 1780ին Լոնտոնի մէջ տպագրուած է չորս լեզուներով՝ հայերէն, լատիներէն, ֆրանսերէն և անգլերէն: Բազմալեզուեան այս կորիզը բազում տպագրութիւններ տեսած է, ամէն նոր տպագրութեան նորանոր լեզուներու թարգմանութեանց յաւելումով, մինչև որ այդ լեզուներու թիւը հասած է այսօր 36ի: Այդ լեզուներն են, բացի վերոյիշեալ չորսէն, յունարէն, սլաւներէն, բուլթուգալերէն, գերմաներէն, հոլանտերէն, չուեաերէն, դաներէն (Տանիմարքայի լեզու), իտալներէն, կրեւլանտերէն, իռլանտերէն, կեղտերէն (Ֆրանսայի և Բրիտանիոյ նախա(քնիկներու) լեզուն), վրահերէն (վալահիացեաց լեզուն, ի Ռումանիա), ռուսներէն, լեհերէն, սերպերէն, սլաւերէն, հունգարերէն, վրացերէն, թուրքերէն, պարսկերէն, արաբերէն, եբրայեցերէն, ասորերէն, քաղգերէն, չինարէն, հայէջերէն, մալթերէն (մալթացիներու լեզուն), մալայերէն (Մալայեան արշիպելագոյի լեզուն, հարաւ-արեւելեան Ասիա, Ինտոնեզիա), պիրմաներէն, պէնկալերէն և սանսկրիտ: Այս թարգմանութիւնները կատարուած են Ռիթթարեան Հայրերու ջանքերով:

Թէև այս աղօթքը յատուկ և յստակ ծրագրով մը պատրաստուած է, բայց բացայայտ և ակնբախ բաժանումներ չունի: Ծայրէ ի ծայր մէկ շունչով և միակտոր գրուած ըլլալու տպաւորութիւն կը ներգործէ աղօթաւորին վրայ: Սակայն դժուար է, աւելի մանրագնին ընթերցումէ մը վերջ, անոր մէջ որոշ բաժանումներ նշմարել: Ըստ այսմ, 24 տուներէ բաղկացեալ այս աղօթքը կարելի է բաժնել վեց մասերու, համաձայն տուններու նիւթին կամ պարունակութեան: ա) Առաջին չորս տուները առաւելաբար հաւասոյ վերաբերեալ կէտեր կը պարունակեն իրենց մէջ: բ) Յաջորդ երեք տուները զոյգովական և խոստովանողական են: գ) Յաջորդ 12 տուները, այսինքն աղօթաշարքին լման կէտը, դանազան կարեւոր և գործնական խնդրուածքներու հաւաքածոյ մըն է. խնդրանք՝ որ զգայարաններու շարժումները Աստուծոյ կամքին համաձայն ըլլան, իմաստութեան, սիրոյ, աստուածային պահպանութեան և այլ բազում շնորհներու հայցում: դ) 20-22րդ տուները մահէն վերջ՝ հոգիին համար

կատարուած աղերսանքներ են. ապահով մուտք անդենականէն ներս, ուրախութեամբ տեսնել փառքի լոյսը, վարձատրութեան յոյսով հանգչիլ արդարներու վերապահեալ օթեաններու մէջ, ազատիլ յաւիտենական կրակէն, և այլն: Ե) Վերջընթեր տունը համապարփակ աղօթք մըն է ամենքի համար. իրեններուն և օտարներուն, ծանօթներուն և անծանօթներուն, ողջերուն և մեռելներուն, թշնամիներուն և ատելիներուն համար: Ուրիշ խօսքով, բարեխօսութիւն մըն է իրմէ՝ ուրիշներու համար: Չ) Վերջին տունը սուրբերու բարեխօսութեան խնդրանք մըն է իրեն համար:

Շնորհալի Հայրապետը այս աղօթքին որպէս նախաբան Յիւստակարան մըն ալ ձգած է: Մինչ աղօթքին մէջ ծայրէ ի ծայր խաղաղ, հաւատաւոր և Աստուծոյ հանդէպ մեծ վստահութիւն ունեցող անձի մը ոգին կը ցլանայ, Յիշատակարանին մէջ ընդհակառակը, կարծես մտահոգ և մինչև իսկ նեղսրտած ոգի մը երևան կուգայ: Երկու գրութեանց մէջ հակադիր այս վիճակներու ցլացումը հարեանցի ընթերցողի մը վրայ թերևս այն տպաւորութիւնը գործէ որ երկու տարբեր հեղինակներու գործեր են անոնք: Բայց աղօթաւոր հոգիի մը զսպանակներուն, կամ, այսպէս ըսենք, բազկերակին ծանօթ անձ մը, ոչ միայն նման գաղափար մը չունենար, այլ մինչև իսկ երկու գրութեանց ոգիի այդկերպ տարբերութենէն իսկ կը հետեցնէ որ անոնք մէկ և նոյն հեղինակին հոգիի ծորանքն են: Աղօթասէր հոգի մը իր հանդարտութիւնը և պայծառութիւնը կը գտնէ երբ կը մտնէ Աստուծոյ իրական ներկայութեան: Սակայն միւս կողմէ, նման անձի մը համար ոչինչ այնքան վրդովիչ, նեղացուցիչ և ընդզգեցուցիչ է որքան տեսնել ուրիշներու անտարբերութիւնը և անպատկառութիւնը աղօթքի մարզին մէջ: Անկեղծ և անկաշառ հայրենասէր մը իր հոգեկան բաւարարութիւնը կը գտնէ հայրենասիրական ճառերու և գործերու մէջ: Անոնցմով կը գուարթանայ, կ'երջանկանայ և թեւեր կ'առնէ: Հայրենիքի վերելքին կամ դժբախտութեան զիմաց անկարեկիր և անտարբեր մարդոց դէմ կ'ընդզգի, կը զայրանայ և կ'ուզէ շոգիի վերածուիլ զանոնք շարժման մէջ

դնելու համար: Իսկ հայրենիքի դէմ և ողներուն և հայհոյողներուն ի տես կ'ուզէ կրակ ըլլալ և այրի՝ և սպառնալ զանոնք: Լո՛ր տեսակի սէրերուն հիմնական յատկանշն է այս: Սէրը չի կրնար անտարկեալ իր (սիրոյ) առարկային նկատմամբ ունեւած անտարբեր, անպատկառ և անգական վերաբերմունքներու հանդէպ և տուժոյ սիրով լեցուած Շնորհալի Հայրապետը այս ոգին է որ երևան կը բերէ Յառաջաբանին մէջ:

Ներսէս Շնորհալի Հայրապետը խրատական նախադրութեան մէջ նախ աղօթքին նկարագիրը կը պարզէ. «Աղօթք հասարակաց Քրիստոնէից՝ մեծաց և փոքունց»: Եւ ապա կը թելադրէ որ աղօթք պէտք է զայն սորվի և սորվեցնէ ուրիշներուն: Հուսկ ապա կը պոռթկայ «Եթէ քրիստոնեայ մը այնքան անփութ ըլլայ» որ չկարենայ մինչև իսկ քանի տուններ գոց սորվիլ, («որոնք սատանայական շատ մը երգեր շուտով կը սորվին «Թող յանդիմանուի այլազգիներէն (սինքն իսլամներէն), որոնք իրենց աղօթքները չեն խափաներ մինչև իսկ պատերազմի ատեն՝ թող թէ խաղաղութեան մէջ: Իսկ մեր ժողովուրդը եկեղեցիէ դուրս Աստուծոյ անունն անգամ չեն յիշեր, որովհետեւ աղօթքի մասին հոգ չեն բեր, աստուածապաշտներու պէս, այլ կը սիրէ պարապ-պարապ խօսիլ քան աղօթել: Եթէ ոմանք ալ եկեղեցի գան, կ'ամբարբանով կը կենան և կ'ամ կը խօսակցի իրարու հետ»: Այս աղօթքները շինուած ետքը, կը շարունակէ Շնորհալի Հայրապետը խոսքով հոգիով, «այլևս ոչ ոք պատրաստ բերէ թէ աղօթք չենք գիտեր անոր համար չենք աղօթեր: Բայց թող գիտնան (աղօթքի մէջ անփոյթ եղողները) թէ սատանան մը ոչ մէկ ուրիշ բարեգործութիւնները խափանելու այնքան մեծ ջանք կը թափէ՝ որքան մեր աղօթքները. որովհետեւ գիտէ թէ աղօթքի՝ ատեն միայն ինք կը հալածուի Աստուծոյ կը բնակի մեր մէջ»:

Սակայն այս յառաջաբան-խրատական-Յիշատակարանը այնքան շահեկան և հետաքրքրական է որ կ'արժէ իր ամբողջութեանը մէջ և թարգմանաբար յառաջ բերել զայն, որ մեծ լոյս կը սփռէ սոյն աղօթքի էութեան, զայն սորվելու և ըսելու կերպով:

պիտու է անհրաժեշտութեան մասին: Հետեւեալն է անիկա իր գերնագրով և պարուհակութեամբ:

«Թրատական հալադուրիւն այն աղօրքին՝ զոր շինեց հայոց Քրիստոս Կարգիկոսի եղբայր՝ Տէր Ներսէս»:

Աղօրք բոլոր Բրիտանեաներու, մեծերու եւ փոքրերու, զոր պարսին սորվիլ աւանդէ՝ եւ սորվեցնել իրարու. Բանաններ՝ ժողովուրդին, հայրեր՝ իրենց որդիներուն, մայրեր՝ իրենց աղջիկներուն, եւ ընկեր՝ ընկերոջ: Եւ բոլ առով օրը հինգ անգամ աղօրքեն՝ տաններկու ծննդադուրեամբ իրաւանշիւր (աղօրքի) ժամուն. այսինքն՝ առաւօտուն, նաւուին, կեսօրին, երեկոյին եւ հանգստեան: Ապա երե մէկը ծուլանայ եւ չկարենայ (օրական) հինգ անգամ աղօրել, բոլ աղօրք չորս անգամ, կամ երեք անգամ, կամ երկու անգամ, կամ օրական մէկ անգամ, որով նանշցուի քէ Բրիտանեայ է, եւ ինքզինքն նկատէ իբրեւ Ասուծոյ արտաւած եւ երկրպագու: Եւ երե (մէկը) ծուլանայ այս աղօրքի բոլոր տուններ սորվելու, (որոնք տաս մը սասանայական երգեր տուտով կը սորվին), բոլ սորվի առօր կեսը, կամ աւելի պակաս. որովհետեւ երե (մինչեւ իսկ) երեք տուն սորվի ասկէ, եւ աղօրք երեք ծննդադուրեամբ (աղօրքի) ժամուն, ընդունելի է Ասուծոյ առջեւ: Ապա երե ուրեք Բրիտանեայ մը անփոքր զանաւի ասիկա սորվելու եւ աղօրելու, բոլ յանդիմանուի ... այլազգիներէն, որոնք իրենց սորված աղօրքները պատեհազաններու ասեմ անգամ չեն խափաներ՝ բոլ քէ խաղաղութեան ժամանակ: Իսկ մեր ժողովուրդը աղօրքի վարչէն (եկեղեցիէն) դուրս Ասուծոյ անունն անգամ չեն յիշեր. որովհետեւ փոքր չունին, իբրեւ սասուածապատեհներ, աղօրքի կարգ-կանոնի մասին: Եւ երե ուրեք աղօրքելու (նպատակով) իսկ գան Բանաններու մօտ, կա՛մ գոց բերանով կը կանգնին, կամ իրարու հետ խօսակցութիւն կ'ընեն, որովհետեւ ոչ իրենք գիտեն աղօրքի խօսքերը եւ ոչ ալ Բանաններու (ըսած) սաղմոսներու եւ պատեհամանց ուշադրութիւն կ'ընեն: Այս պատեհաւով շինեցինք այս աղօրքը, պարզ եւ յսակ բառերով, որպէս զի խաղաղութեան անգամ հասկնալի ըլլայ. բաղկացած՝ Բանանորս տուններէ, ըստ գիշերուան եւ ցորեկուան ժամերուն ... այն մեր խնդրուածներու մեծ մասը կը պարունակէ իր մէջ. եւ տունքն (ասիկա) մեր ժողովուր-

դին (լոց) սորվելու, որպէսզի ամեն Բրիտանեայ անձ սորվի զայն, եւ ուր որ պատեհի աղօրքի ժամուն՝ խօսի Ասուծոյ հետ առով, քէ՛ եկեղեցիի մէջ, քէ՛ տան մէջ, քէ՛ արտաքին մէջ, քէ՛ ուրեք գործի վրայ եղած տեմ, եւ քէ նամբարդութեան ընթացքին: Եւ անոնք որ կը սորվին ասիկա եւ կ'աղօրքեն ուշադրութեամբ, ջերմեռանդ արտով եւ արգունելով, այս աղօրքին մէջ գրուած բոլոր խնդրուածներ՝ կատարուին իր ողորտեան եւ մանկն յետոյ: Իսկ անոնք որ կ'արհամարհեն եւ չեն սորվիլ ու չեն աղօրքեր, իրենք բոլ տեսնեն իրենց անձին եղած վնասը. մենք այս աղօրքը շինելով՝ մեղսեղէն վերցուցինք մեր պատասխանատուութեան բաժինը. որպէսզի ոչ ոք (ասկէ յետոյ) պատեհաւանք բերէ քէ աղօրք չենք գիտեր, անոր համար չենք աղօրքեր: Բայց բոլ գիտցած ըլլան այնպիսիներ քէ սասանան մեր ոչ մէկ ուրիշ բարեգործութիւնները խաղաղութեան ջանքեր կ'ընեն, որպէս՝ աղօրքելը. որովհետեւ գիտէ քէ աղօրքի ասեմ միայն կը հալածուի ինք մեզմէ, եւ Ասուծոյ կը բնակի մեր մէջ:

Արդ, մենք կ'աղաչենք բարեբար Ասուծոյ բանալ ձեր մեկն աշխարհ, յօժարութեամբ սորվիլ ասիկա եւ աղօրքել, եւ Ասուծոյ օրհրէի ըլլալ: Աւ երբ կ'աղօրքէք, յիշեցէք ի Քրիստոս հայոց Քրիստոս Կարգիկոսի եւ անոր եղբայր՝ Ներսէսը, այս աղօրքը յօրհնողը: Դուք որ կ'ընդօրինակէք այս աղօրքը, այս խրատական խօսքերն ալ գրեցէք. եւ անոնք որ կը գրեն ասիկա՝ բոլ գրուին յաւիտեանական կեանքի գրքին մէջ: Եւ անոնք որ կ'աւտանին եւ կ'աղօրքեն, Քրիստոսն ողորմութիւն բոլ ընդունին. եւ անոնք որ իրենց ընկերներուն ալ կը սորվեցնեն այս աղօրքը, Ասուծմէ վարձք բոլ ստանան: Եւ անոնք որ կը գրեն՝ օրինակեն աւելի խօսք կամ գիրք բոլ չխառնեն, ոչ ալ նուազեցնեն, որպէսզի տարբեր տարբեր չըլլան խօսքերը, այլ՝ յոր եւ նման ըլլան ամենքն ալ ուր որ ալ գրուած ըլլան: Անոնք որ անվարձ են գրելու մէջ՝ շիտակ գրողներուն գրել տան. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամեն»:

Յառաջիկային կ'անդրադառնանք այս աղօրքի իւրաքանչիւր տունի մասին մի աս մի:

(1)

ՇԵՈՐՀՔ ԵՊԻՍԿ.

ԽԱՅՐԸ, ԱՆՈՐ ԻՄԱՍՏՆ ՈՒ ՊԱՐԽԱՆՔԸ

(Խաչվերացի տոմարի առիթով)

Խաչվերացի տոմարը յիշատակութիւնն է Քրիստոսի խաչաւորման Պարսկաստանէն ազատագրուելով Գողգոթայի բլուրին վրայ վերստին բարձրացման և փառաւորութիւնը, որուն պատմական ամփոփումն է հետեւեալը:

Պարսից Խոսրով թագաւորը, 610ին, երբ երուսաղէմը գրաւեց, Յիսուսի խաչաւորման գերի տարաւ Պարսկաստան, քրիստոնեաներուն իբր նախատինք: Յետոյ Բիւզանդիոնի Հերակլ կայսրը, 628ին, մեծ յաղթանակ մը տանելով Պարսից վրայ, խաչաւորման ազատագրեց գերութենէ: Այս յաղթանակին մէջ Հայերը ևս ունեցան իրենց մասնաւոր բաժինը:

Երբ խաչաւորման ազատագրուեցաւ Հայաստանի ճամբով տարուեցաւ Կ. Պոլիս և անկէ ալ երուսաղէմ: Երուսաղէմի օրուան Զաքարիա պատրիարքը խաչը վարդերով ու ծաղիկներով զարդարած կանգնեց Գողգոթայի գագաթը մեծ շուքով, և այդ առիթով տեղի ունեցաւ մեծ տօնակատարութիւն մը, անհուն հրճուանք պատճառելով հաւատացեալ ժողովուրդին: Խաչվերացը այս դէպքին տօնախմբութիւնն է:

Խաչաւորման Պարսկաստանէն Կարնոյ ճամբով տարուելուն առթիւ ատեն մը մնացած է անդ և այդ պատճառաւ Կարնոյ լեռներէն մէկուն դագաթը Խաչաւորման կոչուէր: Նոյնպէս Կարնոյ մօտ կար վանք մը՝ որ Խաչկայ վանք անունը կը կրէր:

Արեւմտեան և Յոյն եկեղեցիներ Խաչվերացը կը տօնեն Սեպտ. 14ին, որ օրն ալ հանդիպի: Իսկ մենք Հայերս կը տօնենք Սեպտ. 14ի մերձաւորագոյն Կիրակիին:

Ա. — Խաչը իբրեւ պատճոյ գործի: Յանցաւորը փայտի վրայ գամելով սպաննելու սովորութիւնը հին ատեն կը գործադրուէր Կարկեդոնի և Պարսկաստանի մէջ: Հրեաներուն համար թէև անձանթ չէր յանցաւորը ծառէ մը կախել և կամ ծառի մը վրայ գամել, ինչպէս Յեսու Քանանու թագաւորը ծառէ մը կախեց և սպաննեց (Յեսու, Ը., 29), ինչպէս Գարաւոնի պատերազմի ատեն Յեսու հինգ թագաւորները

մեղաց և դանոնք հինգ ծառերու վրայ կախեց (Յեսու, Ժ., 26), բայց և այնպէս այս սովորութիւնը հրէական չէ ծագումով:

Աստուածաշունչի Եսթերի գրքին մէջ կը պատմուի որ Պարսիկ Համանը բարեպաշտ Մուրթքէն կախելու համար փայտէ գործիք մը պատրաստեց. սակայն այնպէս պատահեցաւ որ իր պատրաստած փայտին վրայ ինք կախուելով իր արդար պատիժը գտաւ: Պարսկաստանի մէջ տիրող այս սովորութիւնը ժամանակի ընթացքին Յունաստան անցաւ: Փրկչական թուականէն մի քանի դար առաջ, Յունաստանի մէջ ոճրագործները խաչով մահացնելը շատ ընդհանրացած սովորութիւն մըն էր: Ապա այս սովորութիւնը Յունաստանէն մտաւ Հռովմ, այնպէս որ Յիսուսի ժամանակ Հռովմէացիները կը գործադրէին զայն Հռովմի քաղաքացի չեղող մեծ ոճրագործներու, աւազակներու և յայտնի ապստամբներու վրայ:

Ըստ Հռովմէական սովորութեան, յանցաւորը նախ կը ծեծուէր կաշիէ շինուած խարազանով մը, յետոյ խաչը ուսին վրայ առած կը տանէր մինչև խաչելութեան վայրը՝ ուր կը գամէին զինքը իր կրած խաչին վրայ, և ապա կը սկսէին ծաղրել: Սակայն իբր զթուլեան նշան, սովորութիւն էր նաև խաչեալին տեսակ մը թմրեցուցիչ ըմպելի խմցնել, ծանրացած զինի մէջ լեզի մը և կամ ուրիշ դեղեր խառնելով, որ պահ մը գէթ անիկա մոռնայ իր ցաւերը: Եւ սակայն յանցաւորը ժամերով խաչին վրայ տառապելով արիւնքամ կ'ըլլար և կ'աւանդէր իր հոգին:

Եւ քանի որ Յիսուսի ժամանակ Պաղեստին Հռովմի աշխարհաճաւալ պետութեան մէկ մասը կը կազմէր, և քանի որ Յիսուս իբր յանցաւոր Հրէից կողմէ Հռովմի կառավարութեան յանձնուեցաւ, Հռովմէացի զինուորները Հրեաներու հետ զինքը Գողգոթայի վրայ խաչը հանեցին, երկու ոճրագործ աւազակներու հետ միասին:

Երբ Պետրոս Առաքեալն ալ կը խաչուէր Հռովմի մէջ, ըստ աւանդութեան, ինքզինք արժանի չտեսնելով Յիսուսի նման զուլիսը վեր խաչուելու, և իր փափաքին վրայ զլիսվայր խաչուեցաւ: Պօղոս Առաքեալ Հռովմի քաղաքացի ըլլալուն համար չխաչուեցաւ, այլ զլիսատուելով նահատակ-

ուեցաւ: Հոգովի մէջ յանցաւորը խաչելու այս սովորութիւնը շարունակուեցաւ մինչև Դ. դար, երբ Մեծն Կոստանդիանոս կայսրը քրիստոնեայ դարձաւ և Հոգովի մէջ քրիստոնէութիւնը ազատ կրօնք հռչակեց, և ջնջեց յանցաւորները խաչով պատժելու այս անգութ սովորութիւնը, ի յարգանս Խաչաւորին՝ որուն ինք ևս հեանող մը եղած էր:

Բ. — Խաչին նոր իմաստ: Երբ Յիսուս Գողգոթայի բլուրին վրայ խաչուեցաւ, այդ օրէն սկսեալ խաչը նոր իմաստ մը ստացաւ քրիստոնեաներուն համար: Մահուան գործիք մըն էր խաչը, սակայն Յիսուս անոր վրայ իր կենսատու արիւնը թափելէն վերջ կեանքի խորհրդանշան մը եղաւ: Մեղաւորը պատժելու ահաւոր միջոց մըն էր խաչափայտը, բայց յետոյ հանդիսացաւ բոլոր մեղաւորներու փրկութեան ապաւէնը: Առաջ սարսափն էր յանցաւորներուն, իսկ յետոյ եղաւ յաւիտենական կեանքի աւետիսը տարածող ազդակ մը: Նախապէս հոմանիշ էր անպատուութեան, վերջը սակայն առարկայ դարձաւ մեծարանքի: Ոճրագործ մը իր կեանքին վերջակէտը կը տեսնէր անոր վրայ, իսկ ապա իրական և յաւիտենական կեանքի տիրանալու համար յոյս մը գտաւ անոր մէջ: Մահուան առաջնորդող խաչը փրկութեան գուռը եղաւ մարդկութեան: Յիսուսի խաչելութենէն ետքը, մահուան այս փայտը կենաց փայտի փոխուեցաւ:

Երբ Իսրայէլացիները անապատին մէջ օձերէ խայթուելով կը տառապէին, Աստուծոյ հրամանով Մովսէս պղինձէ օձ մը շինեց և բարձրացուց զայն ձողի մը վրայ: Եթէ պատահէր որ օձերէ խայթուող մը պղինձէ օձին նայէր՝ իսկոյն կ'առողջանար: Այս ձողը և անոր վրայի փրկարար օձը խաչը կը խորհրդանշէին: Մեղքի օձին խայթուած քներէն տառապող մեղաւորն ալ երբ անկեղծ զղջումով ու հաւատքով Գողգոթայի խաչին կը նայի, հոն բժշկութիւն, այսինքն քառութիւն կը գտնէ իր մեղքերուն համար: Աւետարանի բառերով, «ինչպէս Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, այնպէս պէտք է որ Որդին Մարդոյ բարձրանայ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ., Գ., 14-15):

Գողգոթայի խաչին փրկութեան այս գօտեպնդիչ աւետիսը Աստուծոյ սիրոյ արդիւնքն է պարզապէս: «Էւանգելի Աստուած այնքան սիրեց աշխարհը, մինչև իր Միակն Որդին տուաւ, որպէսզի ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, ալ յաւիտենական կեանք ունենայ»: Արարչի ամբողջ կեանքը արդէն Աստուծոյ յայտնութիւնն էր, իսկ Գողգոթայի խաչը այդ յայտնութեան գաղաթնակէտը եղաւ: Երբ Աստուած, Գողգոթայի բլուրին վրայ Յիսուսի կրած չարանքներուն մէջ իր փրկարար, տառապող ու զոհաբերող սէրը յայտնեց մարդկութեան, այդ օր աշխարհի պատմութեան մէջ նոր էջ մը բացուեցաւ:

Այս տառապող, համակող ու համակ փրկարար սիրոյ առջև կա՞յ սիրտ մը, որ պահած ըլլայ իր մարդկային յատկութիւնները և տակաւին չհալի: Կա՞յ մոլորութեան մէջ թափառող մեղաւոր մը, որ պահած ըլլայ իր մարդկային բանականութիւնը և չզգաստանայ: Կա՞յ անտուգութեան մէջ տուայտող երկտեսարդ մը, որ մարդկային զգացումներէ զրկուած չըլլայ և չուզուի: Կա՞յ աշխարհի անցաւոր հաճոյքներուն մէջ գերի եղած անձ մը, որ ի սպաս թմրած չըլլայ իր հոգեկան կուրուքեան մէջ և չարթննայ: Եւ վերջապէս կա՞յ մեղքի ծանր բեռան տակ յագնած ու ընկճուած անձ մը, որ կարենայ զգալ անտանելի ծանրութիւնը իր մեղքերուն և ապաշխարելու մասին չխորհի:

Գ. — Խաչին պարծանք: Խաչը՝ որ պատժոյ գործիք մըն էր, պարծանքի միջոց մը եղաւ քրիստոնէական կրօնքի մէջ՝ երբ հոն Աստուծոյ փրկարար սէրը յայտնուեցաւ աշխարհի: Եւ մարդիկ սկսան անով պարծենալ: Ուստի խաչը թագաւորներու և թագուհիներու թագերուն գերագոյն դարձը եղաւ: Եկեղեցականներուն կուրծքին նուիրական շքանշանը եղաւ և եկեղեցիներու զմբէթներուն վրայ տիրապետող քրիստոնէական դարձաւ: Եկեղեցին բարձրագոյն առարկան կը փառաւորէ Խաչը պանծացնելով կը փառաւորէ Խաչաւոր. այսինքն՝ խաչափայտին վրայ յայտնուած Աստուծոյ փրկարար սէրը, և անոր ազբիւրն ու մարմնացումն եղող սիրոյ Աստուծոյ:

Հետեալը խաչափայտը Խաչեալ Փրկիչը կը խորհրդանշէ, և անոր միակ ու գե-

բացոյն պատգամն է փրկութեան աւետարտայ մարդկութեան՝ Քրիստոնէութեան մեծ Առաքեալը կ'ըսէ. «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մեծոյ Յիսուսի Քրիստոսի»։ Ասով կը մատնանշէ Սաչեալ Յիսուս Քրիստոսը՝ որ իրեն փրկութեան միջոցը եղած էր։

Մեր պարծանքը իրական և մնայուն ըլլալու համար՝ պէտք է որ զգուշանաք անցաւոր ու վաղանցուկ պարծանքներէ։ Սէլսարն ընդհանրապէս կը պարծենայ տեսանելի բաներով և առժամեայ արժէքներով։ Աղքատ մարդ մը երբ բախտի բերումով յանկարծ հարստութեան մը տիրանայ, քանի որ նախապէս հարստութիւն տեսած չէ, կը խորհի թէ մեծ մարդ եղաւ, և կը սկսի իր հարստութեամբը պարծենալ։ Եւ մարդիկ ալ յիշաւի կը շփացնեն զայն, իր շուրջը կը դառնան և կը զովեն զինքը որ իրմէ օգտուելու պատեհութիւն ձեռք բերին։ Բան մը՝ որ այսօր քուկդ է և վաղը չէ, պարծանքի առարկայ ընել ծանծաղամտութիւն է պարզապէս։

Պօղոս Առաքեալ դարձի գալէն առաջ, աշխարհի տեսակէտէն պարծենալիք շատ բաներ ունէր։ Բայց երբոր քրիստոնեայ դարձաւ, այդ բոլորը մէկ կողմ դրաւ, և պարծանքի նոր առարկայ մը և պատճառ մը գտաւ։ Դարձի գալէն առաջ իր կեանքին առանցքը իր անձն էր և կամ հրէութիւնը, սակայն քրիստոնեայ դառնալէն ետքը Յիսուս եղաւ իր կեանքին առանցքը։ Անձնակեդրոն Սոզոսը քրիստոսականեդրոն Պօղոս դարձաւ։ Դարձէն առաջ իր պարծանքի առարկան իր հայրենի օրինաց և կրօնքին նկատմամբ ցոյց տուած նախանձախնդրութիւնն էր, իր ստացած բարձր դաստիարակութիւնն էր, իր ընկերային աչքառու գիրքն էր, իր փարիսեցի և վերջապէս Հռովմի քաղաքացի ըլլալն էր։ Սակայն երբ քրիստոնեայ եղաւ, իր պարծանքի միակ առարկան եղաւ Յիսուս Քրիստոսի խաչը։ Այլեւ աշխարհը կորսնցուցած էր իր հրապոյրը իրեն համար։ Հռովմի քաղաքացի ըլլալէ աւելի ինքզինքը երկինքի քաղաքացի կ'անուանէր։ Դամազիէի աշակերտ նկատելէ աւելի ինքզինքը Յիսուսի հետեոյ կը համարէր։ Ուսը բաժնած էր զինքը աշխարհէն, և աշխարհը՝ իրմէ, ինչպէս ինք կ'ըսէ, «Աշխարհ ինձի խաչը

եղած է և ես աշխարհի»։ Այսինքն, քրիստոնեայ դարձած վայրկեանէն սկսեալ աշխարհէն հրաժարած էր կամովին, և ուստի այլեւ աշխարհը իրեն համար մեռած էր պարզապէս, և ինքն ալ մեռած էր աշխարհի համար։ Յետ այսու իր պարծն էր աշխարհի բարեխառութեան համար չարաչար աշխատել, մարդոց մեղքերուն համար չարաչարել, և անոնց դարձի գալուն համար Դողգոթայի օրինակին հետեւելով զոհել ու զոհուիլ։ Ինչպէս Յիսուս խաչուած էր աշխարհի մեղքերուն համար, նոյնպէս ինքն ալ, իր կարգին, պէտք էր որ մարդոց մեղքերուն խաչը կրէր, որպէսզի անոնց փրկութեան միջոցը հանդիսանար։ Իր բառերով. «Այսուհետեւ աշխատ ոք զիս մի աւրացէ, զի ես զչարչարանս Քրիստոսի ի մարմնոյ խնամ կրեմ» (Վաղտ., Զ, 17)։

Մէկը, որ ինքզինքը իրական քրիստոնեայ կը նկատէ, պէտք չէ խուսափի ուրիշներու բարեխառութեան համար խաչ կրելէ։ Քրիստոսի հետքերուն վրայէն քալելու համար իւրաքանչիւր քրիստոնեայ անհատի կեանքին մէջ Դողգոթայի զոհաբերութիւնը անհրաժեշտութիւն մըն է։ Քրիստոսի հետեոյ մը ուրիշներու փրկութեան համար խաչ կրելով է որ իր փրկութիւնն ալ միաժամանակ ապահոված կ'ըլլայ։ Սուրբ Պօղոսի համար իրականութիւն մըն էր այս։ Ուսին կը պարտէր նա իր կեանքին մէջ տեղի ունեցած այս փոփոխութիւնը։

Գ. — Խաչի պարծանքին գործնական արժէքը։ Իրական պարծանքը քրիստոնէական կեանքէ բղխած ապրելակերպին մէջ է։ Եթէ մէկը այդ ապրելակերպը և կամ քրիստոնէական բարձր նկարագիրը ունի, պէտք չունի այլեւ աշխարհիկ բաներով պարծենալու։ Ընդհանրապէս աշխարհիկ արժէքներով կը պարծենան անոնք՝ որոնք հոգեւոր տեսիլներէ զուրկ կ'ապրին։ Կէօթէ կ'ըսէ. «Եթէ մարդու մէջ բարձր նկարագիրը կը պակսի, արտաքին պարծանքը ունայնամտութիւն մըն է պարզապէս»։ Իսկ Պիլըր կ'աւելցնէ. «Ոչ մէկ բան այնքան կարճատեւ է որքան ունայն պարծանքը»։ Բայց ցաւալի է որ որքան մեծ թիւով մարդիկ այժմ փոռ պարծանքի ետեւէն կը վազեն։ Պարծանք մը՝ որ այսօր իրենց հետ է, իսկ վաղը իրենցմէ կը հրա-

ժարի, և կամ իրենք անկէ կը հրաժարին։
Միայն զարժանքը յաւիտենական արժէքներու մէջ է։ Այդ արժէքներն են ճշմարտախօսութիւն, ուղղամտութիւն, ազնուութիւն, պարկեշտութիւն, վեհանձնութիւն, ծառայութիւն, նուիրում և զոհողութիւն մարդկային ցեղի վերելքին ի նպաստ։

Ասանք մէկական աղամանդներ են, որոնք մեր հոգիները կը զարգարեն։ Եթէ ունինք այս աղամանդները այլևս աշխարհի վաղանցուկ պարժանքի առարկաները մեր սրտին չեն խօսիր։ Լաւագոյն պարժանքը խաչին վրայ արտայայտուող զոհողութեանց մէջ է, որովհետեւ «Աշխարհի ունայն պարժանքը կը սպառէ զրամը, կը կործանէ հարստութիւնը, կը ջլատէ ոյժը, ի վերջոյ կը յանդի ոչնչի»։ Եւ չքսրիյր կ'ըսէ. «Այս կեանքին ունայն պարժանքը յիմարութեան հաւասար է»։ Իսկ ժողովուրդի Գրքի խմատունը իրաւամբ կ'ըսէ. «Աւնայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»։ Ասիկա մարդկային կեանքի դարաւոր փորձառութեան վկայութիւնն է։

Իրական պարժանքը ուրեմն խաչի պարժանքն է, որ մեր սրտին ու հոգիին մէջ կը գտնուի և չբաժնուիր մեզմէ բնաւ։ Ան մեր իրական գանձն է, որ ո՛չ գողը կրնայ կողոպտել և ո՛չ ցեցը՝ ուտել։ Ո՛չ սուրը, ո՛չ նեղութիւնը, ո՛չ տառապանքը, ո՛չ հալածանքը և ո՛չ ալ մահը զայն կրնան մեզմէ առնել։ Ո. Պօղոսի նման բոլոր իրական սուրբերն ալ իրենց պարժանքը Յիսուսի խաչին մէջ կը փնտռէին, հրաժարած ըլլալով աշխարհիկ ունայնութիւններէն։ Աւնայնութիւնը աշխարհասէր մարդուն տկարութեան ապացոյցն է։

Աշխարհը քաղաքական մեծ զօրութիւն ունի, որուն հակազդող միակ ոյժը իմաչին զօրութիւնն է, ինչպէս կ'երգէ Հայց. Եկեղեցւոյ շարականը.

«Ջօրութիւն սուրբ խաչի քո, Քրիստոս,
«Որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի,
«Սա պահեսցի զվեց ամենայն փորձութիւնէ»։

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

Ֆեզնո, Գալիւ.

ԲԱՆՆՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՅՈՒ ՍՏԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

F) — «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

I

Համաշխարհային գրականութեան մէջ Նարեկացին հաշակուի է իր «Մատենան Ողբերգութեան» մեծ պոէմով, որը ծանօթ է հանրութեանը սովորաբար Նարեկ անունով։ Այդ երկը պատկանում է այնպիսի հանճարեղ ստեղծագործութիւնների թուին, որոնք միանգամից չեն ըմբռնում, ժամանակի ընթացքում, որքան հարստանում է մարդկային կուլտուրան ու կենսամիտքը, այնքան աւելի հնարաւոր է դառնում նրանց բովանդակութեան խորքերը թափանցել, նրանց հեղինակների մտքերի ու զգացմունքների զաղտնիքները բացայայտել և անսահման թնիչքին հետեւել։ Հայ մեծագոյն քնարիկգու բանաստեղծ Գրիգոր Նարեկացին «Մատենան Ողբերգութեան» պոէմում մարդկային ապրումների մի այնպիսի մեծ ընդգրկման է հասել, որ քննադատութեան համար այն լրիւ ու մինչև վերջ վեր հանելը դեռ ապագայի գործ է։

«Ողբերգութեան Մատենան»ը համաշխարհային պատմութեան մէջ իր ժանրային առանձնատկութիւններով մի եզակի գործ է, ստեղծագործական միանգամայն ինքնուրոյն մի մտայնացում։ Նրա լինքնատպուլութիւնը արդիւնք է ինչպէս բանաստեղծի անհատական պատկերացումների, այնպէս էլ հայ գրականութեան զարգացման ընթացքի։

Ծիշո է. Նարեկացին յաճախ օգտուում է Ասուածաւելի և Աւեստայի արտայայտութիւններից, Նարեկի մէջ նա յաճախ մէջբերումներ է կատարում յատկապէս սաղմոսներից և մարգարէներից, բայց զըրանք մեծ մասամբ Միջնադարում ընդհանուր գործածութեան մէջ եղած արտայայտութիւններ են, ուստի և առանձին յայտնութիւններ են, ուստի և առանձին նշանակութիւն չունեն երկի բանաստեղծական կառուցուածքի և բովանդակութեան

առանձնաշատություններն են քնորոշման համար: Բացի սրանից, «Ողբերգությունների Մատենան»ը գեղարուեստական արժեքով շատ բարձր է սաղմոսներից: որոնք, ի միջի այլոց, Թագավոր Տենը համարում է միասնականության պաշտամունքի գաղափարախոսությունն ամենաուժեղ գեղարուեստական արտայայտությունները: Նարեկացին իր «Մատենան Ողբերգությունների» պոեմով Միջնադարի լիբրկները ունենալով է:

Նարեկի մանրամասն վերնագիրը հետևալն է, «Դրությունք յոգնաթախանձ բանից օգտակարաց ապաշաւանաց հոգեւոր խրատուց անձին ստգտանաց զգլխականաց կանոնաց կենաց կամարութեամբ յանձնառութեանց անկեւութից յայանութեանց մեղանաց խոստովանութեանց ցուցմունք զաղտնեաց տարածմունք ծածկելոց յանգիմանութիւնք թագուցելոց սպեղանիք զօրաւորք վիրաց անբժշկականաց դեղք ազդողականք ցաւոց անտեսականաց հաւաւորութիւնք բազմամտանեայ երկանց վտանգից ի դիմաց կարեաց ամենից բնութեանց ստիժք արտասուաց պատճառք աղօթից ի խնդրոյ հայցմանց հարց միանձանց եւ բողմաց անապատականաց ասացեալ Մատենան Ողբերգությունների Դրիգորի Նարեկայ վանից վանականի: Ոյս տողերից անմիջապէս յետոյ ձեռագրերում և հնագոյն աղագրութիւններում հետևում է «հոգեմատենան հետորի հայոց փիլիսոփայի», կամ «հոգեկիր հետորի և հայոց փիլիսոփայի» արտայայտությունը:

Վերնագրի այս վերջին արտայայտություններից կարելի է հաստատապէս ասել, որ այն Նարեկացունը չէ, այլ հետագայ գրիչներինը, որովհետեւ բանաստեղծը զրժուար թէ ինքն իր մասին գրեր «հոգեկիր հետոր» և «հայոց փիլիսոփայ» այն ժամանակ, երբ ոչ միայն իր միւս գործերի, այլ հենց «Ողբերգությունների Մատենան»ի յիշատակարանում չափազանց համեստ է արտայայտւում իրեն գնահատելու: Ըստ երեւոյթի այս հանգամանքը հաշուի առնելով, Նարեկի հետագայ հրատարակիչները զիմել են կեղծիքի և լուեկան ջնջել են ձեռագրերում եղած այդ վերջին արտայայտությունները, որպէսզի ընդարձակ վերնագիրը անպայման Նարեկացու գրածը համարուի: Այսպիսով՝ պէտք է նկատել նաեւ, որ, հե-

տեառար, միանգամայն սխալում են բոլոր նրանք, ովքեր այս վերնագիրը կապէտ են դարձնում «Ողբերգությունների Մատենան»ը վերլուծելիս ու գնահատելիս:

Նարեկացու «Ողբերգությունների Մատենան» պոեմը միատիկական պոեմ է. այս սահմանումը թէպէտ ճիշտ է, բայց ինքնաստիքական դեռ բոլորովին չի սպասում և բացայայտում բանաստեղծի այս լուսագոյն ստեղծագործութեան էությունն ու արժէքը:

Նարեկացու՝ իրեն միատիկ ողբերգությունը իր էությունը արտացոլում է համայն մարդկություն թախիծն ու վիշտը և նրանց՝ իրականությունն նկատմամբ ունեցած խորը դժգոհությունն ու ցտակոտ բողբը: Այնուհետեւ, պէտք չէ մոռանալ, որ Նարեկացին հանճարեղ բանաստեղծ է և իր այդ արամադրութիւններով դուռ միատիկայի չըջանակներից վեր է բարձրացել, այսինքն, նրա ապրած ողբերգությունը փաստորէն տեղ տեղ միատիկայից վերածել է վերածնություն սկզբնաւորման չըջանի մի բանաստեղծի ողբերգություն, որը հասել է մարդու և նրա մտաւոր ու հոգեկան կեանքի արժէքաւորութեան բարձր գաղափարին, բայց տեսել է, որ այդ գաղափարին խորապէս հակասում են աւատապետական իրականություն մէջ գոյություն ունեցող կեցութեան պայմանները: Ոյս տուեմով՝ վերջին հաշուով, հակասություն չկայ Նարեկացու տողերի և «Մատենան Ողբերգությունների» պոեմի միջև: Երկու գէպքում էլ նոյն բանաստեղծն է, որ սիրում է կեանքը և որ, սակայն, յետոյ իրականությունն մէջ չտեսնելով ցանկացածը՝ ապրում է խորը հիսթափութիւն և ողբերգություն: Վերածնությունը դարաշրջանի աշխարհի մեծ գրողներից և արուեստագետներից շատերին յատուկ այս ողբերգականությունը՝ Նարեկացու մօտ խորն է և ուժեղ:

Բանաստեղծի իւրաքայտուկ հիւմանիզմը և հանճարեղութիւնը պայմանաւորել է նաեւ այն, որ Նարեկում հանդէս գար յանձին իրեն՝ մարդը իր հոգու ամենամարդկային, ամենախորունկ ու ամենանուրբ ծաղիքով, իր ապրումների, խոհերի ու զգացմունքների ամենարագմագան հակասություններով, ամենափոթորկոտ շարժմամբ և ալեկոծութիւններով, «Նարեկը ալեկոծութիւն

մըն է, հոգեկան վրդով մերթիկ մը և ալե-
կոծութիւն մը՝ ուր քառերն ու կշռոյթիւն-
ները ալիքներու քաղխումին չափակցու-
թիւնը՝ անոնց ինքնակործան շաչումները
անոնց իրարահալած թաղացքն ու անկում-
ները ունին»⁽¹⁾։ Եթէ այս բոլորին աւելա-
ցնենք այն, որ մարդկայնօրէն չափազանց
հարուստ քաղանդակութիւնը մի պոէմում
արտայայտելու համար նարեկացին ունի,
ցել է պոէտական անհուն և անսահման
հնարաւորութիւններ, և որ նրա լեզուն,
Ուխտանէս պատմիչի ռոմով ասած, մի գե-
ղահնչիւն քնար է, որը ինչպէս կամենում
այնպէս շարժում է հոգին, ապա լիակա-
տար հիմք կ'ունենանք հանճարեղ քանաս-
տեղծի այդ ստեղծագործութեան գեղար-
ուեստական անընդգրկելի մեծութեան մա-
սին խօսելու։

II

Նարեկացու «Մատենան Սղբերգութեան»
պոէմը միանգամայն խորայտուկ կառու-
ցուած ք և բովանդակութեան զարգացման
ընթացք ունի(2)։ Այն ընդհանուր գրականու-
թեան մէջ եղած լիրիկական ժանրի պոէմ-
ներից թերևս ամենալիրիկականն է, որով-
հետև արտաձայնական—սլաժեռային տարրը
ընդհանուր կառուցուածքի մէջ բոլորովին
բացակայում է, իսկ եթէ առանձին գլուխ-
ներում էլ երևան է դալիս՝ աննկատելի
լինելու չափ քիչ տեղ է բռնում։ Շատ
բարձրարժէք լիրիկական պոէմների հեղի-
նակներ իրենց խոհերն ու զգացմունքները
չարժման ու զարգացման ընթացքի մէջ
չենլու համար այս կամ այն չափով ստիպ-
ուած են եղել օգտագործելու որոշ սխեմ-
ներ (օրինակ՝ Պաշտօնը Չայլդ Հաուզլուսմ,
Թումանեանը՝ Դեպի Անհունում, Իսահակ-
եանը՝ Աբու—Լալա—Մանաբիւում և այլն),
մինչդեռ Նարեկացին կարողացել է տրա-
մադրութիւնների, խոհերի և յօդերի գա-
ր

գաղման խիստ ուժեղ և տրամադիրկ ըն-
թացք ստեղծել՝ ծառայով չառ ընդարձակ
պոհմում, առանց սխալի օգնութեան զի-
մեկու: Բայց ինչպէ՞ս:

Նարեկը բաժանուած է իննուհինգ
գլուխներէ, որոնք բոլորն էլ նոյն վերնա-
գիրն ունեն, բացառութեամբ երեքի։ Ա-
ռաջին գլուխը վերնագրուած է. ի խորոշ
որդէն իտէ ընդ Աստուծոյ, իսկ միւս բոլոր
գլուխները յաջորդաբար վերնագրուած են։
Վերջոյն յաւելւած էրէն հիշաթեալ նոյն հը-
նչի առ նոյն աշխարհաբանաց քանի, ի խորոշ
որդէն իտէ ընդ Աստուծոյ։ Այսպիսով՝ բանաս-
տեղծը սկզբից մինչեւ վերջ սրտի խորքե-
րից Աստծու հետ խօսք է ասում։ Այժմ
մի քանի խօսք ալ երեք գլուխների մա-
սին, որոնք տարբեր վերնագրեր ունեն և
որոնք ոչ միայն գրանով, այլև իրենց բո-
ղանդակութեան բնոյթով ու լիզուած-
անկան առանձնայատկութիւններով տարբեր-
ւում են միւսներից և խախտում են պոէզի
նպատակադրաց ընդհանուր կոմպոզիցիան։

Դրանցից առաջինն է Հե գլուխը, որը վերնագրուած է այսպէս. Դաբէւ առ Նին
էրէպարտէ Երէպարտէն ուսարածային հոգւոյն
աւելցեալ, յոր իւր յառաւելցոյն աւելցեալ ա-
ւարտեալն՝ առ աւելցոյն լաւաւարտեալն եկեղե-
ցոյ դասանալիս՝ յիշեալէ ելեալ աւարտեր: Լա-
ւոյ առ աւելցեալն Նինիւրէն զաւելցեալ Երանար
էրէպարտեալն աւճառել: Վերային խոյ ընդ
Աւարտոյ: Երկրորդը՝ ՂԲ գլուխը վերնա-
գրուած է. Ի վայրէ երջանիկ բարեբաւարտեալն
ժամհարին խորհրդանալիս, աւելցեալ ելեալ ընդ
էրէպարտեալ լաւաւարտեալն: Եւ վերջապէս
երրորդը՝ ՂԳ գլուխը վերնագրուած է. Ա-
ւելցեալ լաւաւարտեալն ժամս բարեալոյ խոյն Մեհա-
նէն: Այս գլուխները (որոնց հետ և ՀԳ և ՀԴ
գլուխներ ձի քանի կնիթամասերը) բանաս-
տեղծական գեղարուեստական բնոյթ հու-
նեն, ալ՝ զաւանթարանական՝ փիլիսոփա-
յական, և գրուած են սառը ու բոլորովին
տարբեր ոճով:

Բանասէրներէց ոմանք հեկատելով յիշեալ գլուխներէ՝ ոգով և ոճով անշարիր լինելը պոէմի միւս մասերի հետ, ենթադրել են, որ դրանք նարեկացունը չեն, այլ արգիւնք են նրա եղբոր՝ Յովհաննէսի աշխատակցութեան, որի մասին բանաստեղծը խօսել է պոէմի յիշատակարանում։ Ոմանք էլ կարծել են, որ դրանք ինչ որ մեզ ան-

(1) Դ. Դեծարեւնյ, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1934, էջ 968.

(2) Պիտի նշել, որ Նարեկի բովանդակութեան զարգացման որոշակի ընթացք ունենալու և այն բացայայտելու վրայ բանասէրները ուշադրութիւն չեն դարձրել: Նրանք պոէզիի բովանդակութիւնը վերլուծել են հատուածաբար՝ միատրյակ մի էական գծերի մասին առաջուց ունեցած թէկզբի համաձայն:

յայտ ազդեցությունները նախկինում կատարած թարգմանություններ են, ուրիմն ինքնուրոյն գլուխներ չեն⁽¹⁾։ Այդ կարծիքը, ի հարկէ, մնալ է, որովհետեւ հիմնուած է ըստ երեւոյթին «թարգմանություն» բառի վրայ, որը թարգմանարար չպիտի հասկանալ, այլ «մեկնութիւն» իմաստով։ Կայ և կարծիք, որ գրանք հետազոտում ուրիշներին կողմից են մեծուել, որոնց իբրեւ ամենահաւանական հեղինակ նշուած է Գրիգոր Սկեռացին։ Որովհետեւ եղած փաստերը զեռ հնարաւորութիւն չեն տալիս այս ենթադրութիւններից որեւէ մէկը հիմնաւորել, ուստի նախկինում՝ այդ գլուխների հեղինակ լինելու կամ չլինելու հարցը առայժմ պէտք է մի կողմ թողնել։ Տուեալ դէպքում հետաքրքրականն այն է, թէ այդ գլուխները արգեօ՞ք սկզբից իսկ «Մատեան Ողբերգութեան» պոէմի մէջ եղել են այն գոտաւորութեամբ ինչ որ շատ ձեռագրեւում և տպագրութիւններում է, որովհետեւ եթէ նոյնիսկ հաւանական համարենք, որ այդ գլուխները (որոնք գերազանցապէս վերաբերում են նիկիական հաւատոյ հանգանակին) կարող էր և գրած լինել Թանգրակիցութեան մէջ մեղադրուած ու դրա համար հետապնդուած նախկին, բայց, մինչոյն է, բողոքովին անհնար է պատկերացնել, որ նրա նման հանձարեղ բանաստեղծը իր պոէմի նպատակաւորաց կոռուցուածքը երկու-երեք անգամ խախտեր զաւանաբանական պրոպաիկ միջարկումներով։

Եւ իսկապէս, նախկին առաջին լրիւ տպագրութեան մէջ (սփիւք աղօթից սրբոյն Գրիգորի նախկինայ արարեալ, 1700 թուին, Կ. Պոլիս), ինչպէս նաև ԺԸ. դարի շատ այլ տպագրութիւններում՝ ՂԲ և ՂԳ գլուխները իբրեւ ՂԵ և ՂԴ գրուած են ամենից վերջում, ԺԹ. դարի տպագրութիւններին՝ 1827 թուին վենետիկում լոյս տեսած «Գրիգորի նախկին վանից վանականի մատենագրութիւնք» վերնագրով ժողովածուն մէջ նոյնպէս այդ գլուխները գրուած են վերջում։ Նախկին իբրեւ սուրբ գիրք էր տպագրուած և, բնականաբար, նրա հրատարակիչները կամայական կերպով գլուխներին այդպիսի տեղափոխութիւն չէին կատարել՝ ելնելով կոմպոզիցիայի հետեւողա-

կանութիւնը պահպանելու նկատառումից։ Անկասկած նրանք այդ արեւ են ձեռքի տակ եղած ձեռագրերին հիման վրայ։ Որ գլուխների այդպիսի գոտաւորութեամբ էլ ձեռագրեր հնոււմ եղել են, այդ կարելի է ապացուցել Հայկական ՍՍՌ Մատենադարանում գտնուող «Ողբերգութեան Մատեան»ի մի շատ հետաքրքիր օրինակով։

Մեր Մատենադարանի նախկին բաղաժաթիւ ձեռագրերից թիւ 2929 ձեռագիրն ունի այս հարցի վրայ լոյս սփռող մի շարք կարեւոր առանձնայատկութիւններ։ Այն նախկին մեղ հասած հնագոյն ձեռագրերից է, ինչպէս երևում է յիշատակարանից, որը գրուած է 1257 թուին Կիլիկիայում՝ Հեթում թագաւորի օրով. («... Բայց գրեցաւ սա ի հռչակաւոր մեծ անապատիս զոր Իրազարկ վերաձայնի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ, և ի բարեպաշտ թագաւորութեան Հեթում, և աստուածածնէր իշխանաց իշխանին Կոստանդեայ։ ... Գրեցաւ ձեռամբ իմոյ Սաչատուր փցուն գրչի, սուտանուն կրօնաւորի և յոյժ մեղապարտի»)։ Այդ ձեռագրով, «Մատեան Ողբերգութեան» պոէմը սովորական Ա-ՂԵ գլուխների փոխարէն ունի մինչև Ծ, այսինքն մինչև հարիւր գլուխ։ Ինչպէս է ստացուել այս տարբերութիւնը։ Յայտնի է, որ բացի ՀԵ, ՂԲ և ՂԴ գլուխներից, նախկին ԼԳ և ԼԴ գլուխներին մի քանի հատուածները նմանապէս գաւանաբանական բնոյթ ունեն և ունեն գանազան ենթավերնագիրք, ահա յիշեալ ձեռագրում այդ հատուածները վերցուած են իբրեւ առանձին գլուխներ, ըստ որում ՀԵ գլխի (որի մեղ յայտնի մանրամասն վերնագիրը ձեռագրում չկայ) ե հատուածից մինչև Թ հատուածը իբր առանձին գլուխ թողնուած է անմիջապէս ՀԵ-ից յետոյ, իսկ Թ հատուածից մինչև վերջը, դարձեալ իբրեւ առանձին գլուխ, գրուած է ամենից վերջում, իբրեւ Ծ գլուխ, իսկ Ծ-ից անմիջապէս առաջ գրուած են ՂԲ և ՂԴ գաւանաբանական գլուխները։ Իբրեւ ՂԸ և ՂԹ։ Այսպիսով՝ ձեռագրում ոչ միայն հին տպագրութիւններին համաձայն երկու գաւանաբանական գլուխները գրուած են վերջում, այլև պոէմի միջից դուրս է հանուած և զրանց է աւելացուած ևս մէկ այդպիսին։

(1) Տես, օրինակ, Բաղմալէպ, 1900, էջ 442։

Այս բոլորից պէտք է հզրակացնել, որ Նարեկացին ՂԻ և ՂԳ ոչ բանաստեղծական գլուխները, ինչպէս և ՀԵ ու մի քանի այլ գլուխները վերջին հատուածները կամ բուրովին ինքը չի գրել, կամ եթէ երբեք ինքն է գրել, ապա դրանք յօրինել է անկախ իր պոէմից, այլ նպատակներով, որոնք սակայն հետագայում գրիչներին կողմից ինչ — ինչ նկատառումներով խառնուել են բուն պոէմի տեքստին:

Դառնանք այն հարցին, թէ ի՞նչպէս է զարգանում «Ողբերգութեան Մատեան»-ի բովանդակութիւնը, երբ բոլոր գլուխները նոյն վերնագրին ունենալով՝ կարող են արտաքինից զիտողին կարծել տալ, թէ բանաստեղծը անընդհատ կրկնում է նոյն մտաւիզը:

Նարեկի ներքին ուժեղ դրամատիկական դրութիւնները և ընթացքը նախ և առաջ պայմանաւորուած են հէնց նրա գաղափարական էութեամբ և բնոյթով: Իբրև միասիկ, Նարեկացին իր գերագոյն ձգտումն ու նպատակը համարում է Աստծու տեսութեանն արժանանալ և հասնել այն բանին, որ իր մարդկային բնութիւնը կատարելապէս խառնուի ու միանայ աստուածային բնութեան հետ, որ իր կերպարանքը նմանուի Աստծու իսկական կերպարանքին: Պոէմում մի տեղ նա յայտնում այն միտքն է յայտնում, թէ Քրիստոսը յայտնուեց նաև այն բանի համար, որ նրա միջոցով ինքը կարողանայ հասնել իր այդ գերագոյն երջանկութեան ձգտման:

Բայց Բանգի յոյժ արդար է Բան իրաւանցն Բրիսոսի Ասուծոյ առ իս Բան առ սկզբնահայրն չարեաց սասանայ. Զի վասն նորա յայն սակս յայնեցաւ, Զի լուծցէ զգործս նորին. [պետք է. Եւ վասն իմ՝ զի զննացեալ պատկերս նորո. Առեալ զկերպարանիս բոլոր եռերիւն կերպին իսկութեան մեծին Ասուծոյ՝ Միացոյց ինքեան անշուշտ խառնութեամբ:

(Բան ԿԷ. — Ա.)

Այս ինքնայուսագրութիւնը սակայն ողբերգական ահաւոր ապրումների երկար շղթայի մի օղակն է միայն: Միտարկը ինչքան ձգտում է հասնել և միանալ Աստծուն, այնքան նրան թւում է թէ Աստուած հեռանում է իրենից, բայց ինչքան Աստուած

հեռանում է իրենից, այնքան ուժեղանում է նրան հասնելու տենչն ու պահանջը... Առերեւոյթ այս հակասութիւնից էլ ծնւում է միատիկի ողբերգութիւնը, որի արտայայտութիւնն են «Ողբերգութեան Մատեան»-ի նոյն իսկ սկզբի գեղեցիկ տողերը.

Ձայն հառաչանայ հեծութեան արհի՛ սղ-
բոց ալալակի
Քեզ վերքնձայիմ, ճեսողդ գաղսնայ.
Եւ մասուցեալ եգեալ ի հօր բախժու-
բեան անծին տղարման՝
Զպսուլ լղձից նենկերոյ սասանեալ մացս
Բուրվառաւ կամացս առաւել առ Բեզ⁽¹⁾:
(Բան Ա. — Ա.)

Այսպէս սրբով, հեծութեամբ և հասաչանքներով է սկսում բանաստեղծը իր խօսքը Աստծու հետ: Աստծուն, նրա կարծիքով, կարելի է հասնել. նրան կարելի է միանալ զգացմունքով: «Բանաստեղծի դոհի նուէրը պէտք է նրա պգայութիւնների խորհրդակիր սենեակի խորքից բարձրանայ և հասնի նրան, իսկ որպէսզի դա հնարաւոր լինի պէտք է մարդու զգացմունքները լինեն մաքուր. ոչ մի անմաքուր յոյզ, վատ խոհ մարդ չպէտք է ունենայ, նա չպէտք է կեանքում որեէ յանցանք գործած լինի: Բայց կարող է աշխարհիկ կեանքում ապրող մարդը այդպիսին լինել. ո՛չ, չի կարող, ասում է Նարեկացին, որովհետև նա ունի մարմին, իսկ մարմինն ու աշխարհը անընդհատ նրա մէջ մեղսաւոր յոյզեր են ծնում և նրան անընդհատ յանցանքների դրդում: Ուստի Աստծուն հասնելու համար նախ պէտք է հոգեպէս մաքրել՝ գործած մեղքերի ու յանցանքների համար թողութիւն հայցելով նրանից: Ներման արժանանալու համար մարդ պէտք է ապաշխարի ու աղօթի, ինքը խարազանի իրեն, իր հոգին ամենայն անկեղծութեամբ մերկացնի, իր բոլոր թաքուն խոհերն ու զգացմունքները բացայայտի:

Նարեկացին պոէմում անմիջապէս սկսում է իր փրկութեան համար աղաչել ու աղօթել և ինքն իրեն խարազանել: Այս-

(1) Նարեկի ձեռագրերի և տպագրութիւնների մի մասի առաջին երկու տողն այսպէս է.

Ձայն հառաչանայ հեծութեան ողբոց արհից աղալակի
Քեզ վերքնձայիմ ճեսողդ գաղսնայ...

տեղից միատիցիդ մի սոցիալական էութեան տեսակէտից ամենահետաքրքրական դրութիւններին մէկն է երեւան գալիս: Պոէմի ընթացքում, բանաստեղծը մի շարք խորհրդածութիւններով այն գաղափարն է դարգացնում, որ իր «Ողբերգութեան Մատեան»-ում ամեն մի ընթերցող կարող է ձգտել և հասնել այն բանին, ինչին որ ինքն է ձգտում և հնարաւոր է համարում հասնել, որովհետեւ իր երգած այդ ողբերի մէջ ինքը, իրեն մեծապէս զիտակ բոլոր վշտերի, իր սեփական պատկերով արտացոլում է աշխարհի բոլոր կողմերում ապրող քրիստոնեայ մարդկանց պատահած վշտերը՝ խորութիւն չդնելով երեխաներից մինչև ծերունիներին, սամկներին մինչև աշխուկաններին մինչև: Մարդիկ առանց տարիքի ու դասակարգի խտրութեան՝ այս պատճառով կարող են իր գրքով միշտ ներկայանալ Աստծու գլխութեան: Բանաստեղծը խնդրում է Աստծուց, որ յստակ սրտով իր Մատեանը կարդացողներին հոգիները բժշկի և մեղքերը սրբի. և եթէ ոեւէ մէկը այդպիսով արժանանալ փրկութեան, թող ինքն էլ նրա հետ միասին փրկուի. եթէ իր գրքի խօսքերի ներգործութիւնից ոեւէ մէկի սրտի խորքերից աստուածահաճոյ հեծեմանքներ դուրս գան, թող նրա հետ ինքն էլ օգտուի դրանից:

Այսպիսով՝ Նարեկացին իր և ընթերցողի միջև ձգտում է ստեղծել անխզելի կապ: Նրա պատկերացմամբ՝ ընթերցողները կարող են հոգու փրկութեան և անդորրութեան հասնել, ամէն տեսակ տանջանքներից և վշտերից ազատուել շնորհիւ իրեն, իսկ ինքը կարող է այդ բոլորին հասնել նաև շնորհիւ իր ընթերցողներին: Եւ որպէս զի իր Մատեանը այս կրկնակի նպատակներին ծառայի, Նարեկացին խնդրում է Աստծուց իր աներգործող ջունչը՝ միացնել այդ ստեղծագործութեանը:

(Շարունակելի՜ 7)

Մ. ՄԿՐԵԱՆ



ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԶԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1928 Յուլիս 22, Կիրակի առաւ, Պայծառ. կերպութեան տեսին լուսեղէն յիշատակներուն մէջ, Ս. Պատրիարք Հայրը^(*) կատարեց Զեռնագրութեան խորհուրդը:

Խուռն բաղմութիւնը հետաքրքիր և աղօթաւոր, կը հրճուէր՝ դիտելով սրբազան խորհուրդը, երբ երկու նախնականներ ծառիկ վրայ, երեսնին, դէպի ժողովուրդը, իրենց երկու ձեռքերը վեր, բաց ձեռքեր, «Աստուածային և երկնային շնորհ» երգով, արժանիքի, նուիրումի, վկայութեան այդ հոգեյոյզ երգով, որ ընծայեալին և ժողովուրդին միաշունչ վկայութեան եռահաւակ երգարանութիւնն է, կոչուեցան քահանայութեան սուրբ պաշտօնին:

Որբազնագործ Զեռնագրիչը իր աղօթքով և Զեռնագրութեամբ քահանայացուց ընծայեալները և օրհնելով սնունց քահանայական պատմածանը, կերտեց սուրբ պաշտօնին արտաքին վայելուչ ձեւերն ալ. և կարդաց վերջին աղօթքն օրհնութեան, Նարեկացւոյն «Աղաչեմ՝ զանվտախի ճէրարիւնը»: Աղօթքէն ետքը զարաց դասը՝ դոռաց առաջին «Նորհուրդ խորիւնը» նորընծաներուն զգեստաւորման:

Ս. Պատրիարք Հայրը իր քարոզը վերջացնելէ ետքը, «Առաւելոյ Աղաւնոյ» շարականին թրթիւններուն մէջ, որբաւոյս միառնալ օժեց նորընծաներուն ճակատները ինչպէս նաև անոնց աջ ու ահեակ ձեռքերը, պահելով առաջինին առնունը և կոչելով դայն Տէր Նորայր (կուսակրօն) Քանանայ, իսկ երրորդին անունը փոխեց և կոչեց Տէր Տրեմն (կուսակրօն) Քանանայ, որոնք իրենց օժեալ ձեռքերով իրենց առաջին նաղապետիւնը տուին ժողովուրդին, և երբ Սարկազուրիւնը տուին ժողովուրդին «Աղջոյն աւա՛ր միմեանց», Ս. Պատրիարքէն սկսեալ բոլոր եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և սարկազուրներ համբարեցին նորընծաներուն օժեալ ճակատներն ու ձեռքերը, և պաշտամունքներու աւարտումէն ետքն ալ ժողովուրդը դիմեց ողջունելու նորընծաները, համբարելով անոնց միառնաբոյր ձեռքերը:

Երանի՜ թէ այս թարմ օծութեամբ փայլէր նորընծաներու կեանքը մինչև վերջը:

Կիրակի երեկոյ, ժամերգութեան աւարտումէն ետքը, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց նորընծաներուն վերաբերուն Օրհնութիւնը, և կրօնաւորութեան այդ հայացի, վայելչածն կնդուղները դրաւ անոնց գլուխը, և կոչեց զանունը Տ. Նորայր Արեղայ և Տ. Տրեմն Արեղայ:

(Սիւն, 1928 Օգոստ. - Սեպտ., էջ 280 - 282):

(*) Գործան եղիւ Պատրիարք:

ՍԻԱՄԱՆԹՕ ԵՒ ԽՃԷ-ԶԱՐԷ

(Սիրավեպ)

Պ.

I

Ու ժամանակը սահեցաւ, անցաւ այսպէս,
 Եւ զոյգ սիրտերը մընացին կարօտակէզ.
 Կարծես կեցաւ ժամանակը իրենց համար,
 Օրը եղաւ երկար տարի ու տարին՝ դար:
 Ու նոր իղծեր, նոր երազներ ալ հիւսուեցան,
 Սիրատոջոր նոր մուրազներ կատարուեցան:
 Գարնան հովեր ուրիշ սէրեր թեզանեցին,
 Ու նոր մայրեր նոր մանուկներ օրօրեցին,
 Խըճէ - Զարէն, Սիամանթօն բայց մընացին
 Իրար՝ ծարաւ ... Երազներով միայն անոնք
 Տեսան զիրար, եւ արթնցան սիրով բորբոք.
 Սիրտերն իրենց մընացին միշտ սիրոյ հընոց,
 Ու յիշատակն հին օրերու՝ արիւնոզ խոց:
 Այսպէս անցաւ երեք տարի — ոչ երեք դար,
 Եւ այրեցան ու մընացին անդեղ, անճար:

II

Երազ տեսաւ Սիամանթօն օր մը նորէն.
 Երազին մէջ իրեն եկաւ Խըճէ - Զարէն:
 «Սիամանթօ, երեք օրէն թէ չըհասնիս,
 «Խօսք տուր գոնէ, ուխտի կու գաս զերեզմանիս:»
 Ըսաւ աղջիկն ու հեռացաւ կարծես խրոտով,
 Սիամանթօն ելաւ յուզուած զերթ Վանայ Ծով.
 Ախտոն իջաւ, թամբեց նըժոյգը ու հեծաւ,
 Դեւի մը պէս գիշերուան մէջ անհետացաւ:
 Ու սիրտը դող, յաջորդ օրը իրիկուան մօտ,
 Մըտաւ տընակը պառաւիճմը անձանթօթ:
 Ու պառաւը զայն ընդունեց զաւկի մը պէս,
 Զին ալ կապեց ալուկի մը, քովի պարտէզն:
 «Մարէ» ըսաւ Սիամանթօն, «ի՞նչ է այս ծայնն,
 «Որո՞ւ համար է խընճոյքն այս, տառու-զուռնան:»
 «Մարէն մեռնի քու արեւուն» պառաւն ըսաւ,
 «Պէկի աղջկան հարսնիքն է այս որ ըսկըսաւ
 «Շարաթ մ'առաջ ... Արդէն պատրաստ է ամէն բան,
 «Աչքը ճամբուն դեռ կը սպասէ Խըճէն սակայն
 «Ուրիշ մէկուն ... Բայց վաղը ա'լ օրն է վերջին,
 «Խըճէ - Զարէն պիտ' հարս տանին Օմար պէկին:»
 Ու չինարի ծառի մը պէս Սիամանթօն,
 Ինքն իր վըրայ կործանեցաւ եւ ինկաւ հոն:
 «Մարէ, միակ յոյսըս դուն ես» ըսաւ տըխտօր,
 «Ծար մը գըտիր այս մատանին Խըճէին տուր:»
 Թաշկինակի մը մէջ չամիչ լեցուց պառաւն,

Տրդուն տրամ մատանին ալ մէջը դրաւ ,
 Ու մութին մէջ , զայն իրենին նուէր տարաւ :
 Հարսնիքի տուն՝ խօլամներն իսկ ամէնն հարրած ,
 Եւ հարսընցուն ալ առանձին սննեակն քաշուած :
 Կապուած էին պէկին բոլոր շուններն անգամ ,
 Որ հոն ազատ մրտնեն օտարն ու քարեկամ :
 Ու պառաւն ալ մրտաւ ազատ իրենին քով ,
 Եւ աղջիկը զայն ընդունեց տրխուր սիրտով :
 «Իրեն» ըսաւ , «այս ալ ինձմէ քեզի նուէր ,
 «Երեւոյ պառաւին իրտէն միայն այս է տրուել :»
 Թաշկինակը բացաւ իրենին , լուռ ու մըռայլ ,
 Ձամիչին մէջ մատանի մը կը շողշողար :
 Ու վերջուց զայն ու նայեցաւ աղջիկն անոր ,
 Գոյնը նետեց , ինկաւ բարձին հոն գրլխիկոր :
 Եւ վեր ցատկեց պառաւն իսկոյն ու պաղ ձեռքով ,
 Շոհեց ճակատը իրենին , նըստաւ իր քով :
 Բացաւ աչքերն աղջիկն երկար հառաչանքով :
 Համբուրելով յիշատակը կարօտագին ,
 «Մարէ» ըսաւ , «ո՛ր է տէրը այս մատնիկին :»
 «Աղջիկս» ըսաւ պառաւը , «հիւր է ան իմ տունն ,
 «Երբոր լըսեց լուրն հարսնիքիդ նետեց իր գոյնն ,
 «Ինկաւ գետին , փոթորիկէն կաղնի մ'ինչպէս ,
 «Հանեց մատէն այս մատանին ու զըրկեց քեզ :»
 «Ի՞նչ պատասխան տանիմ . խօսքը քուկդ է այլեւս »
 «Մարէ , ելիր , վերադարձիր շուտով , ըսէ :
 «Մէկ յոյս ունինք ու մէկ միջոց . թող ըսպասէ
 «Սիւսմանթօն գիշերը մօրըս շիրմին մօտ ,
 «Ուխտի պիտի երթամ ես հոն վաղն առաւօտ ,
 «Թող փախցընէ զիս , չըմբռնանք իրար կարօտ :»

III

Կէս գիշեր էր , Սիւսմանթօն երբ սիրակէզ ,
 իրենին մօր գերեզմանի գրմբէթէն ներս
 Մըտաւ . խաւար էր ամէն կողմ , միայն վերէն ,
 Պայծառ աստղը մը անվերջ աչք կ'ընէր իրեն :
 Եւ ըսպասեց երկար , դարձուց հին—հին յուշեր ,
 Գիշերն եղաւ բայց չըլուցող , տարի գիշեր :
 Մէկ ալ տեսաւ լուսաստղն լեռան գրլխին թառած ,
 Ուրիշ ոչինչ . . . յոգնութենէն ալ ըսպառած ,
 իրենին մօր շիրմին վըրայ քունն էր տարած :
 Ու նոյն պահուն պիտի մըտնէր գրմբէթէն ներս
 իրենին , թեթեւ ու թրուկոտուն այծեամի մ'պէս :

IV

Ու դամբանի մուտքին կեցաւ իրենին - Ձարէն ,
 Ներս նայեցաւ մոլոր , շուար ինչպէս երէմ :
 Սիւսմանթօն շիրմին վըրայ կը քնանար . . .
 Խօլամները կը սպասէին ըրուրէն վար . . .
 «Ա՛յս է սէրդ , այսպէ՞ս պիտի զիս փախցընես ,
 «Սիւսմանթօ , կըրակին հետ դուն խաղ կ'ընես» ,

Ըսաւ ու ետ դարձաւ Խրճէն սաստիկ յուզուած,
 Ու վար իջաւ Խրճէն վերջին ուխտն իսկ չըրած:
 Բայց երկու ճան թողուց աղջիկը, սիրտը խոց,
 Եւ շըշընչաց, «մանուկ ես դեռ, զընա փողոց,
 «Ու ճան խաղցիր. սիրոյ մարդ չես դուն, ա՛յ տըղայ,
 «Փողոցն իջիր, մանուկներու հետ ճան խաղա»:
 Երբ արթընցաւ Սիամանթօն, արեւն ելած,
 Վերէն, պայծառ երկինքէ մը կախուած էր ցած:
 Ճաներն առաւ Սիամանթօն, ամօթահար,
 Եկաւ պառաւ կընոջ ողբաց իր բախտը չար:
 «Մարէ, չեկաւ Խրճէն, միթէ խաբե՞ց զիս ան,
 «Քունըս տարած էր, արթընցայ ու գոյգ մը ճան
 «Միայն գըլտայ գերեզմանին վըրայ իր մօր»:
 Ըսաւ տըղան ու նըստեցաւ հոն գըլխիկը:
 Ու գըրպանէն երկու ոսկի ճաններ հանեց,
 «Ասոնք ալ քեզ՝» ըսաւ, պառաւ կընոջ յանձնեց:
 Պառաւն ըսաւ. «Ճանը լեզու ունի, տըղաս,
 «Խրճէն եկեր է ու դարձեր է վըշտացած,
 «Թողեր ասոնք որ վերցընես, իջնես փողոց,
 «Ու ճան խաղաս այնտեղ դուն հետ պըզտիկ տըղոց:
 «Խրճէն ըսել կ'ուզէ սիրոյ թէ մարդ չես դուն,
 «Թէ կըրակ է սէրը, չունի հանգիստ ու քուն»:
 Սիամանթօն ամօթահար ու շըւարուն,
 Նորէն պառաւ կընոջ դիմեց, «Ա՛խ, Մարէ, դուն
 «Ես իմ միակ ու վերջին յոյսս ու ապաւէն,
 «Մի թողուր որ Սիամանթօն սիրոյ ցաւէն
 «Գըլուխն առնէ, կորչի երկրէ երկիր անտուն,
 «Ելիր վերջին անգամ զընա Խրճէին դուն»:
 Ու պառաւը զընաց ու ետ եկաւ նորէն,
 «Տըղաս» ըսաւ, «այսպէս կ'ըսէ Խրճէ - Զարէն,
 «Վաղը առտու Օմար պէկին ես հարս կ'երթամ,
 «Եթէ քաջ է թող գայ տեղին, կըտրէ ճամբան,
 «Թող գայ ծիով, թող գայ սուրով ու նիզակով,
 «Թէ չէ գիտնայ Սիամանթօն որ գերեզման
 «Կ'իջնեմ վաղն իսկ ու կը մընայ ինք կարօտով»:
 Սիամանթօն մանուկի մ'պէս ուրախացաւ,
 Խընդութենէն գըրկեց պառաւը ու լացաւ:

V

Եւ ըսպասեց Սիամանթօն ճամբու գըլխին,
 Ճերմակ ծիուն վըրայ, նիզակը իր ձեռքին ...
 Հարսնեւորները մօտեցան պարով - երգով,
 Ու ծին քըշեց Սիամանթօն եւ ինչպէս հով,
 Ինչպէս մըրրիկ անցաւ - դարձաւ անոնց միջով:
 Կին ու աղջիկ, մարդ ու տըղայ իրար անցան,
 Ճիչեր, աղմուկ ու աղաղակ ... Խրճէն միայն
 Պահեց ինքզինքը սրտապինդ խուճապին մէջ,
 Կ'ելեւէջէր սիրտը թէ եւ կուրծքին տակ պերճ:
 Ու մօտեցաւ Սիամանթօն, Խրճէն առաւ,
 Անոր ծիէն իր նըժոյգի թամբին դըրաւ,
 Դըրկեց ու ծին դարձուց դէպի Սիփան թըռաւ:

VI

Ինչպէս քամի, դէպի Սիփան կը սրլանար
 Սիամանթօն, Խրճէն գիրկը ինչպէս բընար :
 Ետ նայեցաւ հեղ մը, տեսաւ ծիաւորներն
 Նետերու պէս իր ետեւէն կարծես լարուեր :
 Սեւ ծիաւոր մ'ինկած առջեւը ամենուն :
 Սիամանթօն ճանչցաւ Օմար պէկը իսկոյն :
 «Խրճէն» ըսաւ, «նրստէ քիչ մ'աս ծառի շուքին,
 «Դիտէ խաղըս ու քաջութիւնն սա բանակին,
 «Որ չըսեն թէ Սիամանթօն գողի մը պէս,
 «Փախցուց Խրճէն Սիփանն ի վեր, եղաւ անտես :»
 Ու նըստեցուց Խրճէն-Չարէն ծառի շուքին,
 Եւ համրոյրեց, շոհեց ճակատն իր նըժոյզին,
 Փոթորկի պէս կեցաւ դէմը Օմար պէկին :
 Ու ծիէն վար նետեց պէկը փետուրի մ'պէս,
 «Դընա, ապրէ» ըսաւ, «գարկիս արժանի չես :»
 Խօլամները տեսան վիճակն իրենց տիրոջ,
 Պաղ օծի պէս, վախը մըտաւ սիրտը անոնց :
 Ու դարձուցին ծիերն իրենց փախուստ տալու .
 «Ի՛նչպէս պիտի վաղն երեւնաք դուք կիներու
 «Առջեւ նորէն, գայլէ մ'փախչող դուք շուներու
 «Չագեր» ըսաւ պետը անոնց, ասպատակեց
 Իր ծին. ու տաս մարդով իսկոյն շըրջապատեց
 Սիամանթօն, որ գերթ մըրրիկ դարձուց իր ծին
 Եւ ամէնքը, մէկ վայրկեանէն, փրոեց գետին :
 Սարսափահար, միւսները թողին փախան,
 «Մարդ չէ» ըսին, «հողեղէն չէ այս, այլ շէյթան :»
 Ու յաղթական Սիամանթօն Խրճէն առաւ,
 Արծիւի պէս, սէգ Սիփանի լանջին թառաւ :

Շարունակիկ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

ՍՌԱՋԻՆ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Ինչ որ գրում ես միշտ այն չէ կարծես,
 Միշտ քիչ է անչափ սրտում եղածից,
 Հոգուդ կրակը հրկիզում է քեզ,
 Երգի մէջ փոքրիկ կայծեր են հազիւ :

Նայում ես կեանքին, նայում ես երգին,
 Ու երգը կեանքից այնքան է աղբատ.
 Ամենահարուստ երգը պոէտի
 Իր հոգու համար թարգմանիչ է վատ :

Բայց դու, ընթերցող, ջերմ ու երգասէր,
 Կը հասկանաս եւ փոքր այս կրակից,
 Թէ ինչեր եմ ես ուզում քեզ ասել,
 Թէ ինչու այդքան հարազատ ես ինձ :

Չէ որ չեմ կարող չհաղորդել քեզ՝
 Ցերեկն իմ դժուար, գիշերն իմ անքուն,
 Թէ բանաստեղծ եմ, թէ երգիչ եմ ես,
 Դու իմ առաջին ընկերն ես կեանքում :

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Փափաքով յամառ
Կը կանգնիս իմ դէմ,
Երգ մը քեզ համար
Կ'ուզես որ գրեմ:

Վաղուց է որ ես
Երգեր չեմ հիւսեր,
Եւ բառերով վէս
Չունիմ ես երգեր . . . :

Բայց տաղն այս փոքրիկ
— Սիրոյս հաւաստիք,
Բառերով գողտրիկ
Ու քեզի, բալիկ:

Հոգւոյդ մէջ բացուի
Բիւր երգ գարունի . . . :

Հասակըդ բարտի,
Իսկ աչերդ ծաւի
Ծովակ Սեւանի
Թող ըլլայ, օրդի:

Թող լեառը Մասիս
Ըլլայ հովանի,
Որ սրտէդ փախչի
Մրմուռն պանդուխտի . . . :

Տօնին, պայքարին
Ու վաղուան կեանքին
Հասունցընէ քեզ
Արեւն Հայրենի . . . :

ԶԱԼԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Կ'ԱՆՑՆԵՆ

Կ'անցնեն օրերը ռազմի
Եւ ծանր յուշ կը դառնան,
Թել-թել հիւսուած մեր մազին
Արծաթները կը մնան:

Ու կը մնան դաշտերում
Հողաթմբեր կանաչած՝
Մարտիկների սրտերում
Թանկ անուններ անմոռաց:

Եւ կը մնայ մեր երկրում
Յիշատակը մարտերի
Ինչպէս թախիժն աչքերում
Որդեկորոյս մայրերի:

Կ'ապրի յաւէտ, կը մնայ
Որդինքրով իր հպարտ,
Յաղթանակող ու անմահ,
Հայրենիքը մեր անպարտ:

ՀՌԻՓՍԻՄԷ ՊՕՂՈՍԵԱՆ



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵԻ) ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

ՅԼԳ.

Լըցեալ բարկութեամբ այնու, չարախօս լինէր զՅովսէփեան, առ դահճապետ այրն իւրեան՝ ներքինի անուն Պետափրեան:

ՅԼԴ.

Ձոր չհաւատացեալ կընոջն, զի զիտէր զՅովսէփի քաջազան, այլ վասն ասից աշխարհի՝ ետ տանել ի յարգելարան:

ՅԼԵ.

Դեղն Յովսէփայ վայելէր՝ Շուշանայ եւ Ասանեթայ, եւ ոչ պոռնկագործաց, այլ այնոց որ ողջ պահեցան:

ՅԼԶ.

Դարձցուք ի Յակոբ և յորդիսն՝ թէ որպէս սուզըն դիպեցան, երբ վաճառեցին զՅովսէփի՝ խորհեցան եղբարքն ամենայն:

ՅԼԷ.

Առեալ ուլ մի գննուին, թաթաւեալ զհանդերձն ի յարեան, տարեալ առ Յակոբ և ասնն. գազան չար եկեր զքո տըղայն:

ՅԼԸ.

Յորժամ զայն լըւաւ Յակոբ՝ սիրտ և աղիքըն մորմոքեցան, ասէր, վայ և եղուկ է ինձ. և արտասուօք լինէր լալական:

ՅԼԹ.

Ձիմ աչաց ըզոյսն առին, կոյր աչօք ես ինչ լինենամ, խաւարեցաւ իմ արեւն, ի խաւարն ես պանդըխտանամ:

ՅԼԺ.

Ով տայր ինձ կարօտելոյս զմարգարիտն իմ որ զօրանամ, իջանեմ սըզով ի հող, և ոչ ոք է իմ ըսփոփարան:

ՅԼՊ.

Յուդայ որդին չար գործեաց՝ թէպէտ էր ծընունդ բարութեան, զի կին հեթանոս էառ, բարիատեաց սիրող չարութեան:

ՅԼՐ.

Որ եւ զառաջին որդին նըւիրեաց ընծայ դիւական, ծընաւ նայ այլեւս որդիս՝ զէր, Սելովմ, այլ եւ ըզԱւնան:

ՅԼԳ. — 1. — Լցաւ բարկութեամբ կինն ժանդ, Խ. զՅովսէփայն, ԷթԺ:

ՅԼԴ. — 1. — Ոչ հաւատացեալ, Խ:

2. — այլ վասն խօսից ... զնա ի զընտան, Խ:

ՅԼԵ. — 2. — այլ նոցա, ԺԽ: ողջ, ողջախոհ, Թ:

ՅԼԷ. — 1. — թաթախեալ, ԻԽ:

ՅԼԺ. — 1. — զովանամ, 2:

2. — սփոփական, Խ:

ՅԼՐ. — 2. — զերսելով և զկրսեր Աւնան, 2. այլ և ըզՍնան, Է. զերսելով և զՍնան, ԸՅ. զերսելով զազնիւն ըզԱւնան. Ժ. զԱւնանայն, Ի. զերթ սելովմ զազնիւն զաւրայն, Խ:

ՅԾԶ.

Ընդ տակառապետն ասաց՝ հասանիս մեծ իշխանութեան,
ընդ մատակարարն ասաց՝ քո կենաց գիրքն ջընջեցան:

ՅԾԷ.

Յովսէփ կարճոգի եղեւ, առանց Տեառն ջանայր փութական,
ասաց ընդ տակառապետն, առ արքայն լեր ինձ բարեբան:

ՅԾԸ.

Եւ զի մոռացաւ յիշել՝ երկու բան է խորհրդական,
մին զի յուսացաւ ի մարդ, մին զի Տէր պահէր մեծութեան:

ՅԾԹ.

Ապա յետ երկու ամաց փարաւոն լինէր տեսական,
երազք արհաւիրք ահից, ահաւոր եւ զարհուրական:

ՅԱ.

Նիհարք եօթն երինջ ասէ, և եօթըն գէր կային միաբան,
նիհարքն ըզգէրըն կըլան՝ են յայտնի կենաց մահըւան:

ՅԱԱ.

Էած զդիւթըն կախարդօքն, եւ զհրմայքն եւ ոչ զիտացան,
և ապա յիշեցաւ Յովսէփ, վասն այն որ կայր յարգելարան:

ՅԱԲ.

Ասաց՝ նախ առատութիւն, եւ նըշան բազում լիութեան,
սով սաստիկ յետ այնորիկ՝ որ աշխարհս լինի ցիր եւ ցան:

ՅԱԳ.

Ասաց արքայն ընդ Յովսէփ, այդ ընդ քոյ է իշխանութեան,
որպէս եւ կամիս գործէ, համբարէ ամբար լիութեան:

ՅԱԴ.

Յովսէփ ժողովեաց ցորեան, եօթն ամեան լինել բաւական,
որպէս եւ Տէր մեր Յիսուս զիր մարմինն անըսպառական:

ՅԱԵ.

Յորժամ սկըսաւ բարկութիւնն՝ յերրորդումն ամին սպառեցան,
լըմաց այլ ուրեք ցորեան, եւ մարդիկըն նըշկահեցան:

ՅԱԶ.

Ապա լըեալ Յակոբայ թ յեգիպտոս միայն կայ ցորեան,
առաքեաց ըզտասն որդին, Բենիամին միայն կայր ի տան:

ՅԱԷ.

Գնացին յեգիպտոս հասան, եւ զՅովսէփ տեսեալ չգիտացան,
Յովսէփ ճանաչեաց զնոսա, շարժեցաւ գութն եղբայրական:

ՅԱԸ.

Թէ կամաւ թէ ակամայ, երազոյն բանքն լըրացան,
եղբօրն երկըրպագեցին եւ կամաւ յողջոյն մատուցան:

ՅԿ. — 2. — ըզգէրքըն, ԹԻ. յայնիչ,
պատմիչք, Ժ. եւ յայտնի կենաց մարդ-
կան, 2.

ՅԿԱ. — 1. — էած, եբեր, Ժ.

ՅԿԳ. — 2. — բարութեան, 2.

ՅԿԴ. — 2. — զմարմինն իւր մինչև յօ-
րտեան, Ժ.

ՅԿԵ. — 1. — յերրորդումն ամին սպա-
ռական, Ի.

2. — նուաղեցան, 2.

ՅԿԷ. — 1. — Գնացեալ, Թ. հասին, Ժ.
հասան յեգիպտոս, Խ. չգիտացան, ոչ ծան-
եան, Խ.

2. — տեսեալ զնոսա Ովսէփ, ... Խ.

ՅԿԹ.

Ասաց թէ լըրտես էք դուք, եւ նոքա յոյժ զարհուրեցան,
 ւ առաքեաց զնոսա ի բանտ, զի լիցի նոցա քաւարան:

ՅԷ.

Շըմաւոն որ խիստ ջանայր, Յովսեփայ դիպող կորըստեան,
 վասըն այն ըզնա խիստ նեղէր, լինելով պատմառ թողութեան:

ՅԸԱ.

Ի տուն մըտանէր Յովսէփ, ւ առանձին լինէր լալական,
 ւ արտաքս ելեալ հարցանէր զհայրն եւ զմայրն եւ զտունն ամենայն:

ՅԸԲ.

Ասաց թէ բերէք այսրէն ըզԲենիամին սիրական,
 զկարիս տան ձերոց լընում եւ լինիմ ձեզ ասպընջական:

ՅԸԳ.

Գնացեալ ասեն Յակոբայ, զոր տեսին եւ յորմէ լըւան,
 Յակոբ կարծիս իմն առեալ եւ յիշեաց զերազն յովսէփեան:

ՅԸԴ.

Դարձեալ պատրաստէր ընծայ՝ ըռետին քաղցրը հաշական,
 արմաւ կամ զազպէն ասեն, կամ պըտուղ ծառոց բուսական:

ՅԸԵ.

Յանձն առնու զԲենիամին Յուդայի ւ էրէց Թուբինայն,
 յայնժամ մետասանք նոքա ի յուղի անկեալ չընեցան:

ՅԸԶ.

Հասին յեզփպտոս յուսով, Յովսեփայ կըրկին դիպեցան,
 ետես եւ զԲենիամէն, ւ ի ծածուկ լինէր խնդական:

ՅԸԷ.

Սկիհ հարկանէր մատամբ, եւ խանդաղատէր ցընծութեամբ,
 լընոյր ըզկարիս նոցա, եւ խոստում նոցա լըրացան:

ՅԸԸ.

Ջսկիհըն պահէր կամաւ ի բեռին Բենիամենեան,
 ւ յետոյ որպէս գող պատժեալ, եւ կալեալ ի յարգելարան:

ՅԸԹ.

Ջոր Յուդայի աղաչեալ՝ սուտ ասէր զլըումն Յովսէփեան,
 ասէր, ես փոխան դորայ, արծակեա զդա հօր սփոփարան:

ՅԿԹ. = ՅԸԱ, Ժ:

1. — յոյժ, խիստ, և:

ՅԷ = ՅԿԹ, Ժ:

1. — Խիստ, շատ, ՋԹԽՅ. որ խիստ, ա-
 ռաւել, Ժ. դիպող, հնար, ԺԽ:

2. — այն, այնոր, Ժ. լինել, Ի:

ՅԸԱ = ՅԷ, Ժ:

ՅԸԳ. — 1. — Գնացին Յակոբայ ասցին,
 Ժ:

2. — Յովսեփայն, ԹԺ:

ՅԸԴ. — 1. — Ըռետին, ուտելին, Ժ.
 հաշական, ՋԹ:

2. — զազպէ, և. զազպէն ասեն, շա-
 քար մեղրով, Ժ. բուսական, զանազան, Ի:

ՅԸԵ. — 1. — առնէ, Ժ:

ՅԸԶ. — 1. — յուսով, փութով, և:

2. — ետես եւ ուրախ եղև եւ լինէր ծա-
 ծուկ խնդութեամբ, Ժ. խնդութեամբ, Ը:

ՅԸԷ. — 2. — լնէր... խոստումնք, Ժ:

ՅԸԸ. — 1. — որ Բենիամինայն, էԺ:

ՅԸԹ. — 1. — զլըումն, Թ. Յովսե-
 փայն, Ժ:

2. — արծակեայ հաւրն է սփոփարան,
 և. զդա հօր, զհաւրն, Ժ:

62.

Առեալ այնու ըզնոսա, եւ մըտուցանէր յապարանն,
ասէր մի ըստ միողէ ընդ նոսա զեղեալսն ամենայն:

62Ա.

Կոչէր յանուանէ զնոսա, եւ նորա յոյժ զարհուրեցան,
ասաց թէ ես եմ Յովսէփ, եւ լալով յողջոյն մատուցան:

62Բ.

Ջայս լըեալ եզիպտացւոցն՝ ստուգութեամբ եւ զիրսն ծանեան,
եղբարքն Յովսէփայ եկին, եւ նորա եւս ուրախացան:

62Գ.

Երթեալ պատմեն արքային, փարաւոն լինէր խընդական,
ւ առաքեալ զնոսա տարաւ, եւ խըլայս ետ թագւորական:

62Դ.

Ի գալն Ուսուֆի ասէ, մեզ բարիք է անհասական,
որչափ ի գալն բազմաց իմ քաղաք ւ երկիր լիանան:

62Ե.

Առաքեաց ուղտ եւ ջորի, բեռնաբարձ տանն Իսրայէլիան,
եկեալ եւ տարան զՅակոբ, երազունքն հաստատեցան:

62Զ.

Տեսեալ Յակոբայ զՈւսուֆ՝ խաւարեալ աչքն լուսացան,
ասէր, մեռանիմ այժմիկ, ոչ է մահ այլ աւր խընդութեան:

62Է.

Տեսեալ զփարաւոն Յակոբ եւ աւրհնէր լինէր զոհական,
փարաւոն հարցեալ զՅակոբ եւ զկենաց աւուրց լիութեան:

62Ը.

Ոչ եթող զնոսա անզորձ, զի պարապ մայր մեղադրական,
կացոյց ըզնոսա հովիւ, արածել զհաւտն արքունական:

62Թ.

Յետ եօթնեւտասն ամաց, նախահարց ուխտըն լըրացան,
եղև սուրբ հօրըն կոչումն, ժամանեաց աւրըն մահրան:

63.

Բազմեալ յանկողնոյն արտաքս, ւ ի ձեռինն ունէր գաւազան,
աւրհնեաց ըզՅովսէփ որդովքն, զոր աւրհնեաց Աստուած պետական:

63Ա.

Բայց իսկ երեքեան որդիքն ի հօրէն անէծս ընկալան,
Ռուբէն, Շըմաւոն, Դեի, մեղուցին ւ անպատշաճական:

62. — 1. — Առեալ այնու ըզնոսա, Կոչէր յանուանէ զնոսա, 2. զնոսա այնու, Խ. 62Ա. — 1. — Կոչէր յանուանէ զնոսա, Առեալ այնու զնոսա, 2. զնոսա անուանէ, Խ.

62Բ. — 1. — եւ զիրսն ծանեան, զիրսն գիտացան, Ժ.

62Գ. — 1. — պատմեաց, Ժ.

2. — Չունի, Ժ.

62Դ. — 1. — Իւսուֆին, 2. Յովսէփայ ասէր ինձ բարիք է անհատական, Ժ. Յովսէփին ասէր, Ի. Ովսէփայ, Խ.

2. — որչափ, նոյնչափ, Ժ.

62Զ. — 1. — զԻւսուֆ, 2. զՅովսէփ, Խ. Տեսաւ Յակոբ զՅովսէփ՝ խաւար աչքն լուսով լցուան, Ժ. զՈվսէփ, Խ.

62Է. — 1. — Տեսաւ, Ժ.

62Ը. — 1. — մեղադրութեան, Ը.

62Թ. — 1. — տասն և եօթն, ԹԵ.

2. — ժամանեալ եհաս վաղճան, Ժ.

63Ա. — 1. — իսկ, և, 2.

ՅՂԲ.

Ապա ութեքին որդիքն նըշկահեալ յոյժ զարհուրեցան,
այնպէս գիտացին նորա նոյն գունակ առ ամենեսեան:

ՅՂԳ.

Այնու սկըսեալ ի Յուդա, աւրհնելով զըզւէր գովութեամբ,
առիւծ, կորիւնդ առիւծոյ, զքեզ աւրհնեն եղբարքդ ամենայն:

ՅՂԴ.

Անպակաս ի քէն արքայ, յերանաց քոց իշխանական,
տեսանէր ի նա զԲրիստոս, Աստուած եւ մարդ միական:

ՅՂԵ.

Ասէր, ծընանի զաւակ, յորդոց քոց Բանըն հայրական,
որ իւրն է արքայութիւն, եւ երկինք ւ երկիր սեպհական:

ՅՂԶ.

Աւրհնեաց եւ զայլ եւս որդիսն, բաժանեաց զերկիրն ամենայն,
զԲանան եւ զՊաղեստինէ, որ է այն երկիր Հրէաստան:

ՅՂԷ.

Պատուէր ետ որդւոց իւրոց՝ զնա տանել յայրին Սիկիմեան,
առ Աքրահամ, ւ Իսահակ, ի պատճառս որդւոց զալըստեան:

ՅՂԸ.

Իարծաւ անդրէն ի մահիծան եւ հատոյց զպարտսրն հայրական,
աւանդեաց զհոգին յուսով, եւ եղաւ առ հարսն ի տապան:

Փոխէ զձայնն

ՅՂԹ.

Յաւարտման այսրմ բանիս շարադրական,
Որ յովովից եւ ի բազմաց կարմ գըրեցան,
Վայելէ Հօրն անեղին ւ անըսկըզբան,
Անեղ Որդւոյն որ է ծընունդ Հօր բընութեան.

Ն.

Նոյնպէս եւ Հոգւոյն Սըրբոյ անճառական,
Երգեսցուք փառք եւ պատիւ այժմ յաւիտեան:
Եւ զանարժան եւ զեղկելիս Թափառական,
զԹուլգուրանցիս միշտ յիշեցէք հարք պատուական:

(24)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

< Վ Ե Ր Զ >

ՅՂԶ. — 2. — երկիր, ինքն, 2. և աշխարհ է այն Հրէաստան, Ժ. որ է այն իսկ Հրէաստան, Ի:

ՅՂԷ. — 1. — ես, տայ, Ժ. յայրըն Սիկիմայն, Թ. Սիկիմայն, 2Խ. Սուքեմայն, Ժ:

ՅՂԸ. — Ն, Խ:

Փոխէ զձայնն, չունին, 2ԹԺԻ:

ՅՂԹ. — 2. — որ, չունի, Ժ:

Ն. — 1. — Նոյնպէս եւ, Անքննայպէս, Ժ:

2. — զփառս և զպատիւ, Ժ:

3. — զանարժանս, 2. Թափառական, Ը: Սրբաբանեալ ի հրէատակաց և ամենայն ազգի մարդկան, Խ:

3-4. — Սրբաբանեալ ի հրէատակաց և ամենայն ազգի մարդկան, և զգծողս յիշեալ ի Տէր ամէն, Ժ:

4. — զՀալպցի Ամերչահ և ծնաւդսն իմ միշտ յիշեցէք հարք պատուական, 3. — Զեռագրիս գրիչն և Ամեբեան սրկ. Հալպցի:

ՊԱՏՄԱՆԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՈՆՏԵՐ ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐԻԱՐԺԻ

Գրիգոր Պարոնտէր ծնած է ԺԶ. դարու երկրորդ կիսուն սկիզբները մօտաւորապէս, Գանձակի Սպիտակաշէն գիւղին մէջ։ Հայրը կը կոչուէր Մարգար, մայրը՝ Թուրվանտա։ — Աղաւնուէր, Միաբանք, էջ 81։ Պողարեան, Գ., էջ 200։

Փոքր տղայ հասակին թոնիրի մէջ կ'իյնայ բայց ալիւնէ կ'ազատի, ատոր համար ծնողքը զինքը նուէր կը խոտանան Երուսաղէմի։ — Պողարեան, Գ., էջ 201։

«Եւ մինչդեռ սա տղա գոլով, ծնողքն փոխեցեալ եղեն առ Քրիստոս. և սա՛ ի քահանայից և յազգականաց իւրոց լուեալ զտիւթիկ [= ուստ] ծնողացն և փութայր կատարել. երբեմն փոքր հասակին ի յայլոց բերեալ յերուսաղէմ զուստն կատարեալ և դարձուցեալ առ հայրենիսն»։ — Նոյն, անդ։

1581. — «Եւ յորժամ եհաս ի տիս մանկութեան կամեցան մուծանել զնա բռնութեամբ ի կարգ աշխարհի։ Դարձեալ մտածեալ զտիւթիկ ծնողաց և յամենայնէ հրաժարեալ դարձաւ կրկին առ Սբ. Քաղաքն Երուսաղէմ Ռէթուն հայոց մտաւ ի սպասաւորութիւն Սբ. Երուսաղիմայ ժամանակ ինչ մնացեալ»։ — Նոյն, անդ։

Եւ յետոյ Ս. Պետրոս և Ս. Պողոս Առաքեալներու գերեզմաններուն ուխտի կ'երթայ։ — Նոյն, անդ։

«Եւ անտի դարձեալ եկն յազգս և յաշխարհս հայոց. և աշակերտեալ սրբասէր և աստուածաբան Կարկառցի Պետրոս Վարդապետին, որ եղև նա Կաթողիկոս Կիլիկիոց հայոց մասին»։ — Նոյն, անդ։

«Զոր տեսեալ նորա զքաջութիւն սորա ի գործս հոգեւոր և մարմնաւոր, մինչդեռ ոչ էր առեալ աստիճան ինչ յեթանցն կարգաց, կացոյց զնա ի վերայ մասնաւոր բանից Սբ. Երուսաղիմայ»։ — Նոյն, անդ։

Որովհետեւ, ինչպէս որ ասոր անուանակիցը, մեր Լուսաւորիչը, առանց աստիճան ունենալու մեր ազգը քրիստոնէական հաւատքին դարձուց և յետոյ կարգ ստացաւ,

նոյնպէս այս ալ տակաւին աստիճան չառած շատ քանք և քաջութիւն ցոյց տուաւ, և Երուսաղէմի պարտքը բաւական թիւեցուց։ — Նոյն, անդ։

Իր քաջողակ գործունէութիւնը տեսնելով «Ետուն նմա զաստիճան աւագ սարկաւագութեան վերոյ ասացեալ Պետրոս սրբանեալ կաթողիկոսն, ամենայն մեծամեծովք հայոց, և Դաւիթ արքեպիսկոպոսն Սբ. Երուսաղէմի, և յանձնեցին ի նա դամենայն հոգսն Երուսաղէմի»։ — Նոյն, անդ։

Իր այդ շրջանի գործունէութեան մասնաւորապէս թիւնները չեն պատմուած։ Նա, զարէթ զպիր ունի համառօտ յիշատակութիւն մը, գրուած 1610 թուին, ըստ որուն Գրիգոր տաս տարի աշխատեցաւ Երուսաղէմի վանքին պարտքերէ ազատումին համար։ «Եւ առաքեաց նամակս ամենայն երկիր, ի Վան, և ի Զուղայ, ի Հալապ, և ի Ամիթ, յԼստըմպօլ, և ի Լախ, և ինքն գնալով Հայաստանս բազում անգամ»։ — Նոյն, էջ 194։

Մինչև հոս, Պարոնտէրի կեանքին և գործերուն մասին ճշգրիտ թուականներ չեն տրուած, բայց ասկէ սկսեալ, կատարածներէն շատերը կարելի է դասաւորել յաջորդաբար, այսպէս։

1604. — Ս. Փրկչի վանքը և պարիսպները ամբողջովին կը նորոգէ։ — Նոյն, էջ 195։

1606. — Գրիգոր «յայնմ ժամանակին մօնողոն էր և լուսարար Ս. Յաքութեանն»։ — Դարանազցի, էջ 102 և 389։

1608. — Ս. Հրեշտակապետաց վանքը կը նորոգէ։ — Պողարեան, Գ., էջ 195 և 202։

1610. — «Եւ յեա յայտրիկ ամենեցուն միաբանութեամբն հանին զԴաւիթ յառաջնորդութենէն և եղին զայս Գրիգոր Եպիսկոպոսն, որ յայնմ ժամանակին դեռ մօնողոն արեղայ էր, և քահանայ օրհնեցին և ի տեղի Դաւիթն եղին, ոչ վասն ուսման աղաղաւ, այլ կարի յոյժ առաւել խոտակրօնութեան, անկեր և անխուժ գոլոյն, որ մինչև ցայսօր նոյնպէս կայ և է. և շինարար և հնարագէտ է և սրտապինդ և լեզուազար և անվեհեր ընդդէմ ամենայն հակառակորդաց, յաղագս որոյ ընտրութեամբ եղին»։ — Դարանազցի, էջ 327։

Այսպէս, նոյն թուականին պատկանող յիշատակագրութեան մը մէջ կը կարդանք

«Ի Հայրապետութեան Սրբայ Տէր Յովանէս կաթողիկոսին, և յառաջնորդութեան Տէր Դաւիթ արհեպիսկոպոսին, և վերակացութեան Սր. Երուսաղիմայ Գրիգոր հէրպետին. ի յայսմ ամի ազատեցաւ Սր. Աթոռն Հայոց ի պարտուց ի թվականին հայոց Ռ և Եթ». — Պողարեան, Բ., էջ 129:

Ո՞վ քահանայ ձեռնադրեց Գրիգոր սբր. կառաքը: — Դարանաղցիին գրածը անորոշ է. «և քահանայ օրհնեցին»: Կիւլէտէրեանի կարծիքով, «որովհետեւ Կարկառեցին վախճանած էր 1608ին, Պարոնէր քահանայ ձեռնադրուեցաւ Դաւիթէն 1610ին» (Պատմ. Կաթ. Կիւլ., էջ 259): Այս կարծիքը ձիշդ է սակայն: Կարկառեցիին տեղ Կիւլիկոյ կաթողիկոս Յովհաննէս Անթէպցի կատարած է Գրիգորի քահանայական ձեռնադրութիւնը, ինչպէս կը ցուցնէ հետեւեալ յիշատակարանը, գրուած նոյնինքն կաթողիկոսին ձեռքով. «Եւ Յովհաննէս Կաթողիկոսս որ շնորհեցի զԿանոնգիրքս հոգևոր որդոյս իմոյ Տէր Գրիգոր առաջնորդին Սր. Երուսաղիմայ, և ինձ անջինջ յիշատակ ի դուռն Յակովբայ: Ի թվին Ռ և ԿԱ = [1612]: Լաւ պահողքն աւրհնին յԱստուծոյ և յամենայն սրբոցն և ի մէնջ, ամէն» (Ձեռ. Ս. Յ. թիւ 3102, թկ. Թեթ = 1600, էջ 545):

1611. — Ս. Փրկչի վանքը կրկին նորոգեց, պարսպը բարձրացուց, երկաթէ դուռ շինեց, միարանութիւն կազմեց և ժամակարգութիւն հաստատեց. — Պողարեան, Գ., էջ 195:

1613 Ապրիլ 5. — Եպիսկոպոս կը ձեռնադրուի էջմիածնի Աւետիս աթոռակից Կաթողիկոսէն, Ս. Յակոբեանց Տաճարին մէջ, Երուսաղէմ. — Լեհացի, էջ 279, ծնթ.: Կիւլէտէրեան, էջ 327 և ծնթ.: Պողարեան, Գ., էջ 202. — Այդ առթիւն Աւետիս Կաթողիկոսի գրած կոնդակին պատճէնը հրատարակած է Հ. Ն. Ակինեան. Մովսէս Տաթևացի, 1936, էջ 63-67:

— Ս. Յակոբեանց վանքը ամբողջովին կը նորոգէ. — Պողարեան, Գ., էջ 195: Հմմտ. նոյն, էջ 202. «Գի ոչ Ֆնաց բնաւ տեղ և տուն, որմ և կամ քար որ ոչ հասին բազուկ և մատք ձեռաց նորա, զի ամենայն վերստին զարդարեաց և նորոգեաց»:

1614. — Վանքին պատկանող և գրաւի դրուած թանկագին զգեստներ և անթիւն կ'աղատէ. — Պողարեան, Գ., էջ 195:

— Ս. Փրկչի գերեզմանատան սեփականութեան դատը կը շահի. — Տէր Յովհաննէսեանց, Ա., Հատոր, էջ 288, Ազատունի, Հայկ. Հին Վանքեր, էջ 90:

— Կ'ընդունի խնդակցական այցը Կիւլիկոյ Յովհաննէս Անթէպցի Կաթողիկոսին, որ Ս. Յակոբեանց Տաճարին մէջ կը կատարէ միւսոնի օրհնութիւն. — Սաւալանեանց, էջ 570:

1615. — Արքունի հրովարտակով կը պաշտպանէ Հայոց իրաւունքները Ս. Ծննդեան Այրին մէջ, ընդդէմ Լատինաց. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 292:

— Կը հիւրասիրէ Լեհացի Սիմէոն Դալրը և անոր զրեղ կու տայ այլ և այլ շրջաբերական թուղթեր (Ռեզիդուցիւն, էջ 252): Լեհացին սապէս կը նկարագրէ Գրիգոր Պարոնէրը. «Այլ մեծ, յաղթանդամ և հրեկայածն, սրբասնեալ և եօթնարփի շնորհօք լցեալ՝ զարդարեալ ներքին և արտաքին մարդով, այս է հոգեկանաւ և մարմնակա՛նաւ, նմանեալ Գրիգորի Լուսաւորչին անուամբ և գործովք» (նոյն, էջ 274):

1617. — Օրինաւոր դատաւարութեամբ կը պաշտպանէ Պատանատեղւոյն վրայ Հայոց իրաւունքը. — Սաւալանեանց, էջ 571-2:

1618. — Ս. Փրկչի վանքին մէջ նորոգութիւններ կը կատարէ. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 295:

1619. — Կը պաշտպանէ Հայոց իրաւունքները Ս. Ծննդեան Այրին մէջ ընդդէմ Լատինաց. — նոյն, էջ 296:

1621. — Ս. Ծննդեան Այրին մէջ Հայոց պատկանող իրաւունքները կը վերահաստատէ ընդդէմ Լատինաց. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 300-301: Սաւալանեանց, էջ 573:

— Կը նորոգէ Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքին և եկեղեցւոյն մէջ Հայոց սեփական բաժինը: Վանքը կ'ընդարձակէ և կը ճոխացնէ նորանոր շինութիւններով և Ս. Աստուածածին եկեղեցիին արտաքին դրան ճակատը կը զետեղէ հետեւեալ յիշատակարանը. «Եւ Գրիգոր Եպիսկոպոս, որ եմ առաջնորդ Ուրբ Երուսաղէմի, նորոգեցի ի Ս. Ծնունդն զվիճակ Ազգիս մերոյ ՌՀ (1621) թվին, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողացս, ի վայելուքն և ի պարծանս Հայոց. որք տեսանէք լի սրտիւ ասացէք, Աստուած ուղորմի, և Տէր ձեզ ողորմեսցի, ամէն».

Պալեան, էջ 338: Աղաւնունի, Հայկ. Հին Վանքեր, էջ 246:

Պարոնտէր Կ. Պոլիս գացած է:

Ըստ Օրմանեանի՝ Պարոնտէրի «անձամբ Կ. Պոլիս եկած ըլլալը ստուգուած չէ» (Աղգապատում, էջ 2395): Այժմ ունինք սակայն վկայութիւն մը թէ Պարոնտէր 1621ին Կ. Պոլիս կ'երթայ և Սուլթան Օսման (Բ)էն հրամանագիր կ'առնէ «զի մի ոք հակառակ կայցէ յառաջ և յետոյ եղեալ չինուածոցն» — Պողարեան, Գ., էջ 202:

1624. — Հաննէ Վարդապետի Պատմութեան մէջ կը կարդանք թէ Գր. Պարոնտէր ի Հալապ շինեաց Հոգեւորն մի մեծամեծ գորպասու յիջեան ուխտաւորաց» (էջ 300): Ըստ Սիւրմէեանի՝ հետեւեալ արձանագրութիւնը կը մնայ անդ մինչև այսօր. «Ձառաջնորդութեամբ Սուրբ Աթոռոյն Երուսաղէմի Գրիգոր Արքեպիսկոպոսի, կամաւքն Աստուծոյ շինեցաւ Հոգեւորն Սուրբ Երուսաղէմի յիշատակ Սրբոյն Յակոբայ և յիշատակ Վանցի Խոճայ Ղարիպջանին, որոցն Թումաջանին, Դիւսնջին, եղբորն Յովասափին, որոցն Ամիրխանին, Սարուխանին և թոռներն(?) Դաւիթին, Սաքնարին, Մարիամին, Նազարին, Ղազարին: Թ՛՛՛՛ Ռ՛՛՛՛ 1624» — Պատմ. Հալէպի Հայոց, Գ. Հատոր, Փարիզ, 1950, էջ 95:

1626. — Դարանաղցի կը գրէ թէ Ռշեթվին, Զատիկ Ճրագաւոյցին «Գրիգոր Եպիսկոպոսն ոչ էր անդ» (էջ 244), այսինքն Երուսաղէմ: Ո՛ւր գացած էր, Կ. Պոլիս, ինչպէս ունի նաև Տէր Յովհաննէսեանց (էջ 306), որուն համաձայն չէ սակայն Հ. Գ. Դալէմբերգեան (Հանդ. Ամս., 1911, էջ 13):

1627 Օգոստոս 16 = Վ. Գ. Զիւհիճճէ — Դատարանի առջև կը հաստատէ թէ Ս. Յակոբեանց վանքը Հայոց դարաւոր սեփականութիւնն է. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 306:

— Դաւիթ Եպս. Վերապետի՝ Արքեպիսկոպոսի իր նուիրակին միջոցաւ կը ստանայ Խոճա Զիրաքի նուիրած ձեռագիր թանկագին Աստուածաշունչը (թիւ 1925). — Աղաւնունի, Միաբանք, էջ 107:

1631 Յունուար 1 թուականը կրող կոնդակով մը կը սահմանէ բարեպաշտ ուխտաւորներու գարպասական տուրքը ի պայժաութիւն Ս. Ծննդեան վանքին. — Սաւաւանեանց, էջ 574 ձեթ.:

— Շինել կու տայ Ս. Յարութեան գաւիթը գտնուող Ս. Յովհաննէս մատրան կամարները. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 311: Պողարեան, Գ., էջ 202:

1632. — Ս. Յարութեան վերնատան մէջ Բ. Գողգոթայի մատուռը կ'ընդարձակէ երեք կամարներ առնելով Լատիններէն, և փոխարէնը անոնց տալով երգեհոնին կից երկու խուցերը և պարսկերէն վրայի երկու կանթեղներէն մին. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 311-2: Հմմտ. Պալեան, էջ 176, ուր թուականը նշանակուած է 1631:

1634. — Աջակցութեամբ արքունի հանդերձապետ Բաղիշեցի Աւետիքի Մոսկովի խոսովութեանց առաջքը կ'առնէ և Զատիկը կը կատարուի խաղաղութեամբ. — Օրմանեան, Աղգապ., յոգ. 1671: Սաւաւանեանց, էջ 575-580: Սիւրմէեան, Յուսէպ Զեռ. Երուսաղէմի, Ա., էջ 123-4:

— Մոսկովի վէճին առիթով Հայոց իրաւունքները պաշտպանելու համար կ'երթայ Բերիա (Հալէպ), ուր կը գտնուէր մեծ վէճերը այն ատեն, և իր ձեռքը ունեցած դատական գրեթէ զօրութեամբ կը յաջողի ի դերև հանել Յունաց ամբաստանութիւնները. — Դարանաղցի, էջ 255: Սաւաւանեանց, էջ 580-581:

— Հաւանաբար անկէ անցած է Համիթ, վանքի նոյն տարին անդ գրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ կը կարդանք. «Եւ յայսմ ամի որ Սուրբ Աւետարանս աւարտեցաւ, աստ հանդիպեցաւ սրբազան հայրապետն Գրիգոր վանն ողորմութիւն խնդրելոյ Սուրբ Երուսաղէմայ» — Արուանձտեանց, Թ. Աղբար, Բ., էջ 432:

— Վերագործին կը շինէ Ս. Փրկչի վանքին պարիսպները, գիշերային յարձակումներէ զերծ պահելու համար վանքին միաբանները. — Աղաւնունի, Միաբանք, էջ 82:

1636. — Ս. Յարութեան Տաճարին մէջ յաճախակի պատահող վէճերը խափանելու համար Երուսաղէմի դատաւորէն կը յաջողի գիր մը առնել ուր նշանակուած էին Հայոց անդ ունեցած բոլոր սեփականութիւնները և իրաւունքները. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 325:

1637 տարուան աշունին, Երուսաղէմի մէջ քահանայ կը ձեռնադրէ Քէօմիւրճեան Մարտիրոսը. — Մ. Ա. Նշանեան, Օրագրութիւն Ե. Զ. Քէօմիւրճեանի, 1939, էջ 48:

1638. — Կը միջնորդէ էջմիածնի փլիզպոս և Սիսի Սիմէոն կաթողիկոսներուն միջև գոյութիւն ունեցող վէճերը հարթելու և եկեղեցական անկարգութեանց առաջըք առնելու համար. — Սաւալանեանց, էջ 587-8:

1641. — Պեթճալա գիւղին մօտ կը գնէ այգիներ և ձիթատաններ, որոնք այժմ ծանօթ են իր անունով. — Պոտուրեան, էջ 552: Պողարեան, Գ., էջ 203:

— Կը գնէ Խիկաթի տղայոց տունը. — Պողարեան, Գ., էջ 204:

— Ս. Յակոբեանց վանքին մէջ շինելու տայ Յորենաթաղ կոչուած թաղը (Հաննէ, էջ 96: Սաւալանեանց, էջ 575), ինչպէս նաև Շորաթաղը՝ իր ներքևի խանով. — Ուղեցոյց, 1910, էջ 392:

— Ս. Փրկչի վանքին պարիսպը նորոգելու տայ և չորս անկիւններուն պահպաններ կը կարգէ. — Սիւրմէեան, Յ. Զեռ. երուսաղէմի, Ա., էջ 197:

1642. — Կը կառուցանէ Վէլիճէ գիւղի աղբիւրը. — Աղաւնունի, Միաբանք, էջ 82:

? — Կը վերանորոգէ Դամասկոսի Ս. Սարգիս վանքը. «Եւ յաւել ի նա բազում իցերս և իջեան ի ցամաքէ եկեալ աէրունական ուխտաւորացն». — Հաննէ, էջ 300:

1645. — Արքայական հրովարտական հաստատելու կու տայ Հայոց իրաւունքները Ս. Մնեղեան Այրին մէջ. — Տէր Յովհաննէսեանց, Ա., էջ 329-330:

— Ծառոց մը գրելու կու տայ ի յիշատակ իր ծնողքին, եղբայրներուն, քոյրերուն և բոլոր ազգականներուն. — Սիւրմէեան, Յ. Զեռ. երուսաղէմի, Ա., էջ 104:

— Աստուածատուր Վարդապետը կը նշանակէ Առաջնորդ երուսաղէմի. — Նոյն, անդ: Հմմտ. Պողարեան, Բ., էջ 151:

— Սեպտեմբեր 10 Դշ. (Ազգպ., էջ 5529) օրը կը վախճանի և մարմինը կ'ամփոփուի Ս. Փրկչի վանքին գաւթին մէջ. — Աղաւնունի, Միաբանք, էջ 82: — Տապանագիրն է.

Այս է պատրիարք Գրիգոր Պարոնտէր, Այր բազմապատակ բարեաց բարեսէր, Բազում նեղութեանց աշխատըս ածէր, Գեղեցիկ վարուց օրինակ լինէր⁽¹⁾. Մեծ անուն թողեալ աշակերտ կարգէր, Իւր բարի կրօնից ընտիր հոգեսէր,

Ամբաստանէորս հայրապետ նստէր⁽²⁾, Բազում գեղեցիկ կանոն յօրինէր⁽³⁾:

1645 ՌԴԴ

Սաւալանեան հետեւեալ գեղեցիկ տաղերով կը փակէ Պարոնտէրի պատմութիւնը. «Իր ամէն գործերուն թագն ու պսակն էր իր անբիծ առաքինութիւնն ու սրբասուն կեանքը, որուն համար սիրուած էր բոլանգակ ազգէն, ու ամէն բերան պարծանքով կը յիշէր անոր անունը: Գրիգոր Պարոնտէր օրինակ ու հայելի մնացած է մինչև այսօր ու պիտի մնայ յաւիտեան ամէն անոնց որ ժառանգեցին ու պիտի ժառանգեն երուսաղէմի Առաքելական Աթոռը» (էջ 593):

Մտնեալքութիւն. —

1. — Հաննէ Վրդ., Պատմութիւն երուսաղէմի. Դ. Տպ., Կ. Պոլիս, 1807:

2. — Ա. Եպս. Տէր Յովհաննէսեանց, Ժամ. Պատմ. Եէմ.ի, երուսաղէմ, 1890:

3. — Տ. Վրդ. Պալեան, Սուրբ Երկիր, Կ. Պոլիս, 1892:

4. — Մ. Ա. Յրմանեան, Ազգապատմ., Կ. Պոլիս, 1914:

5. — Գր. Դարբանդցի, Ժամանակագրութիւն, Հրատ. Մ. Ե. Ն., երուսաղէմ, 1915:

6. — Մ. Ե. Աղաւնունի, Միաբանք և Այցելութ, երուսաղէմ, 1929:

7. — Տ. Զ. Թ. Սաւալանեանց, Պատմ. երուսաղէմի, Թրգմ. Մ. Ե. Ն., երուսաղէմ, 1931:

8. — Մ. Ե. Աղաւնունի, Հայկ. Հին Վանքեր, երուսաղէմ, 1931:

9. — Ս. Դպիր Լիհացի, Ուղեգրութիւն, Հրատ. Զ. Ն. Ա., Վիեննա, 1936:

10. — Զ. Մ. Վ. Պոտուրեան, Հայ Հանրագիտակ, Պուքրէշ, 1938:

11. — Բ. Ա. Կ. Կիւլէսէրեան, Պատմ. Կաթ. Կրկնիկոյ, Անթիլիաս, 1939:

12. — Ա. Ա. Սիւրմէեան, Յուցակ Զեռ. երուսաղէմի, Ա. Հատոր, Վենետիկ, 1948:

13-15 — Ն. Ե. Պողարեան, Յուցակ Զեռ. երուսաղէմի, երուսաղէմ, Բ. Հտոր, 1953, Գ. Հատոր՝ 1954, Դ. Հատոր՝ 1956:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

⁽²⁾ Ուրիշ յիշատակարան մը ունի. «ամբս Ի և չորս». — Աղաւնունի, Միաբանք, էջ 83:

⁽³⁾ Հմմտ. Սիւրմէեան, Յ. Զեռ. երուսաղէմի, Ա., էջ 123: Պողարեան, Գ., էջ 203:

⁽¹⁾ Հմմտ. Պողարեան, Գ., էջ 203-4:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՀԱՅ ԲԱՐՔԱՌԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

Ա. Վ. Գրիգորեան

Երեւան, 1957

Հայ բարբառագիտութիւնը այսօր, հայ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու մէջ աւանդուող կարեւոր ճիւղերէն մին է: 1909ին, մեծանուն բարբառագէտ Հ. Աճառեանի (Classification des dialectes Armeniens) ով կը հիմնուէր հայ գիտական բարբառագիտութիւնը, որուն կը յաջորդէին հեղինակին (Հայ Բարբառագիտութիւնը) 1911, և այլ մենագրական ուսումնասիրութիւնները: — (Քննութիւն Նոր Նախընկալի Բարբառի) 1925, (Քննութիւն Ազուլիսի Բարբառի) 1935, (Քննութիւն Պոլսի Բարբառի) 1941, (Քննութիւն Համալեւի Բարբառի) 1947, (Քննութիւն Վանի Բարբառի) 1953, և այլոց Ա. Ղարիպեանի (Հայ Բարբառագիտութիւնը) 1953, Է. Ազադեանի (Քննութիւն Մեղրու Բարբառի) 1954, Հ. Մկրտչեանի (Կարնոյ Բարբառը) 1952, Վ. Պետոյեանի (Սասունի Բարբառը) 1954, և այլ աշխատութիւններ: Անհրաժեշտ էր համադրել այս բոլորը, ու պատրաստել հայ բարբառագիտութեան մատչելի դասընթացք մը, ըստ ծրագրի պահանջներուն: Հեղինակը ջանացած է այդ պակասը լրացնել, «Ֆակուլտետ»ների ուսանողներուն տալով մի համայնապատկեր հայ բարբառներու:

537 էջերու մէջ, հեղինակը կը շօշափէ բարբառագիտութիւնը իր բոլոր երեսներով: — Տեսական հարցեր, բարբառներու դասակարգում, նկարագրում, գործնական ուղղութիւններ ապագայ բարբառագէտին: Գիրքը ունի 4 գլխաւոր բաժանումներ: Ա. — «Ներածութիւն», Բ. — «Հայ Բարբառագիտութիւն», Գ. — «Հայ Բարբառներու ուսումնասիրման մեթոտները», Դ. — «Լեզուաբանական աշխարհագրութիւն»:

Ա. — «Ներածութիւն»: — Ընդհանուր բնոյթ կրող հարցեր կը տիրեն այս բաժնին մէջ: Բարբառի՝ սահմանումը, գիտական ու պատմական արժէքը, գործնական նշանա-

կութիւնը, կապը պատմական գիտութիւններու հետ: Պատմութեան, հնագիտութեան, ազգագրութեան աղբյուր լեզուի հետ, ժարգոնի հետ, իր ծագման պարագաները, վիճակը նախնադարեան-համայնական տոհմային շրջանին, էթնիկական լեզուի շրջանին, կապիտալիզմի էպոխայում, սոցիալիզմի էպոխայում:

Բարբառը՝ հեղինակին համաձայն, քանակական ըմբռնում մըն է, որով կը հասկցուի «մի այնպիսի ճիւղաւորում մէկ համընդհանուր լեզուի, որն ունի իր բառային հիմնական ֆոնդն ու քերականական կառուցուածքը, և սպասարկում է որ և է ժողովրդի աւելի փոքր հատուածին»: Իրացատի, հեղինակին ընդհանուր հայեացքները կը համեմուտին «Մարքսիզմի կլասիկների» շունչին տակ: Արուեստական կը գտնենք բարբառներու ստորաբաժանումը տոհմային, էթնիկական, կապիտալիստական, սոցիալական շրջաններու: Լեզուն անպայման տրամագծօրէն չընթանար տեղական պայմաններու հետ: Մասնի «կուպիտ» և «հակագիտական» սխալներէն մին եղաւ, լեզուն ընդունել իրր «վերնաշէնք» տնտեսական պայմանի: Լեզուաբանական համագումարը, որ կայացաւ Սթալինի նախագահութեան տակ, երևակայածին գտաւ Մասնի տեսութիւնը, օրինակ բերելով ուսանելներ, որ նոյնը մնաց յեղափոխութենէն առաջ և վերջը: Հեղինակը կ'ուզէ անպայման կաղապարել լեզուաբանական երևոյթները ի նախազոյ ընկերային տեսակէտներու վրայ, որոնք միայն կրնան խեղաթիւրել լեզուաբանական հարցերը: Լեզուաբանութիւնը ընկերաբանութիւն է: Լեզուաբանութիւնը պէտք է օգտուի ընկերաբանութենէն, հոգեբանութենէն, պատմութենէն, աշխարհագրութենէն, հնագիտութենէն, բայց չի նոյնանար ոչ մէկուն հետ: Լեզուաբանութիւնը ունի իր ուրոյն կառուցուածքը և մեթոտը:

Բ. — «Հայ Բարբառագիտութիւն»: — Այս գլխուն ներքեւ, հեղինակը կը շօշափէ հայ բարբառներու ծագման պարագաները, պատմութիւնը, դասակարգումը, և համառօտ քերականութիւնը: Հեղինակը կ'ընդունի հայ բարբառներու գոյութիւնը 5րդ դարուն, և նոյնիսկ առաջ, և իրաւամբ կը մէջբերէ Կորիւնի, Եզնիկի, Խորենացիի:

Դիոնիսիոս Թրակացիի Անանուն Մեկնիչին, Ստեփանոս Սիւնեցիի վկայութիւնները, որոնք կը հաստատեն հայ բարբառներու գոյութիւնը Ծրդ դարուն: Բարբառներու գասակարգման մէջ, հեղինակը կը հետեւի Աճառեանին, միայն բարեփոխելով վերջինիս աւել ճիշդը ալիս օր հնչարանական հիմունքներէ տարուած: Ուրեմն, Գրիգորեան կը դասակարգէ հայ բարբառները Յում, «կը», «լիս» ճիշդերու: «Ում» ճիշդը կը պարփակէ Երևանի, Թբիլիսի, Ղարաբաղի, Շամախի, Աստրախանի, Զուղայի և Ազուլիսի բարբառները:

«կը» ճիշդը կը պարփակէ Կարինի, Սոթքերի, Մուշի, Վանի, Տրպիզանկերտի, Սարքերդ-Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիոյ, Կիլիկիոյ, Սուեախոյ, Արաբկիրի, Անիի, Սեբաստիոյ, Լեզոկիոյ, Ամասիոյ, Օրդուի, Զմիւնիոյ, Նիկողիմիոյ, Պոլսոյ, Ռոստոթոյի, Ղրիմի, Առտիալի և Սասունի բարբառները:

«Լիս» ճիշդը կը պարփակէ Մարաղայի, Արդուինի, Հաւարիկի, Սոյի, Մեղրիի և Հաղբութի բարբառները:

Այս դասակարգումը ձեւարանական է, հիմնուած սահմանական եղանակ ներկայի կազմութեան վրայ: Այս ձեւարանական գասակարգումը ճիշդ է, բայց մէկ մասն է միայն գասակարգման կարելիութիւններուն: Լեզուարանական արտայայտութիւնը բազմազան է, հնչութարանական, շարահիւսական, բայերու կազմութեան եղանակը եւայլն: Պիտի շեշտէինք մանաւանդ հնչութարանական գասակարգումը, որ առանցքը կը կազմէ արդի կառուցանողական-պաշտօնաւոր լեզուարանութեան, ժողովրդի մեծանուն լեզուարաններու Սոսիւրի, Թրուպէշքոյի և Փրակայի զարգացի տեսութիւններուն: Հնչութարանական գասակարգումը աւելի գրութեանական է և կարգաւորեալ, քան հեղինակին աւանդական հնչարանական նկարագրումը: «Ա» (էջ 81) կը սահմանուի իբր համալիզուային, էական է այս բնորոշումը, երբ նոյն բարբառը չունի առանձնալիզուային «Ա» մը: «Դ», «Տ», «Թ» (էջ 87) կը սահմանուին գրական լեզուի մէջ իբր պայթական, անհրաժեշտ է այս գատորոշումը, երբ նոյն գրական լեզուի մէջ գոյութիւն չունին շփական «Դ», «Տ»,

«Թ»-ներ: Հեղինակը կը կիրարկէ Նոր-Քրականագէտներու մեթոտը, որ պէտք էր փոխարինուէր արդի կառուցանողական — և պաշտօնաւոր լեզուարանութեան գրութեանական ըմբռնութիւնով: Ապա հեղինակը կու տայ համառօտ քերականական պատկերը բարբառներու, գոյական, ածական, թուական անուն, դերանուն, բայ, խոնարհում, բառապաշար ստորաբաժանութիւնները: Իսկ, մասնաւոր քերականութիւնը 15 բարբառներու և 1 ենթաբարբառի. — «Ում» ճիշդէն Երևանի, Թբիլիսի, Ղարաբաղի, Ազուլիսի բարբառներու և Նոր Բայազետի ենթաբարբառի: «կը» ճիշդէն Պոլսոյ, Վանի, Կարինի, Կիլիկիոյ, Մուշի, Սասունի, Համշենի և Նոր Նախիջևանի բարբառներու: «Լիս» ճիշդէն Արդուինի, Մեղրի և Հաղբութի բարբառներու: Հեղինակը իւրաքանչիւր բարբառէն կը բերէ նմուշներ, փափաքելի պիտի ըլլար որ, այս ընթերցանութեան կողմերը ունենային իւրենց կողքին փոքրիկ բառարան մը, զիւրացնելու համար ուսանողին գործը:

Գ. — «Բարբառներու ուսումնասիրման մեթոտը» խորագրին ներքեւ, հեղինակը կու տայ գործնական ուղեցոյցներ ապագայ բարբառագէտին — Իր անմիջական զննումը, հետազոտման առարկայի ընտրութիւնը, իր աշխատանքի պայմանները գիշդ, գիշդի մասին ընդհանուր տեղեկութիւններու հաւաքումը և օժանդակ աղբիւրներու օգտագործումը, բարբառագիտական նիւթերու գրանցման ասիւլ լիակատար տեղեկութիւններ տուեալ անձերու մասին, ազգանունը, անունը, հայրանունը, տալիքը, տեւը, կրթութիւնը, աշխատանքի բնոյթը, տուեալ անձը գտնուած է քաղաք, ուրիշ բարբառով խօսող գիւղեր եւայլն, բարբառի հետազոտումը, համեմատական ուսումնասիրութիւնը, արդի վիճակի ուսումնասիրութիւնը, ուղղակի մեթոտը և բարբառներու նկարագրումը արիւններու գրառումներու վրայ, ուղղակի և ծրագրային ուսումնասիրութիւն: Հեղինակը անհրաժեշտ կը գտնէ, հայ բարբառներու ուսումնասիրման և բարբառային քարտէսը կազմելու մթրագիրը:

Դ. — «Լեզուարանական Աշխատհազրութիւն» գլխուն ներքեւ, հեղինակը կը նշէ քարտիսագրութեան կարեւորութիւնը,

ՍԱԼԱՐԿՈՒՄ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՏԱՃԱՐԻՆ

ԵՒ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԱՅԴ ԱՌԹԻՒ

Երբ 1957 Նոյեմբեր 20ին կը ձեռնարկէինք Ս. Յակոբայ Տաճարի յատակի նորոգութեան աշխատանքին, մեր նպատակն էր լոկ փոխել Տաճարի հին եւ մաշած սալքարերը տեղական կարմիր նոր սալքարերով: Այս գործը կը նախատեսուէր որ պիտի աւարտէր 10-12 օրերու ընթացքին: Սակայն աշխատանքի միջամուխ ըլլալէ ետք անակնկալ երեւոյթներու առջեւ գտնուեցանք, ինչ որ մղեց զմեզ եկեղեցիի մէջ պեղումներ կատարել. իսկ գործի ընթացքին՝ ինչ ինչ նկատումներէ առաջնորդուած՝ փոխեցինք մեր սկզբնական ծրագիրը եւ աւելի յարմար դատեցինք համակ մարմարով պատել եկեղեցիի ամբողջ յատակը:

1 ՍԱԼՔԱՐԵՐՈՒ ՎԵՐԱՑՈՒՄ. - Ե՞րբ դրուած է Ս. Յակոբայ սալաշատակը, մեզի յայտնի չէ: Ծանօթ է միայն եկեղեցիի դասին գոյնզգոյն քարերով շինուած շատ գեղեցիկ յատակին սալարկման թուականը, 1652ին, նախաձեռնութեամբ եւ ծախիւք Ամենայն Հայոց Փիլիպպոս Կաթողիկոսին, որ Սոյ Կաթողիկոսի հետ փոխադարձ հասկացողութեան՝ ինչպէս նաեւ ուխտի համար Երուսաղէմ էր եկած 1651 թուականին: Ներկայ սալքարերը այնքան հինացած ու տեղ-տեղ այնքան կոտորուած էին

որ շուտով կը հինցնէին իրենց վրայ ծրգուած կարպետներն ու գորգերը, եւ հետեւաբար անմիջական նորոգութիւն մը անհրաժեշտ դատուած էր:

Երբ կարպետները վերցուեցան, յատակին վրայ տեղ-տեղ նշմարուեցան սեւ սալքարեր, որոնք երբեմն քով քովի գալով երկրաչափական պարզ ձեւեր կը կազմէին, եւ երբեմն ալ՝ ըստ երեւոյթին պատահաբար այստեղ կամ այնտեղ անջատաբար ցրուած էին: Ոչ մէկ բացատրութիւն կարելի եղաւ տալ անոնց այս ցրուած գոյութեան, բացի ենթադրելէ որ կա՛մ հին աւելի զարդարուն յատակի մը վերջին մնացորդներն էին աւնոնք, եւ կա՛մ՝ ատեանի կամ դասի սալարկումէն յետոյ աւելցած սեւ ու կարմիր զարդաքարեր էին զորս փոխանակ մէկ կողմ դնելու, յարմար տեսնուած է զետեղել եկեղեցիի յատակին վրայ հոս ու հոն, զրեթէ ամէն ուղղութեամբ:

Պէտք է խոստովանիլ որ առանց սրտի ճմուռի չէր որ կը դիտէինք հին քարերուն իրենց տեղերէն վերցուիլը: Վերջապէս դարերով այս քարերը մաս կազմած էին Աստուծոյ նուիրական այս տունին, եւ անոր խոնարհագոյն մարգին վրայ կատարած էին իրենց նոյնքան խոնարհ բայց կարեւոր դերը:

բարբառներու մասնայատկութիւնները, փոխարարներութիւնները, տարածումը, դասակարգումը ճշգիւռ համար: Կը յիշէ ձայնագարձը որ սահմանագիծն է միեւնոյն բարբառագիտական երեւոյթի: Լեզուաբանական աշխարհագրութեան առնչութեամբ հեղինակը չի յիշատակեր մեծանուն բարբառագէտ Ֆրանսազի ժիյերոնը, որուն գործը անժխտելի էր բարբառագիտական քարտիսագրութեան մէջ:

Հեղինակը կցած է զրքի վերջաւորու-

թեան 3 քարտէսներ, որոնցմէ երկուքը ինքն է պատրաստած: — «Հայ Բարբառներու դասաւորութիւնը» եւ «Լեռնային Ղարաբաղի Բարբառային Քարտէսը», իսկ երրորդը Աճառեանի կողմէ «Հայոց Պոսած Լեզուներու Քարտէսը»:

Հակառակ տեսական իր կարգ մը սեղմումներուն, այս գիրքը մեծապէս օգտակար կրնայ ըլլալ «Փիլոլոգիական գիտութիւններ» ուսանողին եւ հայ բարբառագէտին:

ԱՆՈՒՇՍԻԱՆ ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ

իրենց վրայ բռնած էին յոգնած ոտքերը յոգնախուռն ու խտաւորներուն՝ որոնք գաղթող թռչուններու կանոնաւորութեամբ տարուէ տարի լեցուցած էին այս տաճարը: Իրենց վրայ ընդունած էին այս քարերը՝ երկրպագութիւնն ու ծնրադրութիւնը բազում սերունդներու՝ որոնք իրենց վիշտը լացած կամ իրենց երջանկութիւնը երգած էին «մեղաւորաց քաւարան եւ հրեշտակաց բնակարան» այս տաճարին մէջ: Իրենց տեղերէն հանուելէն յետոյ մանաւանդ՝ հասկցուեցաւ որ հաստ ու հսկայական քարեր էին անոնք առհասարակ, դրուած դարերու համար, եւ ապացոյցներ՝ մեր նախնեաց ամուր եւ մնալուն գործ տեսնելու առաքինութեան: Հանգոյն հաւատարիմ եւ հնօրեայ պաշտօնեայի մը, որ տարիքի բերումով հանգստեան կը կոչուի, հինցած այս քարերը մի առ մի դուրս հանուեցան տաճարէն:

Զգացումներով դատելը պահ մը մէկ կողմ դնելով երբ պէտք եղաւ բնական աչքով դիտել զանոնք, ոչինչ կար արտասովոր անոնց վրայ, սովորական աչքի համար, բացի անսովոր մեծութենէն ու ծանրութենէն անոնցմէ ոմանց՝ զորս հարկ կ'ըլլար դուրս փոխադրել երբեմն 3-4 հոգիով: Ակնբախ էր մանաւանդ անոնցմէ մին, զորուած հարաւային պատին կից, եկեղեցիի հարաւ-արեւմտեան անկիւնէն շուրջ երկու մետր դէպի արեւելք: Այս մեծ քարին երկայնութիւնն էր մէկ ու կէս մետր, լայնքը՝ 44 սմ., հաստութիւնը՝ շուրջ 30 սմ.: Մակերեսին վրայ՝ մէկ ծայրը՝ կային թիթեւ կամար գիծեր. իսկ մէջտեղը կարգ մը տեղեր եղծուած եւ կոտրուած էր, ինչ որ կատարուած ըլլալ կը թուէր մակերեսէն մի բան քնքելու յատուկ դիտումով կարծես: Հատ երեւոյթին, այս երկայն ու ծանր քարը ժամանակին ուրիշ տեղ մը, կամ իր իսկ նստած տեղը, իրրեւ շեմքար ծառայած ըլլալու տպաւորութիւնը կը ներգործէր դիտողին վրայ: Եկեղեցւոյ յատակէն վերջուած բոլոր քարերը, մաքրուելէ եւ մակերեսը ըստ կարելւոյն կանոնաւորուելէ եւ կոկուելէ յետոյ, խնամքով ամբարուեցան եկեղեցիին կից ներքնայարկերէն միոյն մէջ, օրին մէկը վերստին լծուելու համար իրենց հին եւ նուիրական նպատակին, նոյնքան նուիրական ուրիշ վայրի մը մէջ: — Հին սալալատակէն նմոյշի համար պահուեցան.

ա) հիւսիս-արեւելեան կեդրոնական սիւնի հիւսիսային ստորոտը մէկ շարք սալքար. բ) հարաւ-արեւելեան կեդրոնական սիւնի հարաւային ստորոտը մէկ շարք սալքար եւ գ) Մակարի դասին վանդակորմին մէջ պարփակուած տարածութիւնը ամբողջութեամբ, 4 մետր երկայնքով եւ 3 մետր լայնքով:

2. ՊԵՂՈՒՄՆԵՐ. — Հին սալքարերը վերցնելու միջոցին, լոկ հետաքրքրութեան համար, փորուեցաւ ներքեւը Մ. Էջմիածնի եկեղեցիի մուտքին դիմաց գտնուող սեւ քարերուն՝ որոնց գոյութեան ակնարկեցինք քիչ մը վերեւ: Անոնց անմիջական յատակէն ոչինչ երեւան եկաւ: Փորուածքը փոքր ինչ աւելի հարաւ տարածելով յանկարծ զանկ մը երեւցաւ: Մէջտեղ հանուեցաւ զանկին մարմինը, որ շատ լաւ եւ անաղարտ վիճակի մէջ պահուած կմախք մըն էր (Տէ-Պ-ԴԷ-Բէ-1): Այս կմախքը դրդապատճառ եւ սկզբնա-



Թիւ 1. Ս. Յակոբայ Տաճարի յատակին ներքեւէն ելած կմախքներէն մէկը:

կէտ դարձաւ տեղի ընդարձակ չափերու վրայ պեղումներ կատարելու: Խրամ մը բացուեցաւ նախ եկեղեցիի հարաւային թեւին մէջ, կմախքի գտնուած վայրէն մինչեւ եկեղեցիի հարաւ-արեւմտեան անկիւնը, 12 մետր երկարութեամբ (Տէ-Պ-ԴԷ-Բէ-2):

կորամին լայնքը սովորաբար շուրջ մէկ մետր էր, իսկ խորութիւնը տեղւոյն համաձայն կէս մետրէն մինչեւ մէկ ու կէս մետր: Հարաւային թեւի այս խրամին մէջ գտնուեցան ուրիշ չորս կմախքներ եւս, եւ դամբարան մը լի ոսկերօք: Բացի առաջինէն, եկեղեցիի զանազան մասերուն մէջ գտնուած բոլոր միւս կմախքներն ալ առանել կամ նուազ աստիճանով փխրուն եւ փոշիանալու վիճակին մէջ էին, եւ ամենէն հոգածու փորձն իսկ՝ անոնց վրայ փակած հողէն մաքրելու՝ կը վերածէր զանոնք կտորուանքներու եւ փոշիի: Դժուար է որոշել թէ այս

ջու, պատի գծէն մէկ ու կէս մետր դէպի հիւսիս, եւ ձախակողմեան դասի վանդակէն երեք ու կէս մետր (մինչեւ ոտքերը) դէպի արեւմուտք, 130 սմ. խորութեան վրայ: Այս կմախքը, ինչպէս նաեւ միւս բոլոր կմախքները թաղուած էին զլուխ արեւմուտք եւ ոտքերն արեւելք, այնպէս ինչպէս քրիստոնեաներս սովոր են թաղել: Երկու քարեր զրուած էին զլուխ աջ ու ձախ կողմերը: Այս կմախքին ձախ կողմը, հորի բերանի ձեւով եւ 42 սմ. տրամագծով բացուածք մը կար (Տէ- Պ-Գէ- Դ- 1), որ սակայն ջրհորի մը վրայ բացուելու ոչ մէկ



Թիւ 2, Ս. Յակոբայ Տանաթի յառակր պեղումներու ընթացքին:

փխրունութիւնը ոսկորներու հնութեան պէտք է վերագրել թէ հողի չափազանց խոնաւութեան: Արդարեւ, սալքարերուն ներքեւ եւ փորուածքի զրեթէ բոլոր խաւերուն մէջ հողը վերին աստիճանի խոնաւ էր: Եկեղեցւոյ ներքեւ եւ անմիջական շրջականներու մէջ ջրհորներու գոյութիւնը, եւ շարժօրեայ առատ ջուրով յատակի լուացումներ պատճառ ըլլալ կը թուին այս անսովոր խոնաւութեան:

Առաջին լման եւ անաղարտ կմախքը ելած էր Ս. Էջմիածնի եկեղեցիի դրան առ-

նշան ցոյց կուտար աւելի քան մետր մը փորուելէ յետոյ:

Երկրորդ կմախքը ելաւ առաջինէն (զլուխէն) շուրջ մէկ մետր դէպի արեւմուտք, այժմու Ս. Ստեփանոսի քարկոծման պատկերին ստորոտը, եկեղեցիի հարաւային պատէն 70 սմ. հեռու, 120 սմ. խորութեան վրայ: Ասկէ անմիջապէս դէպի արեւմուտք, այժմու Յակոբոս Տեառնեղբոր նահատակման պատկերին ստորոտը, երկու կմախքներ գտնուեցան, մին միւսին վրայ թաղուած. մէկը շուրջ մէկ մետր՝ իսկ միւսը

140 սմ. խորութեան վրայ. Շարունակելով պեղումները զէպի արեւմուտք, Ս. Մինասի եւ Ս. Գէորգի պատկերներուն ստորոտը բրիլի հարուածները իջան բարերու վրայ: Անոնցմէ մէկ քանին վերցնելով իրենց տեղերէն՝ գոյացաւ բացուածք մը՝ որ կը նայէր քարայրածեւ դամբարանի մը մէջ, ուր անորոշ թիւով կմախքի ոսկորներ իրարու խառնուած էին, արդէն իսկ անիւնացած եւ փոշիանալու վիճակի մէջ: Բարերը վերցնելու ատեն, վերէն թափուած հողն ալ ծածկած էր անոնց կարեւոր մէկ մասը՝ Դամբարանին երկայնքն էր 235 սմ., լայնքը՝ շուրջ մէկ ու կէս մետր, խորութիւնը՝ 120 սմ.: Դամբարանին հարաւային պատը նոյնինքն եկեղեցիի հիմքերն էին. իսկ մնացեալ մասերը պարզ բարուկերով շինուած էին: — Այս շարքին վրայ վերջին կմախքը գտնուեցաւ նոյնինքն եկեղեցիի հարաւ-արեւմտեան անկիւնին մէջ, 130 սմ. խորութեան վրայ:

Ապա բացուած այս խրամէն նոր բազուկ մը պեղուեցաւ հարաւէն զէպի հիւսիս 9 մետր երկարութեամբ: Նոր խրամի արեւելեան կողին ներքեւ, 110 սմ. խորութեան վրայ գտնուեցաւ գանկ մը, որուն մարմինը կ'երկարէր զէպի (հարաւ-արեւմտեան) սիւնի ուղղութեամբ, եւ որ չբացուեցաւ: 2 մետր եւս յառաջանալով զէպի հիւսիս, երեւան եկաւ մանկան մը կմախքը, 125 սմ. խորութեան վրայ: Այս կէտէն (Տե՛ս Պատկեր Ը-2) 170 սմ. երկարութեամբ ուրիշ փոքր բազուկ մը եւս պեղուեցաւ զէպի արեւմուտք, աւագ դրան ուղղութեամբ, եւ մէջտեղ ելաւ ուրիշ կմախք մը՝ 1 մետր խորութեան վրայ: Տարբեր խրամ մը բացուեցաւ արեւմտեան երկու կեղրոնական սիւներու մէջտեղէն, 4 մետր երկարութեամբ: Այս խրամին ծայրը, այսինքն մեծ ատեանի արեւմտեան կողմը, 270 սմ. խորութեամբ փոս մը փորուեցաւ, ներքեւի հողի կազմութեան մասին գաղափար մը ունենալու հետաքրքրութեամբ: Այս կէտին վրայ՝ հողը վերէն վար ամբողջութեամբ լիցք էր: Հարաւէն հիւսիս երկարող խրամին ծայրն ալ նոյն նպատակով ուրիշ փոս մը փորուեցաւ, 260 սմ. խորութեամբ, այս կէտին վրայ մինչեւ 150 սմ. լիցք էր, անկէ անդին՝ կարմիր մայր հող:

Պեղուեցաւ նաեւ աջակողմեան դասին հետեւը, այսինքն այս դասի սիւնին հիւսի-

սային կողմը: Այստեղ եւս երկու կմախքներ մէջտեղ ելան, երկուքն ալ վանդակորմին մօտ, մին սիւնէն 90 սմ. զէպի հիւսիս, 130 սմ. խորութեան վրայ, իսկ միւսը սիւնէն 140 սմ. հիւսիս՝ 100 սմ. խորութեամբ:

Աստի այս պեղումներու ընթացքին երեւան ելան շուրջ 10 կմախքներ, չհաշուելով դամբարանի պարունակութիւնը եւ ուրիշ կմախք մը, որուն պիտի ակնարկենք հոսքը: Իւրաքանչիւր կմախքէն ոսկոր մը վերցուեցաւ, յատուկ արծանագրութեամբ, ապագային գանոնը ոսկորներու տարիքը ճշդող զորոգութեան ենթարկելու հետաւոր ակնկալութեամբ: Պեղումներու ընթացքին, գրեթէ ամէն խաւերէն ելան խեցեղէն անոթներու կտորուանքներ՝ որոնք եւս խնամքով հաւաքուեցան, ապագային զանոնք եւս հաւանական քննութեան ենթարկել տալու համար: Քաղաքիս մէջ հնութեանց իրազեկ ծանցուած անձեր, առհասարակ Լատին հայեր, որոնք բազմիցս այցելեցին պեղումներու ընթացքին, խեցեղինաց՝ ինչպէս նաեւ կմախքներու հնութեան մասին որոշ ոչինչ կրցան ըսել: Ընդհանուր հաւաստումով, խեցեղէնները կըրնային պատկանիլ որ եւ է դարաշրջանի, Հռովմէականէն մինչեւ Իսլամական տիրապետութեան շրջանները:

Պատահական այս պեղումներու ընթացքին մասնաւոր հետաքրքրութեամբ որոնեցինք հնագոյն յատակի հետքեր: Նման երեւոյթի մը պատրանքին առջեւ գտնուեցանք երբ հարաւէն հիւսիս երկարող խրամի կողերուն վրայ, ներկայ յատակէն 50 սմ. ցած, կարծր շաղախի երկայնկեկ գծի մը հանդիպեցանք: Այս գիծին մակերեսը բացուելով արդարեւ երեւան ելաւ ամուր գետին մը, որ սակայն աւելի հաւանական է ենթադրել թէ շաղախ պատրաստելու տեղ եղած է շէնքի շինութեան ընթացքին, քան եղած է շէնքի շինութեան ընթացքը: Այն թէ հնագոյն յատակի մը մնացորդը: Այնպէս որ գրեթէ անվարան կարելի է հետեւ պէս որ գրեթէ անվարան կարելի է հետեւ պէս թէ Ս. Յակոբայ այժմու յատակը (ոչ սալքարերը) ներկայ եկեղեցիի սկզբնական եւ առաջին յատակն է:

ՇՆՈՐՀԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Շարունակելի)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

• Նախորդ հաղորդագրութեամբ (տես ՍԷՆ, ապրիլ-մայիս 1958) ծանուցած էինք մարտ 29ին Յորդանանի Կառավարութեան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի գործավար (chargé d'affaire) նշանակումին պաշտօնները եւ այդ մասին Միաբանութեան անդամներուն ղրկուած շրջաբերականին բովանդակութիւնը:

• Այդ թուականէն ետք, յունիս 17ին, Էինգ միաբան վարդապետներ Միաբանութեան մնացեալ անդամոց «կոչ» մը ուղղեցին որով «հաշտութեան կերպ մը» զրոտնել կ'առաջարկէին: Թէեւ այս «կոչ»ը Ս. Աթոռին կացութիւնը ըստ էութեան ճիշդ եւ արդար կերպով չէր ներկայացներ, այնուհանդերձ կ'առաջնորդուէր բարի շարժառիթներէ: «Կոչ»ին նպատակն այն էր, ինչպէս զայն ստորագրողները կը բացատրէին, որ Միաբանութեան եւ ժողովուրդին մէջ սակաւաթիւ այն տարրերը որոնք տակաւին խռով վիճակ մը ունէին, դառնային եւ հաշտ դիրք մը բռնէին Պատրիարքարանի նկատմամբ: Այս «կոչ»ին մէջ խնդրոյ առարկայ չէր եղիշէ Եպս.ը, որուն անունն անգամ յիշուած չէր անոր մէջ: Անոնք որոնք սխալ մեկնեցին այս «կոչ»ին նշանակութիւնը, հարկ եղած բացատրութիւնն ստացան բերանացի եւ գրաւոր, եւ յաջորդող ղէպերու լոյսին տակ:

• Յուլիս 5ին վերջնականապէս պարպուեցաւ Ս. Աթոռոյ լուսարարապետարանի պաշտօնատունը, ուր կը մնային պաշտօնատան գոյքերուն հետ միասին նաեւ եղիշէ Եպս.ի անձնական գոյքերը, որոնք փոխադրուեցան վանուցս սենեակներէն մէկուն մէջ, որ կղպուեցաւ եւ կնքուեցաւ հսկողութեամբ եւ պատասխանատուութեամբ քաղաքիս փոխ-կառավարիչին, ոստիկանապետին եւ ուրիշ երկու կառավարական անձանց եւ ապա պաշտօնատունը յանձնուեցաւ վանական վարչութեան:

• Յուլիս 24ին գումարուեցաւ Ս. Աթոռոյ Միաբանական Ընդհ. Ժողովը, քաներկու անդամներու ներկայութեամբ, լսելու համար Տնօրէն Խորհրդոյ տնտեսական եւ վարչական տարեկան համարատուութեան տեղեկագիրը եւ քննելու համար յառաջիկայ տարուան Ս. Աթոռոյ արդեանց եւ ծախուց նախատեսութիւնը:

Միաբանական Ընդհ. Ժողովոյ գումարման առթիւ օրակարգի վրայ էր նաեւ

Գեր. Տ. Սուրէն Եպս.ի, Պատրիարքութեան փոխանորդի հանգամանքով ապրիլ 3ին Միաբանութեան անդամոց ուղղեալ շրջաբերականը (տես ՍԷՆ, ապրիլ-մայիս 1958), որ կարդացուեցաւ եւ ատենագրութեան մէջ մուծուեցաւ: Այս մուծումին կապակցութեամբ ժողովը քուէարկեց որոշում մը ըստ հետեւեալին: —

«Ժողովս նկատելով որ մեր պատուարժան Կառավարութեան կողմէ Ս. Աթոռոյ գործավարի կամ ունէ անունով պետի կամ պաշտօնեայի նշանակումը բոլորովին անհամաձայն է Պատրիարքարանիս հաստատեալ Սահմանադրութեան եւ Կանոններուն:

«Բայց նկատելով որ ներկայ պարագային Միաբանական Ժողովս չ'ուզեր Կառավարութեան կամքին կամ կարգադրութեան հակառակիլ,

«Ժողովս կ'որոշէ որ Պատուարժան Տնօրէն Ժողովը պատշաճ ժամանակին եւ պատշաճ եղանակաւ հարկ եղած քայլերն առնէ եւ պէտք եղած դիմումները կատարէ, որպէսզի մեր իմաստուն եւ արդարասէր Վեհափառ Թագաւորը եւ մեր բարեխնամ Կառավարութիւնը, նկատի առնելով մեր կանոններն եւ աւանդութիւնները եւ սթաթուքոն, բարեհաճին Միաբանական Ժողովոյ օրինաւորապէս կատարուած պատրիարքական ընտրութեան ճանաչումը շնորհել, որպէսզի կանոնաւորուին Ս. Աթոռոյ պաշտօնական վարչական գործերը եւ վերջ զրոտնեն Ս. Աթոռոյ ղեկավարութիւնները»:

• Այս որոշման քուէարկութիւնէն ետք Միաբանական Ժողովը նկատի առաւ ուրիշ առաջարկ մը, Ուխտիս միաբաններէն Հայրիկ Եպս. Ասլանեանի մասին. ըստ այսմ Միաբանական Ժողովը, թուելէ ետք Հայրիկ Եպս.ի անցեալ 1957 տարւոյ փետրուար ամիսէն ի վեր կատարած պախարակելի եւ աթոռամիաս կարգ մը գործերը, մասնաւորապէս Միաբանական Ժողովոյ կողմէ կատարուած օրինաւոր ընտրութեանց ղէմ իր եւ եղիշէ Եպս.ի անունով բացուած դատերուն կապակցութեամբ, որոշեց պարսաւ արձանագրել եւ արձանագրեց Հայրիկ Եպս.ի ղէմ. եւ խստիւ ազդարարեց անոր որ եթէ իր ընթացքը շարունակէ՝ Միաբանական Ժողովը օրինական պատիժ պիտի տնօրինէ իր մասին:

21 Օգոստ. 1958

Երուսաղեմ

ԳԻԻԱՆ Ս. ԱԹՈՐՈՅ

Հայոց Պատր. Երուսաղեմի

ԱՄՍԱՎԵՐՁԻ ՀԱՆԳԵՄՆԵՐ Ս. ԱԹՈՌՈՅ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ա. — Ա. Թարգմանչաց Մանկապարտեզի

Կիրակի, 6 Յուլիսի Կ. Վ. Ժամը 3.30ին, Ժառանգ. վարժարանի բակի հինառուրց մայրիկն Ներքև հաստատուած շարժական բնմին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Մանկապարտեզի ամսվերջի հանդէսը՝ նախագահութեամբ Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Զօր, և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և Ժողովուրդի բաղմութեան:

Մէկ ու կէս ժամերու ընթացքին, Մանկապարտեզի փոքրիկները յաջորդաբար և յաջող կերպով կատարեցին արտասանութիւններ (հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով), երգեր, պարեր, մարզանքներ, և այլն, որոնք ի յայտ կը բերէին վարժարանի Տեսչութեան հոգածութեան ու Մանկապարտեզի ուսուցչական կազմին տարուան մը նուիրեալ ու խնամքոտ աշխատանքին արդասիրքը:

Հանդէսի աւարտին, Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարքը բաժնեց Մանկապարտեզի 32 ընթացաւարտ փոքրիկներուն վկայականները, և տալէ ետք անոնց իր պատգամն ու օրհնութիւնը փակեց հանդէսը «Պահպանիչ»-ով ու Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:

Բ. — Հերոսման Սգգ. Վարժարանի, Ամման

13 Յուլիս, Կիրակի առաւօտեան ժամը 10ին, Ամմանի Բէքա Սինէմային մէջ կատարուեցաւ տեղւոյն Հեթումեան ազգային երկսեռ վարժարանի ամսվերջի հանդէսը՝ նախագահութեամբ Գեր. Տ. Ուրէն Եպս. Քէմհանեանի, ներկայ էր խումն քաղմութիւն Ժողովրդեան:

Հանդէսը տեւեց աւելի քան երեք ժամեր, որոնց ընթացքին հանդիսականները վայելցին վարժարանի աշակերտութեան կողմէ եղած պարերը, երգերը, արտասանութիւններն ու ուղեծները, վարժարանի Տեսչ. Զօ. Անուշահան Վրդ. կարգաց վարժարանի միամեայ դործունէութեան տեղեկագիրը Ապա, Գեր. Նախագահ Ս. Հայրը կատարեց Նախակրթարանի 6 և Մանկապարտեզի 19 շրջանաւարտներու վկայականներու և յաջող աշակերտներու մրցանակներու բաշխումը ու իր փական խօսքէն ետք տուաւ իր օրհնութիւնը վարժարանի ուսանողութեան:

Գ. — Ս. Թարգմանչաց Նախակրթարանի և Մեկորդական րամբի

Նոյն երեկոյեան ժամը 6.30ին, Ժառ. վարժարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Ս. Թ. Նախակրթարանի և երկրորդական րամբի ամսվերջի հանդէսը՝ նախագահութեամբ Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Զօր, ներկայ էր բովանդակ Միաբանութիւնն ու ծնողներու և Ժողովուրդի հոծ բաղմութիւնը:

Հանդէսը սկսաւ «Միք դարգարեցիլն»՝ Թարգմանչաց շարականի երգեցողութեամբ, որմէ ետք իրադրութեան աւելի քան երկու քու կէս ժամերու տեսչութեամբ հոս յայտագիր մը երկրորդական րամբի ընթացաւարտներէն ոմանք րանախօսեցին, իսկ ուրիշներ կարգացին ինքնագիր շարագրութիւններ, հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով, նոյն լեզուներով եղան նաև արտասանութիւններ կատարուեցան նոյնպէս խմբերէն՝ ղեկավարութեամբ Պր. Սահակ Կալայանեանի, ինչպէս նաև խմբական արտասանութիւն: Հանդէսի երկրորդ մասին, շրջանաւարտներու կողմէն երգուած «Ջրածնայի երգէն» և կարգացուած աղերսէն ետք, Տեսչ. Զօ. Կիրակ Վրդ. կարգաց վարժարանի միամեայ դործունէութեան Տեղեկագիրը՝ զոր պրիմէ ամբողջութեամբ կուտանք ստորև:

«1957-1958 դպրոցական տարեմակի հանդիսաւոր այս պահուն Ձեզ կը ներկայացնեմ տեղեկագիրը մեր դպրոցական մէկ տարուան կրթական աշխատանքին, զոր աշխատեցանք կարելի չափով արդիւնաւոր ընծայել:

Առակներս լինէ: — 1957 Հոկտ. 1ին վերաբացուեցաւ Ս. Թարգմանչաց վարժարանը, 370 երկսեռ աշակերտներով, որոնց 183ը մանչեր, իսկ 187ը աղջիկներ էին: Այս թիւէն 53ը — 37 աղջիկ և 16 մանչ — հետեւեցան մեր երկրորդական կարգերու դասընթացներուն, 246ը — 126 մանչ և 120 աղջիկ — Նախակրթարանի դասընթացներուն, իսկ 71ը — 41 մանչ և 30 աղջիկ — Մանկապարտեզի դասընթացներուն: Աշակերտութեան թիւին զգալի պակասը նախորդ տարիներէն արգիւնք է երուսաղէմեան կ'ժողովուրդի կարեւոր թիւով գաղթին ղէպի Ամերիկա և կամ այլուր:

Ուսուցչական կազմ: — Այս տարի մեր ուսուցչական կազմին թիւն էր 30: Անոնցմէ ութը Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամ եկեղեցականներ են, որոնք կը ծառայեն անվարձ ու յօշտարկամ սիրով:

Գնահատանքի խօսք ունիմ միայն մեր սիրելի ուսուցիչներուն համար, բոլորն ալ որակաւոր, ազնիւ, զոհաբերող ու նուիրուած, որոնց բարի համագործակցութիւնը մեր կրթական գործի վերելքին մէջ ունի իր աչքառու տեղն ու զիրքը:

Կրթական-ուսումնական: — Հրճուանքի զգացումներով միայն կրնանք արձանագրել որ այս երկրորդ տարին է որ իր լրումին հասած է մեր երկրորդական վարժարանի ծրագրին իրագործելու: Մեր ուսումնասէր բայց նիւթական միժուռը, Մեր ուսումնասէր Նախակրթարանի ջոցներէ զուրկ աշակերտները Նախակրթարանի շրջանը աւարտելէ յետոյ այլևս չունին անուսմունք մնալու մտահոգութիւնն ու տառապանքը:

ինչ որ եղաւ՝ մեր շրջանէն շատերուն համար՝ Տարուէ տարի նշանակալից կերպով կը շատնայ թիւը մեր երկրորդական վարժարանի աշակերտներուն ու կարգերը կը ստանան հետզհետէ աւելի հաստատուն և յստակ դիմագիծ ու ձև։

Թէ՛ անցեալ և թէ՛ այս տարի, մեր երկրորդական կարգերու շրջանաւարտները մասնակցեցան նաև Անգլիական G. C. E. (General Certificate of Education) քննութեան։ Անցեալ տարուան մասնակցողները յաջողեցան հետեւեալ նիւթերուն մէջ. — Հայերէն, Արաբերէն, Թուարանութիւն, Գրանշար և երկրաչափութիւն։ Իսկ այս տարի մեր երկրորդական կարգերուն տուած 8 շրջանաւարտներէն եօթը՝ մասնակցեցան նոյն քննութեան։ Արդիւնքը յայտնի կ'ըլլայ Սեպտեմբերին։

Նախակրթարանն ու Մանկապարտէզը նախապէս եղան մեր խնամքին և ուշադրութեան առարկան. մեր կարելին ըրած ենք որպէսզի մեր աշակերտներուն համար զպրոցը ըլլայ փնտռուած շրջանակ մը, իսկ մեր ուսուցումները որքան կարելի է դիւրամատչելի և սիրելի։

Այս տարի կրկնապատիկ ընդարձակեցինք մեր գիտական դասերու յատուկ տարրաւուծաբանի դործիքներու հաւաքածոն, ու յառաջիկայ տարւոյն ընթացքին նախատեսուած 'կրկնապատիկ նոր ընդարձակումի համար արդէն իսկ կատարած ենք նոր ապսպրանք։

Մանկապարտէզը հոխացուցինք մանուկներուն սիրելի մանկավարժական նորութիւններով ու խաղալիքներով, որոնք պիտի դիւրացնեն մանուկներու դաստիարակութիւնը։ Յարմարուելու համար տեղւոյն կառավարական և այլ զպրոցներու կրթական գրութեան, ինչպէս նաև մեր զպրոցէն ներս ուսումնական տարեշրջաններուն աւելի լաւ դասաւորութիւն մը ըրած ըլլալու համար, Մանկապարտէզի Ծաղիկ դասարանը, որուն կրթական մակարդակը անցեալ տարիներուն հասցուցած էինք Նախակրթարանի Ա. դասարանի կրթական մակարդակին, այս տարի դասաւորեցինք Նախակրթարանի կարգին որպէս Առաջին դասարան։ Այս հասկացողութեամբ ալ երկրորդը կոչուեցաւ երրորդ և այսպէս շարունակաբար մինչև Զ. դասարան որ կոչուեցաւ երկրորդական Ա. դասարան, և որ ունի երկ. Ա. դասարանի մը անհրաժեշտ կրթական մակարդակը։ Այս փոփոխութիւններով, մեր երկրորդական բաժինը ունեցաւ հինգ կարգեր, մինչ Մանկապարտէզն ալ տարի մը զեղչուելով ունեցաւ երկու կարգեր միայն։ Այս գրութեամբ, նոր աշակերտներուն վարժարան ընդունելութեան տարիքն ալ վերածուեցաւ 4էն 5ի։

Թէ՛ Նախակրթարանի և թէ՛ երկրորդական վարժարանին մէջ ուսուցուեցան երեք լեզուներ. Հայերէն, Արաբերէն, Անգլերէն։ Այս տարի ստիպուեցանք Ֆրանսերէնը զանց առնել, մեր բնականորոշուած կրթական ծրագիրը թեթեւեղեցուցան հոգեպարար արարողութիւններուն։ Զարկ տուինք նոյն առնես հոգեոր երաժշտութեան ուսուցման։ Ս. Ձատկի, Ս. Դննդեան և Թարգմանչաց զոյգ տոներուն առթիւներով, տարին չորս անգամ, մեր աշակերտները մասնակից եղան Ս. Հաղորդութեան Խորհուրդին։ Մեր հրաւերով, նոյն հոգեպարար շնորհքին արժանացան նաև օտար երկրորդական վարժարաններու հայ աշակերտները։

աշխատանքներուն շնորհիւ, այլև այն պատճառաւ որ մեր ուսուցչական կազմէն ալ կարևոր թիւ մը կը բաղկանայ օտարներէ ու մեր աշակերտները ստիպուած են ունենալ օտար լեզուներու վարժութիւն։

1958 Յունիս 24-Յուլիս 2 տեղի ունեցան մեր ամառային քննութիւնները։ Մեր 370 աշակերտութեան 330ը յաջողութեամբ կը փոխեն իրենց դասարանները, մինչ 40 աշակերտներ կը կրկնեն իրենց դասարանները, կրթական մարդիկ մէկ իրենց անբաւարար աշխատութեան պատճառաւ։ Մտէն հետեւեցանք ու հսկեցինք մեր կրթական ծրագրի լաւագոյն իրադրոժման, տարւոյն ընթացքին քանիցս քննութեանէ անցուցինք բոլոր դասարաններու բոլոր աշակերտներու պարտականութիւնները, մեր նշմարած թերութիւնները զրաւորապէս յանձնեցինք ուսուցիչներու ուշադրութեան։

Մեր կրթական ծրագրին որպէս օժանդակ այս տարի սկիզբը դրինք զպրոցական գրադարանի մը, որ հետզհետէ պիտի ճոխացնենք։ Ասոր բարակից կերպով կրնանք յիշել որ արժարժեքիւ համար հայեցի մշակոյթին, պատմութեան ու հաւատքին սէրը, պատրաստել տուինք բազմաթիւ նկարներ, ազգային նշանաւոր դէմքերու, դէպքերու, գրադէտներու, դործիչներու, հայ արուեստի արժէքաւոր կոթողներու, հայրենի քաղաքներու և շէնքերու, որոնք յատուկ դասաւորումով մը պիտի զարդարեն մեր զպրոցի պատերը։

Ոգի, բարոյակամ ու կրօնակամ դասախաղութիւն. — ինչ որ մեր զպրոցական ծրագրին և ձգտումներուն ամենէն էական և ամենէն դժուար իրադրոժելի մասն է։ Հայ մարդ, բայց լաւ մարդ, ահա մեր նշանաբանը։

Հայ մարդ, բայց մանաւանդ լաւ մարդ, լաւ բրիտոնեայ մարդ, կրօնական ու բարոյական առողջ դաստիարակութեամբ օժտուած։ Այս նպատակաւ բոլոր դասարաններու համար ունինք շարաթական քանի մը պահ կրօնքի դասը։ Մեր աշակերտները ամէն կիրակի և այլ տօնական առթիւներով մեր առաջնորդութեամբ յաճախեցին եկեղեցի, ու յաճախ և այս տարի ամենէն աւելիով, անոնք մասնակցեցան եկեղեցական արարողութեանց։ Առ այս մեզի համար մեծ դիւրութիւն մը եղաւ Գեր. Լուսարարապետ Ս. Հօր կարգադրութեամբ 70 եկեղեցական նոր շապիկներու շինութիւնը, որով մեր աշակերտները լայն կարելիութիւնը ունեցան մասնակցելու եկեղեցական հոգեպարար արարողութիւններուն։ Զարկ տուինք նոյն առնես հոգեոր երաժշտութեան ուսուցման։ Ս. Ձատկի, Ս. Դննդեան և Թարգմանչաց զոյգ տոներուն առթիւներով, տարին չորս անգամ, մեր աշակերտները մասնակից եղան Ս. Հաղորդութեան Խորհուրդին։ Մեր հրաւերով, նոյն հոգեպարար շնորհքին արժանացան նաև օտար երկրորդական վարժարաններու հայ աշակերտները։

Ընդհանուր գոհունակութեան խօսք ունիմ մեր վարժարանի աշակերտութեան վարք ու բար-

քին չուրջ, մանաւանդ երբ բաղդատութեան կը զննէք այլ դպրոցներու աշակերտութեան հետ, մերինները կը գտնենք նկարագրով, վարքով ու բարքով շատ աւելի օրինակելի: Եւ արժանիքի փաստ մըն է մեր աշակերտութեան համար եթէ ըսեմ որ մեր պաշտօնավարութեան եօթը տարին հետոյ ընթացքին ոչ մէկ ուսանողի վտարում ունեցած ենք, ոչ միայն աւտոր համար որ մենք անձնագէտ ալ երբեք չենք փախաբան զայդ, այլեւ մեր տղաքը իրենց ընթացքով տեղի չեն տուած նմանօրինակ պատժներու իրագործումին:

Մարգարան կեանք: — «Առողջ հոգի առողջ մարմին» մէջ՝ կ'ըսէ դասական առածը: Մեր աշակերտներու մտաւորական և հոգեկան դաստիարակութեան հետ ոյժ տուինք նաեւ անոնց ֆիզիքական դաստիարակութեան: Մարզանքը մաս կը կազմէ տղոց ամենօրեայ ժամանակացոյցին, այս տարի նոյն սկզբունքը առաջին անգամ ըլլալով կիրարկեցինք նաեւ աղջիկներու համար:

Տարուայ ընթացքին տղաք բաժնուած Ազատ, Արեւմտ և Մարտի անուններով երեք մարզական խումբերու, իսկ աղջիկները Աւան, Երեւան և Անի անուններով երեք այլ խումբերու, կատարեցին իրենց մարզական վարժութիւնները, Զորայօղի, Վոյկայօղի և Պաւլէրայօղի միջխմբական մրցումները, ինչպէս նաեւ ունեցան հետեւեալ մրցումները հայկական և օտար կազմակերպութիւններու հետ, հետեւեալ պատկերով. — Ֆուտբոլի 6 մրցումներէն 5ը ի նպաստ վարժարանիս, Վոյկայօղի 5 մրցումներէն 3ը ի նպաստ վարժարանիս, Պաւլէրայօղի 3 մրցումներէն 1ը ի նպաստ վարժարանիս, Փինկ-փօնկի 3 մրցումներէն 2ը ի նպաստ վարժարանիս:

Մեր տարեկան Դաշտահանդէսը, մասնակցութեամբ մեր տղաքներուն և աղջիկներուն, տեղի ունեցաւ 8 Յունիս 1958ին, նախագահութեամբ Ալեք. Տ. Տիրան Ս. Արքեպիսկոպոսի, Ժառանգ. վարժարանի գաւառի վրայ. ու այս առթիւ մեր աշակերտները լաւագոյն կատարումով մը ցուցադրեցին իրենց տարուան մը մարզական աշխատանքին հանդէսը՝ որ յամենայնիւ կը գերազանցէր նախորդ տարիներունը:

Արեւմտեան և Սկաւսներ Ս. Թարգմանչաց Վարժարանի: — Մեր Սկաւսներու և Արեւմտեան կազմակերպութիւնը կը գտնուի իր յառաջդիմական ընթացքին մէջ. անոնք ամէն շաբաթ կ'ուսնան իրենց կանոնաւոր դասախօսութիւններն ու խաղերը: Իրենց համար խանդավառութեան առիթ մը եղաւ անցեալ ամառային դպրոցական արձակուրդին մեր կողմէ կազմակերպուած եօթն-

օրեայ բանակումը՝ Պարոնտէրի ամառանոցին մէջ:

Կարգ մը արգելիչ պատճառներով թէեւ զանազան բայց յամառօրէն կ'ուսնայ թիւը մեր Սկաւսներուն, որ տարուայ տարեմէն հասած է 20ի, իսկ Դաշտիկներուն թիւը՝ 35ի: Իսկ մեր Արեւմտեաններուն թիւն է 40, Արժուիկներուն՝ 60: Տարուայ ընթացքին մեր կողմէ ամբողջացան թէ՛ Արեւմտեաններու և թէ՛ Սկաւսներու համագլխօրէն, իսկ Սկաւսապետը՝ Պր. Պողոս Արքայապետ:

Չեւագործային աշխատանք և Տարեկան Պաշտ. Թարգմանչաց Վարժարանի: — Ուսանող ու հիւններու համար ունենալ ամենօրեայ ձեռագործական աշխատանքներու պահեր, ու այս մարդին մէջ մեր վարժարանը արձանագրած է նշանակելի յառաջդիմութիւն, ինչ որ լայն գնահատանքի առարկայ եղած է միշտ ալ: Ուսն ձեռագործները յօգուտ վարժարանիս վաճառքի դրուեցան մեր տարեկան Պաշտարան՝ որ տեղի ունեցաւ 1958 Մայիս 31 Եւրոպէ և Յունիս 1 կիրակի երկու օրերուն, և ուրուն իրենց գործնական լայն մասնակցութիւնը բերին մեր ուսուցչական կազմը ու երեսօտէ մահայ խումբ մը օրիորդներ և տիկիւններ: Այս առթիւ ունեցանք նաեւ մեր գաղութէն նախնաւորներու խումբ մը, որոնց բոլորին կը յայտնենք մեր շնորհակալութիւնները: Իսկ թէ՛ ընկերային և թէ՛ անտեսական տեսակետներէ մեր Պաշտարանը յաջողութիւն մը, որովհետեւ մեր գաղութին բոլոր անդամները մեր դպրոցական յարկին տակ առիթը ունեցան լաւագոյն ընկերային հանդիպումի մը, իսկ մեր դպրոցն ալ ունեցաւ 336 Յորդանանեան Տիւնարի զուտ շահ մը:

Հայ Արեւմտի Յուցանմունք: — Ոգտուելով մեր տարեկան Պաշտարանի առիթէն, կազմակերպեցինք նաեւ Հայ Դպրոցական և ճարտարապետական արուեստներու ցուցահանդէս մը, մօտ 120 ցուցանաւոր և միագոյն լուսանկարներով, իւրաքանչիւրին մանրամասնեալ բացատրութիւններով միասին, իր ժամանակին սոյն ցուցահանդէսը մեծ հետաքրքրութիւն ստեղծեց մասնաւորաբար օտար և ձեռնհաս շրջանակներու մէջ, որոնք քանիցս խնդրեցին կրկնել այս ցուցահանդէսը: Միտք ունինք մօտ ապագային աւելի ընդարձակ ծրագրով կրկնել սոյն ձեռնարկը:

Տնտեսական: — Մեր դպրոցական կրթական ծրագրին զուգընթաց ընդարձակուած է նաեւ մեր ծախսեց գլուխը: Այստեղ կուտանք ընդհանրաւ մեր տարեկան եկամուտին, քաղելով Ս. Արժուայ ելեմտի Տնտեսական հաշուի տեսակետներէն, 1957 Մայիս 1էն մինչև 1958 Ապրիլ 30:

Ե Լ Բ

Ամսական պատճեններ	4242.000
Պաշտի և ձեռագործի ծախք	240.580
Հանդէսներու ծախք	53.510
Վաճառելի գրեկական	642.720
Տարալուծարանի գործիքներ և stencil մեքենայի մը գնման	100.750
Մանր ծախք, գրեկական և նորագ.	266.540
Սկաւսներու գգեսու	20.390
	5566.490

Ե. Տ. Յիլ

4242.000
240.580
53.510
642.720
100.750
266.540
20.390
5566.490

Մ Ո Ւ Ց Ք

Թ. Ց. Ֆիլմ

Առակերտաց բնակիչներէ	895.300
Վանաձորաց գրէներէ	677.260
Պաղարէն եւ ձեռագործներէն	487.010
Հանդէսներէ եւ ֆոնարներէ	103.930
Նուիրատուութիւններէ(*)	3134.336
	5297.836
Իրախօց առաւելութիւն վնարեայ Ս. Սրբուն	268.654

Ինչպէս կը տեսնէք, մեր մուտքին կէսէն աւելին գոյացած է նուիրատուութիւններով, 3134 տինար: Այս գումարը արդիւնք է մեր կողմէ կատարուած բազմաթիւ թղթակցութիւններուն ու յամառ աշխատանքին:

Բարեբաւեր: — Այս աշխատանքով մենք կըրցած ենք մեր զարգացական գործին վրայ հրաշքել ուշադրութիւնը կրթաւէր եւ աղին աշխատող հայերուն՝ որոնց արտին զոները միշտ բաց

եղան յանուն մեր սիրելի մանուկներուն եւ յանուն անոնց կրթական գործին մեր կոչերուն: Աղին հայեր՝ որոնք իրենց արդար աշխատանքէն բաժին մը հանեցին նաեւ հայ մշակոյթի գործին ու մեզ կարելիութիւնը տալին կրթական աշխատուող մանուկներուն: Ստորեւ կուտանք մէկ առ մէկ անունները այդ բոլոր նուիրատուներուն եւ նուիրատուութեանց քանակը:

1957

Յոգանմանեան Տիւար

Օգոստ. 28. — Տիկին Արթուրիս Սողիկեան, Շիրակ	9.000
» » Տիւր Պետրոս Զօղանեան, Ռէյսին	18.000
» » » Վ. Էղոյեան, Սարգսիկ	9.000
Սեպտ. 1. — » Գրիգոր Պարոնեան, Լոս Անճելլոս	9.000
» » » Արմի Աւետեան, Ֆրէզնո	9.000
» » Տիկին Լուսին Կիրակեան, Ֆիլատելֆիա	9.000
» » » Լիլի Գասպարեան, Սարգսիկ	9.000
» » Mr. & Mrs. Club, Բաստօն	9.000
» » Բաստօնի եկեղեցւոյ Տիկնանց Միութիւն	9.000
» » Օրիգոն Պէրթա Նանարեան, Նորթ Պլէյկէն	9.000
» 30. — Կիւլայի Կիւլայեան Զինարկութեան	360.000
Նոյեմ. 1. — Տիւր Արա Եսարս, Նիւ Կորթ	9.000
Դեկտ. 12. — Այնթապի Հայրենակց. Միութիւն, Ամերիկա	19.000
» » Տիւր Ջորճ Պէյլեյեան, Տիթթոյթ	18.000
» » Տէր եւ Տիկին Բ. Ասպեան, Շիրակ	9.000
» » Բիւրանոյ Հայր. Վեր. Միութիւն, Ամերիկա	43.000
» » Տիւր Թադէոս Թէմուզեան, Եղեմ	9.500
» » UNRWAT	320.000
» 31. — Mr. & Mrs. Club, Բաստօն	18.500
» » Տիւր Զաւի Արմանեան, Բաստօն	9.200
» » » Գառնիկ » » »	9.200
» » » Սեմիան Փիլիպպոսեան, Ֆիլատելֆիա	38.500
» » Տիկին Վ. Նեսուրեան, » » »	38.500

1958

Յունի. 2. — Տիւր Արսաէս Օսպալեան, Ֆիլատելֆիա	8.91
» 23. — Տիկին Մեծօրիւպէ Թիմուր, Լոս Անճելլոս	9.100
» » 1st Congr. Church Ladies (Wellesley)	8.500
Փետր. 1. — Տիւր Ճիվան Խարակոզեան, Ֆրէզնո	8.200
» 2. — Հայ Կարօս Ուսանողներու Ամերիկանոյ Բարեկամ Եր	236.000
» 6. — UNRWAT	100.000
» 13. — Տիւր Զարի Աւետեան, Ռիչմոնտ	8.500
» 22. — Կրտսէր Տիկնանց Միութիւն, Ֆիլատելֆիա	8.000
» 23. — Տիւր Սեդրաք Սարգսեան, » » »	10.500
» » Օրիգոն Համեսուրի Ամերիկեան, Թուլարի	17.000
» » Տիկին Թումանեան, Լոս Անճելլոս	8.500

(*) Այս նուիրատուութիւններուն մէկ մասը, նուիրատուներու անուններով միասին երեւցած են մեր նախորդ տարուան Տեղեկագրի ցուցակներուն մէջ:

1958

Յարդանանեան Տիւար

Ապրիլ 29. — Տիար Աղաթի Այվազեան, Սարրամէնթօ	9.050
» » » Ճան Օհաննէսեան, Յրէզնօ	9.050
» » Տիկին Մ. Միքայէլեան, Պոսթոն	9.050
» » » Ուլսաննա Տէր Յակօբեան, Պոսթոն	9.050
» » Mrs. H. A. Collins, Օրլէնս	9.050
» » Տէր Է. Տիկին Աւետիս Սուսանեան, Նիւ Եորք	9.050
» » Տիար Սիմօն Ճիւլիէօզեան, Տիքթոնթ	9.050
» » Տիկին Սրբուհի Պետկեան, Նիւ Եորք	9.050
» » Տիար Սիմօն Շմաւոնեան, Նիւ Եորք	9.050
» » Տիկին Ս. Լ. Յակօբեան, Յրէզնօ	36.000
» » » Աբօյօնիա Սողկիեան, Շիրակօ	9.050
» » » Թագունի Դանիէլեան, Պոսթոն	9.050
» » Տիար Արմի Աւետեան, Յրէզնօ	9.050
» » » Ա. Բարիջանեան, Ռիտլի	9.050
» » Օրիմոյ Զարուհի Ապանեան, Էվընսթըն	9.050
» » Տիկին Լիլի Գասպարեան, Սարրամէնթօ	9.050
» » Տիար Արա Եարսըմ, Նիւ Եորք	9.050
» » Տիկին Սարգիսիկ Տէր Գալիթեան, Քլիվլէնս	8.500
» » Տիկին Հայասան Պէլքը, Յրէզնօ	8.500
» » Տիքթոնթի Հայ Վեթերաններու Միութիւն	17.500
Մայիս 15. — Հաւարք Գարակէօզեան Հիմնադրութիւն (Օր. Լ. Գարակէօզեանի միջոցաւ)	302.000
» » Տիկին Կիլի Այվազեան, Նիւ Եորք	7.240
» » » Սառա Խոյիկեան, Պոսթոն	9.050
» 31. — Տօքթ. Մ. Յակօբեան, Յիւստէյնիս	9.000
» » Տիար Պետրոս Զօպանեան, Ռէյսին	18.000

Այս առթիւ կ'ուզենք ընել հետեւեալ յիշատակութիւնները: Ինչպէս կը տեսնէք, մեր մեծագումար նուիրատուներու կարգին կուգան. —

Հաւարք Գարակէօզեան Հիմնադրութիւնը: — Որ տարեկան 1000 տոլարի շարունակական նուիրատուութեամբ կը պահէ մէկ ամբողջական դասարան մը: Կարգադրեցինք որ, յետ այսու, մեր երկրորդական Բ. դասարանը նկատուի Հաւարք Գարակէօզեան Դասարան, ու առ այս զետեղեցինք նաև հանգուցեալ Հաւարք Գարակէօզեանի աւանդով յիշատակարան մը նոյն դասարանի ճակատին: Մեր զգածուած շնորհակալութիւններ թէ՛ կազմակերպութեան և թէ՛ մանաւանդ այս նուիրատուութիւնը կարելի դարձնող անձին, Օր. Լիլիա Գարակէօզեանին, կրթանուէր և շատ սիրուած ազնիւ հայուհիին՝ որուն մօտէն հետաքրքրութիւնը հայ կրթական գործին մեզ բոլորս երախտապարտ կը ձգէ:

Կիլիպի Կիլիպէնեան Հիմնադրութիւնը: — Որ տարեկան 1000 տոլարի նուիրատուութեամբ մը կը պահէ ամբողջական դասարան մը, դարձեալ կոչուած իր անունով (երկրորդական Գ. դասարան): Շնորհակալութիւն Հիմնադրութեան բոլոր կրթանուէր անդամներուն:

Համաեքսոսահայ Վեթիքից Միութիւնը: — Այստեղ կը յիշատակենք զիրենք մասնաւորապէս անոր համար որ թէև ցարդ մեզ չէ հասած գումարը և սակայն անցեալ դպրոցական տարեշրջանին համար արդէն իսկ խոստացած են 600 տոլարի նուիրատուութիւն մը, զոր շուտով կը ստանանք, համաձայն իրենց վերջին նամակին:

Հայ Ուսանողներու Ամերիկանայ Բարեկամներու

Միութիւնը: — Խումբ մը Ամերիկահայեր են ասոնք որոնք զխաւարութեամբ Պր. Մովսէս Մովսէսեանի կազմակերպած են Մերձաւոր Արևելքի Հայ դպրոցներու օժանդակութեան ձեռնարկ մը: Այս ձեռնարկէն մեր զարցըր օգտուած է 236 տիւարի գումարով մը: Շնորհակալութիւն բոլորին, ինչպէս նաև իրենց Պէլքըթեանի պատուոյ գործակալ Պր. Ճօրճ Զամիլեանին:

Օրհնեալ ըլլան մեր բոլոր նուիրատուները և թող առատանան Աստուծոյ բարիքներով:

Մեր Շնորհաւարները: — ա) Մանկապարտէզի չրջանաւարտներ, թիւով 60, որոնք անցեալ Կիրակի արդէն իսկ ստացան իրենց Մանկապարտէզի աստատական վկայականները Զերդ Սրբազնութենէն:

բ) երկրորդական վարժարանէն չրջանաւարտ աշակերտներ, 8 երիտասարդ-երիտասարդուհիներ, ազնիւ, ուշիմ, ազգանուէր և բարի հոգիներ, որոնք մօտահեմ որ պիտի ըլլան մեր դպրոցին և վանքին պատիւ բերող անձնաւորութիւններ, ու հաւատարիմ պիտի մնան իրենց ազգին, մայրենի եկեղեցիին և մեր Ս. Աթոռին:

Ի վերջ Տեղեկագրիս, յանուն Ս. Թարգմանչացի վարժարանի աշակերտութեան, անոնց ծնողներուն և ուսուցչական կազմին կը յայտնենք սրտազին շնորհակալութիւն Զերդ Բարձր Սրբազնութեան, Պատ. Տնօրէն Ժողովին և Ս. Յակօբեանց Միաբանութեան, Զեր Բարձր հովանաւորութեան, գործընկերներին և անմիջական հետաքրքրութեան համար, ինչ որ մեզ բոլորիս համար եղաւ խթան աշխատանքի ու խանդավառութեան, ու խարիսխը մեր դպրոցական բոլոր նուաճում-

ներսն։ Որչափ բարեբաղում էր գգանք մեծ քանակ մասնաւորաբար Սուրբ Քաղաքի զփրախա այս օրերուն, երբ կը մտածենք օր Ս. Թարգմանչաց վարժարանի կրթական գործը շնորհիւ Ձեր Որբագնութեան և Ս. Աթոռի քոյմադակ Միա-

բնդունեցէք, սիրելի Որբագան Հայր, մեր օր, զիսկան սիրոյ և յարգանաց հաստատեցէք։

Հանդէս աւարտին, Ամեն, Որբագան Հայր կատարեց Վհայականներու և մրցանակներու բաշխումը երկրորդական քաւնի 8 երկսեռ ընթա-



ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ ՌԵՍՈՒՑԵԱԿԱՆ ԿԱՅՐ ԵՒ ԵՐՁԱՆԱԿԱՐՏՆԵՐ

բանութեան ոչ միայն չէ ազդուած Ս. Քաղաքի տաղնայնեակէն, այլև յարատե ճիշդերով կատարած է կրթական աշխատութեան նուաճումներ։

Մեր երախտագրտական զգացումներուն հետ

ցատարաններուն, և հանդէսը փակեց ուսանողներուն և ձեռնդներուն ուղղած իր ապաստիլ յորդորականով ու Տէրունական աղօթքի միաբերան երգիցողութեամբ։

ՍՄՍՎԱՐՋԻ ՀԱՆԳԷՍ

ԺԱՌԱՆԳԱՆՈՐԱՅ ՎԱՐՄԱՐԱՆԻ

ԵՒ

ԸՆԾՈՍԱՐԱՆԻ

17 Յուլիս, Հինգշաբթի երեկոյան ժամը 7.30ին տեղի ունեցաւ Ժառանգ. վարժարանի և Ընծայարանի Ամառիկի Հանդէսը և Մրցանակաբաշխութիւնը՝ վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ընտրեալ Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան Պատ. Միաբանութեան անդամներուն և հրաւիրեալներու բազմութեան։

Հանդէսը սկսաւ «Որտ ի սիրտ» վարժարանի քայլերգով, որմէ ետք Ընծայարանի Սարկաւաղներէն և Ժառ. սաներէն ոմանք ըրին արտասանութիւններ՝ հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով, կարգային ինքնագիր շարադրութիւններ, տուին խմբերգներ՝ զեկամարութեամբ Պր. Վահէ Գալայաններէ։

Հանդէսին երկրորդ մասը սկսաւ «Ով յարկ

ման» երգով։ Ապա, Բար. Դաւիթկ Սիկ. կարգաց խնամաւած ուղերձ մը ի դիմաց վարժարանի ուսանողութեան՝ ուղղուած Ամեն. Որբագան Հօր, որմէ ետք Տեսուչ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. կարգաց վարժարանի միամեայ գործունէութեան մանրամասն տեղեկագիրը՝ գոր կու տանք ստորեւ։

«Ամառիկի այս հանդէսը առիթ մըն է որպէս զի անդրադառնանք երեսուցէմի Ժառ. վարժարանի և Ընծայարանի 1957-58 չրջանի մէկ տարուան աշխատանքներուն և ձեռք բերուած արդիւնքներուն։ Այս առիթը, Աստուծոյ օրհնութիւնը կը հայցենք մեր ժողովուրդին այն դաւաճներուն վրայ, որոնք իրենց նիւթական օժանդակութիւնը չեն զլանար Ժառ. վարժարանին, տարեկան իրենց կանոնաւոր նուիրատուութեամբ։

Նսանակում նոր Տեսլի և Ժառ - Տեսլի։ — վարժարանին Տեսուչ Դեր. Տ. Հայկազուն կարգի Ս. Էջմիածին փոխադրուելու հետեանքով, վանքին համար, ինչպէս նաև համազգային տեսակէտով

կենսական այս Հաստատութիւնը՝ Ժառ. Վարժապետը, կը մնար առանց տեսուչի։ Զերդ Ամենապատեւութեան 14 Սեպտեմբեր 1957 թուակիր հրամանագրին և Պատ. Տնօրէն Ժողովի որոշման համաձայն, առժամայէս ստանձնեցի Ժառ. Վարժարանի Տեսչութիւնը, իրրեւ օգնական և փոխտեսուչ աշխատակից Նոյ - Տ. Արիս Արեղայ Երվանդանը, որ Օգոստոս ամիսէն նշանակուած էր այդ պաշտօնին։

1957 Նոյեմբերին, Նոյ - Տ. Արիս Արեղայ հրաժարելով փոխ-տեսուչի պաշտօնին նշանակուեցաւ Նոյ - Տ. Լեւոն Արեղայ Արեղանը, որ խելճ-մտօրէն կատարեց և կը կատարէ իր պաշտօնը, Նոյ - Տ. Արիս Արեղայի փոխ-տեսչութեան չըջանէն հաստատուած կարգապահութիւնը շարունակելով աշխատողներու ամենօրեայ կենցաղին մէջ։

Աւսուցչական կազմ։ — Նոյնքան բարերախոս կը զգամ ինքզինքս, ինձի գործակից ունենալու համար դասը ուսուցչներու, որոնք իրենց պաշտօնին գիտակցութեամբ, իրենց դասաւանդած նիւթերուն և աշակերտներուն հանդէպ ունեցած իրենց սէրով, և տեսչութեան հետ գործակցելու իրենց պատրաստակամութեամբ, մեծապէս թեթեւեղեցին տեսչին և փոխ-տեսչին ուսերուն ծանրացոյց ընդը։

Ժառ. Վարժարանի և Ընծայարանի ուսուցչական կողմը, բացի Զերդ Ամենապատեւութեանէն, որ Ընծայարանի աշխատողներուն հաճեցաք դասաւանդել ընդ. Եկեղեցւոյ Պատմութիւն և Իրարար լեզու, կը բաղկանայ տասը հոգի որակաւ և վեց աշխարհական ուսուցչներէ։ Ետքիչ քաջատեւութեամբ, ուսուցչները կանոնաւորաբար և ժամանակին ներկայ գտնուած են իրենց դասերուն։ Իւրաքանչիւր դասարանի մէջ ուսուցչներուն ստորագրութեան համար գրուած ներկայութեան տետրակէն կարելի է տեսնել ամսական

Աւսուցչական ժողովներ։ — Տարուան ընթացքին ունեցած ենք ուսուցչներու հետ ամսական ժողովներ։ Թիւով ութը նման ժողովներու մէջ որոշումներ տրուած են աշակերտներու նիշերու առօրինակաւորման մասին, ինչպէս նաև նկատի առնուած են իւրաքանչիւր աշակերտին աշխատասիրութեան, նկարագրին և ընդհանուր վարքաւորակերպին հետ կապ ունեցող հարցեր և նկատողութիւններ, ուսուցչներուն և Տեսչութեան կողմէ մատակարարուած և իսկ աշակերտներուն պատահութեան տուած են որ իրենց դիտողութիւնները կատարեն ուսուցչներու և դասնիւթիւններու մասին, ներկայացնելու համար գանձեք ուսուցչական ժողովներուն։

Ուսուցչական ժողովի մէջ որոշուած կայացնելէ յետոյ, յայտնած են աշակերտներուն թէ իւրաքանչիւր դասանիւթի համար անցման նիշն է 60՝ հարիւրի վրայ։ Նոյնը նաև ընդհանուր միջնորդ, դասարան փոխելու համար։ Իսկ դասանիւթերը բաժնուած են աւագ և կրտսեր խումբերու, ըստ մեր վարժարանին մէջ անոնց ունեցած կարեւորութեան։ Եւ դասարանին բոլոր դասերուն տրուած բարձրագոյն թիւերուն ընդհանուր գումարը այնպէս մը կարգադրուած է որ

հասարակ 1000 թիւին։ Իսկ աշակերտին առաջնութեան կարգը իր դասարանին մէջ կ'որոշուէ իր շահած թիւերուն ընդհանուր գումարով։ Իր դասարանին՝ և մասնաւոր դասերու մէջ յառաջագիմ աշակերտը մրցանակ կը ստանայ, եթէ սակայն իր միջինը 100ի վրայ 75 կամ աւելի է։

Բացի նոր գնուած դասագիրքերէ, սրէնսլով բարձրագոյն դասանիւթերը հետեւալ դասերուն. — Ու. Երկրի Պատմութիւն, Ու. Գիրք, Իմաստասիրութիւն և Աստուածաբանութիւն։

Անսական նիշերէն դատ, աշակերտներուն տրուած են նիշեր կրկու պաշտօնական քննութիւններու առիթով — կրտսէրայ յնութիւններ, որոնք տեղի ունեցան Փետրուար 11-19, և ամառի ընթացքին թիւներ՝ Յունիս 23-Յունիս 1։

Խնդրաց Դէք քրիստոնէի։ — Ուսուցչներու հետ խորհրդակցութեանց չափ կարի որ կը նկատուի ծնողներու բարոյական ազդեցութիւնը իրենց դասակարգ վրայ։ Եւ որովհետեւ մեր վարժարանը շատ իմաստուն սկզբունք մը որդեգրած է կրտսէրակէն և չըջակալէն աշակերտներ չընդունելու, աւտի թղթակցութիւններ կատարած են աշակերտներու ծնողաց հետ, կրտսէրայ քննութիւններէն յետոյ անոնց զրկելով իրենց դասակարգ ամսական դասաւանդութեանց և կրտսէրայ քննութեանց մէջ ձեռք բերած կրթական յաջողութեան և վարք ու բարքի պատկերը։ Երկրորդ նամակով պարզած են ծնողներուն իրենց դասակարգ նիւթական կացութիւնը, յայտնելով որ աշակերտներուն անձնական զրամբ ի պահ կը գրուի փոխ-տեսչին մօտ, ելքն ու մուտքը արձանագրելով առանձին տոմարի մը մէջ, որպէսզի աշակերտները անհրաժեշտ պիտոյ քննութեան համար միայն գործածեն զայն։

Բացի թղթակցութիւններէ, առիթ ունեցայ ծնողքներէն ոմանք անձնապէս ճանչնալու և խօսելու անոնց իրենց դասակարգ մասին, երբ անոնք այցելութեամբ և կամ Ս. Զատիկի առթիւ ուխտաւորաբար Երուսաղէմ գտնուեցան։ Այնքան կարի որ էր և օգտակար եղաւ այս անձնական ծանօթութիւնը ծնողաց հետ, աւելի լաւ ըմբռնելու տեսակէտէն աշակերտին նկարագրի կարգ մը զիմերը։ Սուրբ Զատիկի առթիւ Երուսաղէմ եկած ծնողքները քննակցան վարժարանի ձեռնարանին մէջ, և Զատիկի գիշերը ունեցանք հաւաքով մը՝ ծնողներու և բարեկամներու ներկայութեան, ուր աշակերտները կատարեցին երգեր և արտասանութիւններ, և ես պատշաճ նկատեցի խօսիլ Ժառանգաւորաց վարժարանի և անոր նպատակի մասին։

Տակաւին, գանազան ծնողներու 27 նամակներ գրած են իրենց դասակարգ կապակցութեամբ, ասոնց իրրեւ աշակերտ ընդունուելուն և կամ վարժարանէն հեռանալուն առիթով։ Իսկ բացի օրական ցաւակցական նամակներէ, գրուած երկու տարեկաններու ընտանիքի անդամներուն, ընտանիքին հօրը մահուան առիթով, տասնեմէկ վկայագրեր տրուած են զիմում կատարած հին ժառանգաւորներու և վարժարանէն տարուան ընթացքին մեկուսւած աշակերտներու։

Ուսանողությունը: — 1957 Յուլիս 1ին, ժառանգաւորաց վարժարանին մէջ ներկայ էին 25 աշակերտներ՝ չորս դասարանով, իսկ Ընծայարանին մէջ վեց սարկաւազներ՝ Ընծայարանի Ա. տարին աւարտած՝ Նոյն տարւոյ Յունիսին, Ընծայարանի Գ. և Բ. դասարաններու չորս սարկաւազները միասին արեւոյյ ձեռնադրուած էին, վերակոչուելով Տ. Դաւիթի, Տ. Արիս, Տ. Լեւոն և Տ. Ոհան:

Ժառանգաւորաց վարժարանի աւարտական Գ. դասարանէն երեք հոգի միայն յանձնառու եղան կուսակրութեան ուխտին և սարկաւազ ձեռնադրուեցան: Պատ. Տնօրէն Ժողովը նկատի առաւ աշակերտներու կրթական վիճակը և կարելիութիւնները, և որոշեց ժառ. վարժարանին մէջ պահել 20 աշակերտ միայն, Նախապատրաստական և Առաջին դասարաններու բաժնուած, իսկ Ընծայարանի և ուսանողներու վրայ աւելցնելով երեք նորերը, կազմել Ընծայարանի մէկ դասարան միայն:

1957 Յունիսին, Պատ. Տնօրէն Ժողովի որոշումով երբ այցելեցի Սիրիոյ և Լիբանանի 30 հայ վարժարանները, ժառանգաւորաց վարժարանի համար աշակերտ ընտրելու պաշտօնով, գիւմուս կատարած 30 աշակերտներուն մէջէն միայն հինգը յանձնարարած էի իբրև յարմարագոյնները: Ասոնցմէ զատ, ուղղակի վարժարանի Տեսչութեան ղիմով կատարողներ եղած են, և 1957 Հոկտեմբեր 1ին դասաւանդութիւնները սկսուած են 26 ժառանգաւոր և 9 Սարկաւազ ուսանողներով:

Տարուան ընթացքին, այս ուսանողներէն հինգը իրենց ծնողաց մօտ զրկուեցան իբրև անկարգ կամ ուսման անատակ աշակերտներ: Իսկ ութը հոգիներ հեռացան վարժարանէն, կամ իրենց ծնողաց կարօտին չղիմանալով, կամ, ըստ իրենց, կարգապահական կենցաղը ծանր գտնելով: Ընծայարանի ուսանողներէն երեքը զրկուցին իրենց ուխտին:

Վարժարանի ներքին կեանքը: — Ժառ. վարժարանի ներքին կեանքը հնչող կեանք մը չէ՝ տըրուած ըլլալով որ, բացի ուսումնական պարտականութիւններէն, աշակերտները պարտաւորութիւններ ունին ժամապաշտական, Սուրբ Տեղեաց և Միաբանութեան հաւաքական կենցաղին պահանջներուն նկատմամբ:

Հոգեւոր այս Հաստատութեան նպատակն է նախ սեռմունքով և նկարագրով կիրթ անհատներ պատրաստել, հաւատարմօրէն ծառայել կարենալու համար Քրիստոսի Սուրբ եկեղեցիին մէջ և հայ Ժողովուրդի հոգեւոր ու մշակութային յառաջդիմութեան համար: Երկրորդ՝ վարժեցնել աշակերտը կարգապահութեան և օրէնքներու հնազանդութեան:

1948էն ի վեր, տնտեսական, կրթական, ներքին ու արտաքին աննպաստ պայմաններ իրենց խորունկ հետքերը թողած էին նաև ժառ. վարժարանի ներքին կեանքին վրայ, նման այգիի մը՝ որուն ցանկապատը քայքայուած, ինչպէս Գլխէ Սաղմոսերգուն, Վիթեն զնա անցաւորք

ձևապարհիւ: Սակայն Աստուծոյ ողորմութեամբ, ուսուցիչներու օժանդակութեամբ, Ընծայարանի ուսանողներու գիտակցութեամբ, ժառանգաւորաց վարժարանի աշակերտներու բարեկամեցողութեամբ, մէկ տարուան մէջ հալիւ քարքարուտը կարելի եղաւ մաքրել նման պարտէզի մը:

Բարեկրթութեան կանոններ: — Անհրաժեշտ նկատեցի որոշ ծրագրով մը խօսիլ աշակերտներուն, թէ՛ սեղանատան մէջ և թէ առաւտները դասաւանդութենէն տար վայրկեան առաջ, բարեկրթութեան կանոններու մասին, պահանջելով աւելց գործադրութիւնը:

Սարկաւազաց հաւաքներ: — Սարկաւազներու հետ Ուրբաթ գիշերներ ունեցած ենք շաբաթական հաւաքոյթներ, ուր մէկ կողմէ ծրագրած ենք Շաբաթ գիշերներու դասախօսական և այլ երեկոյթներու յայտագիրները, և միւս կողմէ զբաղած ենք իրենց կրթութեան, կենցաղին և պարտականութիւններուն հետ կապ ունեցող խնդիրներով, և կէսական ժամ՝ տրամադրած՝ օգտակար գիրքի մը ընթերցումին: Ս. Ստեփանոսի տօնակատարութեան առիթով, զեղեցիկ գաղափար ունեցան և նուէրներ տարին հիւանդանոցներու մէջ գտնուող հայ հիւանդներուն:

Շաբաթօրեայ երեկոյթներ: — Կազմակերպուեցան Շաբաթ գիշերներու իմացական կրթանքները: Իւրաքանչիւր երեկոյթին պատասխանատու սարկաւազը պատրաստած է յայտագիրը արտասանութեանց և երգերու, և վարած է օրուան յայտագիրը, մինչ երկրորդ սարկաւազ մը ներկայացուցած է գլխաւոր նիւթը, Այսպէս, յաջորդաբար ներկայացուած են Գեորգ Գ., Մակար Ա. և Նիքոլայ Ե. Աշտարակեցի կաթողիկոսներու շրջանը, և խօսած են «Արեւսի եւ Գիւտի» քան յարեցութիւնը՝ Նիւթի մասին և կազմակերպած են վիճարանական երեկոյթներ, «Երէքէ Եւր» և «Պատիժը անհրաժեշտ է դասխաղալութեան մէջ» նիւթերու շուրջ:

Իսկ դասախօսական երեկոյթներու համար հրաւիրուած են հոգեւորական և աշխարհական անձեր՝ որոնք խօսած են հետեւեալ նիւթերու վրայ:

1. Կամաւոր արարներ եւ անոնց գործնական օրբանակն արժէք (Տ. Շնորհք Եպս.)։ [Վրդ.]։
2. Մեղանշում եւ ապախաղախիւն (Տ. Թորոգոմ)
3. Եօրր մօլութիւններ (Տ. Ներսէս Վրդ.)։
4. Գրական վերլուծում, «Առուի Երբ»՝ Վահան Թէքէեանի (Տ. Զաւէն Վրդ.)։
5. Գրական վերլուծում, «Հայաստանի»՝ Ա. Ե. տիք Իսահակեանի (Տ. Զաւէն Վրդ.)։
6. Հայ նախադասութիւններ (Տ. Կիւրեղ Վրդ.)։
7. Ժառ. Վարժ. պատմական (Տ. Որիս Արդ.)։
8. Խղմնագիր եւ անոր դերը կեանքին մէջ (Տ. Լեւոն Արդ.)։ [Ոհանեան]։
9. Ամերիկեան արդի գրականութիւնը (Վարուժան)
10. Եկեղեցին եւ անոր յսկանքները (Տ. Թորոգոմ Վրդ.)։

Իսկ երկու անգամ խօսած եմ յանդատարատից խօսելու վարժութեան մասին, տեղւոյն վրայ ընտրուած 8-10 աշակերտներու կատարել տալով այդ վարժութիւնը, երկու երեկոյթներու:

ընթացքին, գունաւոր և մոզական լապտերով լուսանկարներ ցոյց տալով Պատարագէն անոն-
ւած գլխաւոր պահերու, բացատրութիւն տուած
եմ Պատարագի խորհուրդին մասին Այս լուսա-
նկարները պատրաստուած են Ամերիկայի Հայց,
Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան
կողմէ: Երկու առիթներով խօսած եմ նաև Առող-
ջապահական գիտելիքներու մասին, նկատի առ-
նելով մեր աշակերտներուն տարբեր և Ֆիզիքա-
կան հասունութեան շրջանը:

Խորմեան Հայրիկի մահուան 50ամեակին ա-
ռիթով կազմակերպուած հրապարակային տոնա-
կատարութեան մէջ ժառանգաւորաց աշակերտ-
ները բերին իրենց մասնակցութիւնը յայտադ-
րին իրագործման մէջ:

Դաւանմանի նուագաձայնիւն: — Այս տարի բա-
րեբախտութիւնը ունեցանք զաշխատութիւն մը ու-
նենալու վարժարանիւ մէջ, նուիրուած եղբայ-
րացոյց զգայուններէն իօժէն Փափաղեանի կողմէ:

1958 Փետրուարու տաղուած այս զաշխա-
տութիւնը սպասարկող եղաւ մեր աշակերտներուն, ու-
րանցմէ 9 հոգի կանոնաւոր դասընթացքի հետե-
ւեցան, և Պր. Վահէ Դաւալանի ջանքերուն
շնորհիւ կազմակերպեցին զաշխատութիւնը: Եւ ապա-
ծութեան առաջին հանդէսը, 21 Յունիս 19: Տիւն:

Իրաւական օգնութիւն: — Բացի Եւրոպա-
կան և եկեղեցական երաժշտութեան դասըն-
թացքներէն, վերջին քանի մը ամիսներէ ի վեր,
չարաթը մէկ գրչեր, աշակերտները մտիկ կ'ընեն
երաժշտական ձայնապնակներ, որոնք կը ներկա-
յացնեն զասական գործերը մեծ ժողովուրդներու
երաժշտութեան:

Մարզանք: — Իմացական կրթութեան բնորոշ
քին մեծ կ'սրբորութիւն ունի մարմնավարութեանը:
Դժբախտաբար սակայն տարուան սկիզբէն
կարելի չեղաւ ունենալ մարզանքի ուսուցիչ մը:
Այս պատճառաւ աշակերտները իրենք կազ-
մակերպեցին իրենց խաղերը, թէև ոչ զօճապու-
ցիչ կերպով, և ունեցան ֆութպոլի, Պասկէթ-
պոլի, Վոլեյպոլի և Ֆիշիկ-ֆութի խաղեր:

Մայիս ամիսէն սկսեալ, Պր. Յակոբ Մէնէշ-
եանը բարի եղաւ չարաթը երեք անգամ վար-
ժեցին մեր տղաքը խմբական խաղերու:

Իսկ 1957 Հոկտեմբեր ամիսէն սկսեալ, ամէն
առաւօտ զարթնումի սովորական ժամանակէն 15
վայրկեան առաջ արթննալով, այսինքն ըստ օր-
ուան ժամը 4:30ին կամ 5ին, ուսանողները կը
կատարեն խմբական մարզանք, իմ մասնակցու-
թեամբ:

Պարզապատկերութիւն: — Փոխ-Տեսչին հակօդու-
թեան ներքեւ, աշակերտները կանոնաւորապէս
մշակած են իրենց խմբային յանձնուած պար-
տէզի ածուները, որոնց ծաղիկներէն փունջեր
կազմած, զարդարած են սրբատեղեաց մեր խո-
րանները:

Նորագութիւն: — Երեսուածական նորոգութեանց
մէջ յիշատակութեան արժանի են Վարժարանի
ցանկապատին նորոգութիւնը և երկրորդ ջրամ-
բարի մը շինութիւնը, քանի որ ջուրի պակասը մեծ
անպատեհութեանց առջև կը դնէ ուսանողու-
թիւնը: Իսկ ննջարաններու մէջ, աշակերտներու
մանկականներուն առջև, սովորապէս կը ծածկու-
նամար, Փէլթութարանի վաճառականներէն Մ.
Դալպեան ընկերութիւնը նուիրեց կանաչաւուն

ընտրութեանը: Աշակերտներուն խաղի զգեստն
ու կօշիկները պահելու համար 30 առանձին դա-
րակներով երկու պահարաններ շինուեցան:

Աղօթքի նամար քննարկել: — Վերջացնելէ
առաջ, աւելորդ չեմ նկատեր խորհրդածութեան
նրաթ հայթայթել հետեւեալ կէտերը: —

1. Ժառ. Վարժարանը արդիւնաւորապէս ծա-
ռայելու համար իր նպատակին, անհրաժեշտ կա-
րիքն ունի նոր շէնքի մը, ուր նկատի առնուած
Ըլլան դասարանի, սերտողութեան, թատերական
և երաժշտական հաս. քայքայութեան համար անհրա-
ժեշտ դիւրութիւնները, նաև բաղնիքի, խաղե-
րու և ննջարաններու համար կարիւր կարգ ու
սարքը:

2. Նոյնչափ կարիւր է սնունդի կանոնաւոր-
ութիւնը աշակերտներուն համար, որոնք առ
հասարակ աճման տարիքի մէջ կ'ընդունուին
Վարժարանէն ներս: Այս տարի փորձը բրինձ,
Տնորէն ժողովի կարգադրութեամբ, նախաձեռնի
մէջ փոքրիկ փութիւնութիւն մը մտցնելու և ընթ-
րիքէն առաջ նա. ապագայի քանակով յաւելու-
ածական սնունդ հայթայթելու:

3. Կարիւր է որ ժառ. Վարժարանը ընդուն-
ուող աշակերտները ընտրուին ուսումնական նոյն
մակարդակ ունեցող վարժարաններէ և զասա-
րաններէ, որպէսզի զաստատուութիւնը անար-
գել Ըլլայ ուսուցիչներու համար:

4. Ժառ. Վարժարանի ուսումնական մակար-
դակը պէտք է բարձրացնել պետական քննու-
թեան մասնակցի կարենալու աստիճանին:

5. Թէև հայկական հաստատութիւններու մէջ
հայկա թէ մասալ գտած, բայց կրթական կարե-
ւոր հաստատութիւններու, մանաւանդ գրչեր-
թիկ զորոյցներու մէջ, մեծ կարեւորութիւն կը
տրուի խորհրդական ուսուցիչի մը ներկայու-
թեան: Երան պաշտօնն է հետաքրքրուիլ իւրա-
քանչիւր աշակերտի կեանքով, առանձնաբար,
զառնալով անոր խորհրդականը, աշակերտին թէ՛
ընկերային խնդիրներուն և թէ՛ անհատական
կենցաղի հարցերուն լուծման մէջ: Տեսուչ և փոխ
տեսուչ, իրի օրէնքի մը և զործադիր անձեր,
անյարմար են խորհրդական Ըլլալու:

Ահա մէկ տարուան համար Տեսչին, փոխ-
տեսչին, ուսուցիչներուն և աշակերտներուն ա-
ռաջագրութիւնը և ձեռք բերած արդիւնքը:
Դիտենք թէ այս արդիւնքը հազիւ երկու սփ կը
լեցնէ: Զայն մենք սիրով նախ կ'ընծայենք Աս-
տուծոյ, ապա մեր սիրելի ազգին և Ս. Յակոբ-
եանց դարաւոր այս Հաստատութեան անձնուէր
Միաբանութեան և Զերդ Ամենապատուութեան,
որպէսզի յանուն Աստուծոյ օրհնէք զայս ժառ.
Վարժարանի և Ընծայարանի բոլոր բնակիչներն
ու մշակները, որոնք վստահ եղէք որ փառակ-
ցութիւնն ունին իրենցմէ սկնկալուածին, և
վճարակալութիւնը՝ յառաջ երթալու և բարձրա-
նալու զէպի սգազաթն արփաւէտ, թէ իսկ ա-
տիկա Ըլլայ կսկածալէն և արիւննէլն:

Տեղեկագրի ընթերցումէն ետք, մարզանքի և
Հայրը բաժնեկց ուսմանց, վարքի, մարզանքի և
պարտիկամականութեան մէջ յաջող սաներուն
մրցանակները, ու իր խրատական-փափման խօս-
քէն ետք հանդէսը փակուեցաւ «Տէր կեցոյ» մաղ-
թերգով և Հայր մերով՝ գրչերուան ժամը 9.30ին:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Թ Ա Գ Ի Բ

Շնորհաւորական հեռագիր՝ Նորին Վեհ. Հիւսիսեան Թագաւորի գահակալութեան շարժի առթիւ:

Ձեր Գահակալութեան բարեբաւոյնի սուրբ պատգամը առ իրով, Մենք եւ մեր նամակներ կը նորոգենք մեր նուիրումը Հաւիտական Գահին եւ կ'աղօթենք Ամենակալ Աստուծոյ շնորհել Ձեր Վեհափառութեան երկար կեանք, երջանկութիւն եւ վառաւորութիւն:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԱՃՆԱՆ
Պատրիարքութեան Փոխանորդ
Ս. Արքայ Նուստապի
միասնաբար ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊՍ.Ի
եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

2 Յուլիսի Դ. օրը կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Ս. Թարգմանչաց վարդապետացն Սանակալ եւ Աթոռալայ հանդիսաւոր նախատեսակը՝ Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Զօր Նախագահութեամբ:

Յաջորդ առաւօտ, Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց, ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց վարժարանի Տեսուչը՝ Զոգ. Տ. Կիւրեղ վրդ. և քարոզիչ՝ ընտրեալ ունենալով օրուան շարականէն «Սքանչելագործ Աստուած...» ու ծանրանալով Թարգմանիչներուն կատարած մեր ժողովուրդի գոյատեւան համար գերազանցօրէն էական գործին ու անոր շարժառիթներուն վրայ՝ Ս. Պատարագի ընթացքին, վարժարանի ամբողջ աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

6 Յուլիսի Կիրակին, Գիւտ Տիմոյ Ս. Աստուածածնի տօնին առթիւ, Գեր. Տ. Շնորհք Եպիսկ. Գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր մեկնեցան Գերթեմանի ձորը, ուր Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Կոստի զերեզմանին վրայ մատուցուցաւ Ս. Պատարագ. Պատարագից Զոգ. Տ. Յովսէփ վրդ. և քարոզիչ Գեր. Հանդիսապետ Սրբազանը, մեկնելով իմաստօր օրուան տօնին և ընելով պատմականը Ս. Կոստի տուփին գլխին: Ըստ թէ ամէն գիւտ ուրախութիւն մը կ'ենթադրէ: Սակայն մենք ընդունակ ենք կորսնցնելու ո՛չ միայն մեր Նիւթական հարստութիւններն ու արժէքները, այլև հոգեկան շնորհները, որոնց

վերագուման համար պարտինք աշխատանք առնել: Ու մեծ է ուրախութիւնը՝ որ այս վերջին պարագային Աստուած ու երկնային զուարթունքները կ'ունենան, յաւնդի այդ շնորհներուն առիւն է Նոյնինքն Տէրը:

12 Յուլիսի Ծառաթ օրը, երկստան առաւելոյ տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերամատարան մէջ:

13 Յուլիսի Կիրակին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերամատարան մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Զոգ. Տ. Կիւրեղ վրդ. քարոզիչ, Նիւթ ունենալով օրուան ճաշու Աւետարանին ընթերցուածը — հացերու բազմացման հրաշքը:

18 Յուլիս, Ուրբաթ կէսօրէ ետք, Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածնի մատարան մէջ պաշտօնեցաւ յաջորդ օրուան նախատեսակը:

Յաջորդ օր, Յիւստակ Տապանակին տօնին առթիւ, Նոյն մատարան մէջ մատուցուցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Զոգ. Տ. Հայկասեր վրդ.:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Այլակերպութեան մեծահաղէս նախատեսակը, Նախագահութեամբ Ամեն. ընտրեալ Սրբ. Պատրիարք Զօր. Ապա Միաբանութիւնը «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

— Ամեն. Սրբազանը իրեկնադէմին նախագահեց նաև Մայր Տաճարին մէջ պաշտուած «Հակման» արարողութեան:

Կիրակի, 20 Յուլիս, Վարդապետի տօնին առթիւ, Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և քարոզիչ օրուան տօնին շուրջ՝ Ս. Պատարագէն ետք, «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռայ շարականը երգելով Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարանի գահիճը, ուր Ամեն. Ս. Հայրը իր օրհնութիւնէն ետք ընդհանրապէս իրեկնադէմին մէջական Ս. Պատարագի նշխար:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդառառանքին Նախագահեց Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանն:

Բշ. Յուլիս 21ին, Յիւստակ մեռելոցի առթիւ Ս. Գլխաւորի մատարան մէջ պատարագից Զոգ. Տ. Ներսէս վրդ. և Ապա, Ամեն. ընտրեալ Ս. Պարք. Հայրը Նախագահեց Մայր Տաճարին մէջ և գահիճը՝ Երանշնորհ Տ. Կիւրեղ Պարք. Զօր շիրմին վրայ կատարուած հոգեհանգստեան կարգերուն, օրոշմէ ետք, Գեր. Տ. Շնորհք Եպս. Գլխաւորութեամբ, թափօրը մեկնեցաւ Հին Կրատան ու Զամ Թաղի առժմ. գերեզմանավայրերը, աղիկս կատարելու համար Նոյն արարողութիւնները:

Եր. 26 Յուլիս. — Ս. Թաղէսի առաւելոյն եւ Սանդիսոյ կուսին: Երեկ՝ Նախատեսակը, այսօր առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ Մայր Տաճարին մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխաւոր. Պատարագից Տ. Վաղգէն վրդ.:

27 Յուլիսի Կիրակին, Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերամատարան մէջ:

3 Օգոստոսի կիրակին, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Թորգոմ վրդ. և քարոզից Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը, խօսելով երէկուայ տօնին — Ս. Որդոց եւ բոլանցն Ս. Գրիգորի Լուսաւորչին — հինգ հայրապետներու մեր նկերդեցին մէջ կատարած էական և յատկանշական զործունէութեան մասին: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. ի նախագահութեամբ կատարուեցաւ «Թաղողօրհնէք»:

Կիր. 10 Օգոստոսին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասերն մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին Գեր. Տ. Շնորհք Եպս. քարոզեց: Բնարան ունենալով «Մի՛ օտար ուսմունքս լինելու», յորդորելով ներկաները որ հաստատ կենան իրենց հաւատքին մէջ ու շխափուին քրիստոնէական բարոյականին խորթ վարդապետութիւններէ և կեղծ ու անման ազգասիրական քարոզչութիւններէ:

Կիր. 17 Օգոստոսին սկսան Ս. Աստուածածնայ վերափոխման տօներ կանխող ամենօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագները՝ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ ի Գեթսեմանի, Այսօր ամբողջ Միաբանութիւնը իջաւ Գեթսեմանի, և քարոզեց Գեր. Տ. Շնորհք Եպս., բնարան ունենալով «Եթէ ոք ընտանեաց իւրոց խնամօ ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է և չար քան զանհաւատն է»: Յորդորեց ծնողքները որ հոգածու ըլլան նաև իրենց զաւակաց բարոյական դաստիարակութեան, ֆիզիքականի կողքին:

24 Օգոստոսի կիրակին, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասերն մէջ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Ուր. 4 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց անկախութեան 182րդ տարեդարձի տոթով, Ամերիկեան Հիւպատոսարանի կողմէ տարբուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը, Գեր. Տ. Տ. Սուրէն և Շնորհք եպիսկոպոսներ, Հոգ. Տ. Թորգոմ վրդ. և Տիար Կարպիս Հինգլեան:

● Կիր. 20 Յուլիս. — Արար Միացեալ Պետութեան Թագաւոր Ն. Վ. Ֆէյսալ Բ. ի մահուան առթիւ, Յորդանանի մէջ շարաթ մը ամբողջ սուգ յայտարարուեցաւ:

● Բշ. 21 Յուլիս. — Այս առթիւ Գեր. Տ. Սուրէն Եպս., Հոգ. Տ. Վաղգէն վրդ. և Տիար Կարպիս Հինգլեան գացին Ամման՝ և արձանագրեցին իրենց անունները Արքունի Պալատի տնօրին մէջ:

● Բշ. 28 Յուլիս. — Կէսօրէ վերջ ժամը 4ին, Ս. Ռախիս Միաբաններէն Հոգ. Տ. Զաւէն վրդ. Զինչինեան օղային զծով մեկնեցաւ իր Նոր պաշտօնատեղին՝ Աղեքսանդրիա, իբրև Առաջնորդական Փոխանորդ:

— Նոյն օրը, Ս. Ռախիս Միաբաններէն Հոգ. Տ. Գէորգ վրդ. Նազարեան օղային զծով մեկնեցաւ Պարկաստան՝ իր ծնողաց օտար զաւակներէ:

● Նշ. 31 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահ Ն. Վ. Այզընհաւերի անձնական ներկայացուցիչ Տիար Ռոպըրթ Մըրֆի, Ս. Բաղաքս այցելութեան առթիւ այցելեց նաև Ս. Յարութեան Տաճար ուր զիմաստրուեցաւ երեք Պատրիարքարաններու ներկայացուցիչներուն կողմէ:

● Ուր. 1 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Բաղաքիս Պելճիքական Նորընտիր Հիւպատոսը իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս:

● Նք. 3 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան և Տիար Կարպիս Հինգլեան փոխ այցելութեան գացին Պելճիքական Նորընտիր Հիւպատոսին:

● Բշ. 11 Օգոստ. — Ն. Վ. Հիւսէյն Թաղաւարի Դահակաթեման Ըրդ տարեդարձի առթիւ, Պատր. Փոխ. Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգ. Տ. Վաղգէն վրդ. ի և Տիար Կարպիս Հինգլեանի, մեկնեցաւ Ամման, և ներկայանալով Արքունի Պալատ՝ ստորագրեց այցելութեան տնօրին մէջ:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Յուլիս և Օգոստոս ամիսներու ընթացքին, Ս. Աթոռոյ Պատ. Տնօրէն Ժողովի որոշումով կատարուեցան հետևեալ պաշտօններու նշանակումները:

1) Ս. Աստուածածնայ տաճարի ամենօրեայ Ս. Պատարագները վերսկսած ըլլալով, Ս. Տաճարիս տաճամեայ տեղուց նշանակուեցաւ Հոգ. Տ. Հայկաբեր վրդ. Պայրամեան:

2) Հոգ. Տ. Զաւէն վրդ. Զինչինեանի Աղեքսանդրիա մեկնումով, իր տեղ Տպարանի տեղուց նշանակուեցաւ Հոգ. Տ. Ներսիս վրդ. Բապունեան:

3) Դարձեալ Հոգ. Տ. Զաւէն վրդ. ի տեղ, Գանձատան Յանձնախումբի անդամ նշանակուեցաւ Հոգ. Տ. Կորիւն վրդ. Մանուէլեան:

4) Հայֆայի հովուութիւնը Հոգ. Տ. Շահան վրդ. Սովմեանի Կ. Պոլիս մեկնումով Թափուր կը մտար աւելի քան տարիէ մը ի վեր: Սոյն պաշտօնին նշանակուեցաւ Հոգ. Տ. Օհան Արդ. Գապուգեան, որ իր պաշտօնատեղին մեկնեցաւ Օգոստոս 19ին:

5) Ամմանի տաճամեայ հովիւը, Հոգ. Տ. Անուշտան վրդ. Զոգսանեան Ս. Աթոռ կանչուած ըլլալով, իր տեղ Ամմանի եւ շրջակայից տաճամեայ հովիւ նշանակուեցաւ Հոգ. Տ. Արիս Արդ. Շիրվանեան, որ իր պաշտօնատեղին պիտի մեկնի ի մօտոյ:

6) Հոգ. Տ. Արիս Արեղայի տեղ զաւակնակիր նշանակուեցաւ Հոգ. Տ. Դաւիթ Արդ. Մանուէլեան, որ կը վարէ միաժամանակ Կիւլպէնեան Մատենադարանի տեղութիւնը որուն կանչուած էր տարուոյս Մարտ ամսուն:

7) Տնօրէն Ժողովոյ անդամներէն երեքին շրջանները լրացուած ըլլալով Միաբ. Ընդհ. Ժողովը վերընտրեց Տ. Հայկաբեր եւ Տ. Թորգոմ վարդապետները, եւ ընտրեց Տ. Վաղգէն վրդ. Գրպրոյեանը իրրեւ անգամ Տնօրէն Ժողովոյ:

Սիւն կը շնորհաւորէ վերոյիշեալ Հայրերը եւ կարողութիւն ու արդիւնաւոր զործունէութիւն կը մտղթէ իրենց նոր պաշտօնին մէջ:

**«ԱՌՈՆ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄՍՏԵՆԱԳԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՍԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵԻԵԱԼ,
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

- Բեժ Եղեռնի Նահասակ Հայ Բժիշկները - Տաթ. Գ. Մ. Կարոյան (նուիրատու),
Հեռասխալ (Թարերդթ. 1 Արար) - Եր. Օտեան և Միք. Կիրճեան, Հրատ. և Նուէր
Ալ-Օսոն - (Արարերէն զրքոյկ մը): [Կ. Տօնիկեան Գրատան, Պէյրութ,
Նոր Գիւր - Հրատ. Գրատէր Երիտ. Միութ., Դամասկոս, Նուէր Հէլէն Տ. Ստեփանեանէ,
Ազգային Բացառիկ - Նուիրուած Հայ Ուսանողութեան, Հրատ. և Նուէր Հ. Թ. Գ. Զա-
ւարեան Ուսանողական Միութեան:
- Գիւր Առակաց - Կարապետ Ա. Քչ. Գալֆայեան, Նուէր Միշրան Մ. Սէֆէրեանէ,
Հայուն Տարեցոյցը - (1958, Թ. Տարի), Վարդան Քչ. Ժամկոչեան (նուիրատու),
La Passion de la Cilicie - (1912-1922). Paul de Véou. Նուէր Հ. Բ. Ը. Մի. Փարիզի
Մասնաճիւղէն: [(նուիրատու), Պ. Այրէս,
- Համես Տաւր մը Հայ Նկարչական Արուեստի Դամաւրանին - Պաղատասար Այվազեան
Միջոցները (Գրական Տարեգիրք) - Ա. Տարի (1957), Նուէր Խմբագիր Պողոս Անապեանէ,
Արմենիի Մուսա (Յունարէն) - Վ. Լօթէյ, Նուէր «Ազատ Օր»էն, Սթէնք:
- Treasure Island - R. L. Stevenson. Նուէր Վ. Չ. է:
Երեսնան Երկեր (Քերթուածներ) - Յակոբ Գուլումեան (նուիրատու),
Վեր. Աւետիս Ս. Տարագեան կը նուիրէ. — [Հատոր:
- ա) Համապատասխան Յոգսկ Նոր Կտակարանի - Ա. և Բ. Մաս: ք) Թաւերգիրք - Բ.
Նիկերիս եւ Նիկերանայ Դալուրը - Սուրէն Ա. Տաւրեան (նուիրատու),
Ազգի Կոնցեր - Ներսէս Արդ. Բապուճեան (նուիրատու): (Բազմազգուած):
Մալկեփունը Բարոյալից Պատմութեան - Զ. Պրակ, Նուէր «Նուպար» Գրատունէն:
Յուսկական Էտոն Գիւրդեանի (Երաժշտագէտ և Խմբագիր), Հայկ Աճէմեան (նուիրատու):
Առակներ - Արշաւիր Դարբին, Հրատ. և Նուէր «Արամազդ»էն:
Histoire de l'Arménie et du Peuple Arménien - H. Thorossian (նուիրատու):
Յեղափոխական Ազգութիւն - (Բ. Շարք, Թիւ 8, 9 և 10), Հրատ. և Նուէր Աւոյի:
Միջնադարեան Հայ Կուսակցութեան - Արամ Երեմեան, Նուէր Ս. Աթոռոյ Տպարանէն:
Օրացոյց (1958) - «Անանիս»:
Օրացոյց (1958) - Վիեննայի Միութեան Տպարանին:
Հայերգութիւն եւ Հասցեան - Վահան Թէքէեան, Հրատ. և Նուէր «Էդմունտ»էն:
Բէքիւնի Ազգային Մատենադարանէն ստացանք 3 Անգլիերէն գիրքեր:
Ո՞ր կը նուիրէ 5 Անգլիերէն գիրքեր:
Թակ - Պերճ Կարո (նուիրատու):
Բարոյալից Պատմութեան - Հայացոյց Ս. Աճէմեան, Նուէր Կիլիկիոյ Կիլդ. Տպարանէն:
Հայ Ազգային Բուժարան - (Ազգային), Տարեկան Տեղեկագիր 1957 Տարեշրջանին:
Վերապատուելի Ստուգել Մեկնեան - (Հոգիւ և Դատարարակ), Հրատ. Երուանդ և Էլիզ
Քիւլիս քաններու, Նուէր Գրիտ. Զանից Գրատենեանէն:
Համա-Վասպուրականի Հայրենակցական Միութիւնը կը նուիրէ. —
ա) Վասպուրականը եւ իր Տարագիր Զաւակները: ք) Ոմեկայն Հայոց Հայրիկ:
գ) Յիշատակարան Նուիրուած 1896ի եւ 1915ի Վասպուրականի Հեռաստաւարիկներուն:
High Hope for a Perfect Language - Ruby Pao Wah Lee (donor).
Bibliography of German Translations (In German) - Section I. Scientific Literature.
Le Christianisme - D. N. Calfayan (donor).
Կարապետ Սիսակ - Կեանքն ու Ստեղծագործութիւնը, Հրատ. Ամերիկահայ Գաղափար-
ական Միութեան, Նուէր «Երաբեր»էն:
Արեւմտայ եւ Առաջ - Կ. Սիսակ, Նուէր ըստ նախորդին:
Տեւ, Զի Բացցին Այլ Մեր - Գ. Թ. Զազմագեան (նուիրատու):
Commission on Faith and Order - World Council of Churches.
(Շարունակիլի)